ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ



INSTITUT FÜR ARMENISCHE FRAGEN • ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

2183

ԿԱԶՄԵՑ ԵՒ ԾԱՆՕԹԱԴՐԵՑ

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՁԱՅՆԵՐ

ԿԱԶՄԵՑ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐԵՑ
Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՋԱՅՆԵՐ

(ՎԱԽԵՐԱԳՐԱԿԱՆ ՆԻԽԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

INSTITUT FÜR ARMENISCHE FRAGEN
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ISBN 3-922053-02-5

1. Auflage 1978
© 1978 Oganessian-Verlag München
Herausgeber: Institut für armenische Fragen e.V. München
Umschlag: Erentraut Waldau-Hauchler, Ismaning
Printed in Italy

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Խորհրդային Միութեան սահմաններում ապրող ժողովուրդների կեանքով ու պատմութեամբ հետաքրքրուող օտարազգի մասնագէտները, առիթը ներկայանալու դէպքում, նաեւ այսպիսի հարց են տալիս, թէ արդեօք Հայաստանում «ինքնահրատարակչութիւն» («Սամիզդատ») եղել կամ կա՞յ: Հարցը միանգամայն օրինական է: Բայց միշտ չէ որ հնարաւոր է պատշաճ ու սպառիչ պատասխան ձեւակերպել: Որովհետեւ Ռուսաստանում իրերի բերմամբ ըստեղծած ու այնուհետեւ ծաւալուած «ինքնահրատարակչական» շարժումն ինքը որոշակի անմիջական պայմանների արդիւնք է, ունի իր մեխական պատմութիւնն ու զարգացման հանգրուանները, որոնք միշտ եւ լիովին չեն համընկնում հայաստանեան մանաւանդ տեղական պայմաններից բխող իրողութիւններին: Միաժամանակ չենք էլ կարող անտեսել տարբեր վայրերի անջատ եւ յատկութիւնների ընթացքը տուող պատմա-հասարակական մթնոլորտի ընդհանրութիւնները:

«Ինքնահրատարակչութիւնը», ինքնին վերցրած, դադարութիւն ունեցող պետական միջամտութեան ճնշողական քաղաքականութեանը անպայման հակադրելու իրատարակ եղանակ է: Քանի որ խորհրդային երկրի միակուսակցական իշխանութեան այլամերժ ոգին տիրում է նաեւ ու մանաւանդ երկրի հրատարակչական կեանքում, որի հետեւանքով մենաշնորհ են վայելում միայն «պետականը» կոչուող հրատարակչութիւնները, բնակչութեան իրաւազուրկ կամ յատուկ արտօնեալ խաւերը չունեն ինքնագործունէութեան ճանապարհով բաւարարել իրենց հոգեմտաւոր

պահանջմունքները, համապատասխան ուղիներ մշակելով, դոնէ ձեռագրի ու մեքենագրի նիւթեր չարտադրելով ու տարածելով:

Այդպէս է որ աւելի քան տասը տարի առաջ ձեւաւորուեց ու ապա աստիճանաբար ծաւալուեց ռուսական, ուկրաինական, հրէական, մերձբալթեան, վրացական ինքնահրատարակչական չարժումը: Նոյն ժամանակաշրջանում ըստ էութեան նոյնպիսի երեւոյթ նկատուեց եւ Հայաստանում, որտեղ սովորութիւն դարձաւ յատուկ բովանդակութիւն ու նշանակութիւն ունեցող գրական-հասարակական վիճաստաթղթերը բազմացնելն ու տարածելը, որի արձագանքները հասան մինչեւ արտասահման: Բայց եթէ խորհրդային այլ՝ մանաւանդ կենտրոնական վայրերում մշակուած ինքնահրատարակչական գրականութիւնը սկզբից եսեթ լայն արձագանք գտաւ ղրեթէ ամբողջ աշխարհում, յամենայն դէպս՝ այդ գործով առանձնապէս հետաքրքրուող շրջանակներում, հայկականը մնաց սոսկ հայկական տլորտում եւ աշխարհին համարեա անծանօթ: Այդ խորհրդութեան պատճառներից արժէ նշել դէթ վերջուսը:

Նախ՝ ինքնահրատարակչական նիւթերը յուսալի միջոցներով խորհրդային սահմանները դուրս հանող անձանց շրջանակների հետ կապերի բացակայութիւնը: Հայկական ձայնը աշխարհին հասցնելու համար, ի հարկէ, անհրաժեշտ է նախ անպայման ճանաչել հայութիւնն այդ աշխարհին կապող կազմակերպական ճանապարհները: Պէտք է ասել, որ, դոնէ մինչեւ վերջ, այդ ճանապարհներից հայութիւնը համարեա չէր օգտուում: Ապա, կայ նաեւ խընդրի միւս կողմը՝ հայաստանեան ինքնահրատարակչական նիւթերի ինքնայատուկ բովանդակութիւնը: Այդ նիւթերի մէջ արտացոլուում է բացառապէս հայկական ազգային-ինքնապաշտպանական մտահոգութիւնը, երբեք շեշտ չի դրուում ընդհանուր զաղափարական-քաղաքական հարցերի ու մանաւանդ «մարդու իրաւունքների պաշտպանութեան» վրայ, ինչ որ համեմատաբար պակաս հետաքրքրութեան է արժանանում աղբերի կեանքը մխակողմանի դիրքերից տեսնող ու գնահատող օտար մարդկանց մօտ: Ահա թէ ինչու նոյնիսկ արտասահման հասած հայկական նիւթերը մեծ մասամբ անարձագանք մնացին միջազգային տտումով: Այժմ, երբ առհասարակ գնալով աճում է հետաքրքրութիւնը ամէն կարգի

ինքնահրատարակչական նիւթերի նկատմամբ, աստիճանաբար լուծելով պատճառ տեղն են գտնում եւ հայաստանեան նիւթերը, առնուազն արխիւային ու գիտական հաստատութիւնների գործունէութեան մէջ:

Մտրտրդային երկրում տարիների ընթացքում ստեղծուած ինքնահրատարակչական գրականութիւնը այժմ այնպիսի հսկայական չափերի է հասնում, որ արդէն իսկ այդ ամէնը գիտականօրէն ուսումնասիրելու, դրա պատմութիւնը գրելու հիմնաւոր փորձեր են կատարւում: Այսինքն, կեանքի ընթացքում տարերայնօրէն մշակուած ու գանազան միջոցներով տարածուած ինքնահրատարակչական գրական ժառանգութիւնը հասկանալու եւ գնահատելու, նրա պատմական ընթացքը հետազօտելու անհրաժեշտութիւն է զգացւում: Ու թէեւ բուն «ինքնահրատարակչութիւն» արտայայտութիւնը լայնօրէն յայտնի է սոսկ 1966 թուականից ի վեր, շատերն են համոզուած, որ թէ տուեալ արտայայտութիւնը եւ թէ ինքնահրատարակչական երեւոյթն ինքը աւելի վաղ է դրսեւորուել:

Համաշխարհային պատմութիւնն ուսումնասիրողները, անտարակոյս, բաւական շատ վկայութիւններ կը գտնեն, որոնք ցոյց կտան, որ այս կամ այն ժամանակ մարդիկ իրենց քանաստղծ ու գրաստղ աւելին արտայայտելու համար յաճախ հարկադրաբար գանազան կողմնակի միջոցների են դիմել, երբ պաշտօնապէս թոյլատրելի հնարաւորութիւնները բացակայել են: Նման կացութիւններ չէին կարող չլինել, քանի որ այլամերժ ու խիստ իշխանութիւններ կամ իշխանաւորներ միշտ էլ եղել են: Հին ու նոր այլամերժների տարբերութիւնը նրանց ճնշողական հնարաւորութիւնների մէջ է, մեծիւական «պետական ապարատի» բնոյթի ու զօրութեան, այլ ոչ թէ նրանց ճնշողական կամքի: Ըստ այդմ էլ տարբեր են մեծնաչնորհի դէմ ուղղուած հին ու նոր ինքնահրատարակչական ճիգերը, գործադրած միջոցները եւ այլն:

Ռուսաստանի պատմութեան մէջ ինքնահրատարակչական տարրը է նկատւում, օրինակ, «առաջին տղնուական յեղափոխական» Ալեքսանդր Ռադիշչեւի (1749–1802) գործունէութեան մէջ, երբ նրա սեփական տպարանում եւ անստորագիր տպուեց իր իսկ «Ճանապարհորդութիւն Պետերբուրգից Մոսկուա» (1790 թ.) նշանա-

ւոր դիրքը ու ապա հասարակութեան մէջ արտօրէն տարածուեց զանազան արտադրումներուն չնորհիւ: Ա.նուհետեւ, ռուսաստանեան կեանքի աստիճանական ու համեմատական աղատականացմանը զուգընթաց, նուաղեց եւ ինքնահրատարակչական միջոցներուն դիմելու անհրաժեշտութիւնը, 1917 թ. հոկտեմբերեան յեղափոխութիւնից ու կոմունիստական միահեծան իշխանութիւնն հաստատուելուց յետոյ վերստին երեւան գալու համար: Ա.յսպէս, 1920ական ու 30ական թուականներին անհատական արտադրումներու ճանապարհով գրքանատութեան մէջ էին դրուում Միխայիլ Բուլգակովի թատերգութիւնները ու Դանիիլ Խարմսի եւ Ա.լեքսանդր Վեդենսկու չափածոյ երկերը: Ա.յժմ չատերն են վկայում, որ ինքնահրատարակչական ընոյթ կրող մարդկային հաղորդակցութիւններ էին ընում նոյնիսկ յետպատերազմեան ահեղ տարիներին:

Բայց Ռուսաստանում այօրուայ իմաստով ու տարողութեամբ ինքնահրատարակչութիւնը ծեւաւորուեց հիմնականում 1959 թուականին, երբ Մոսկուայում եւ այլուր սկսեցին լոյս տեսնել մի շարք գրական–հասարակական պարբերականներ («Ա.ինտաւիս», «Բումերանգ», «Ֆենիկս»), երիտասարդ ուսանողների նախաձեռնութեամբ ու կամաւոր ինքնագործունէութեան կարգով: Շարժումը արագօրէն ծաւալուեց եւ հասարակութեան մէջ այդ նոր ճանապարհով տարածուեցին աւագ ու կրտսեր բազմաթիւ բանաստեղծների եւ արձակագիրների երկերը, ինչպէս եւ պատմա–հրապարակախօսական ու գիտական հետազօտութիւններ, զանազան դատավարութիւնների արձագրութիւնները, անհատական կամ հաւաքական բողոքի կոչերը, պաշտօնական տեւաններին ուղղուած դիմումների պատճէններ եւ այլն: Ինքնահրատարակչութիւնը ներխորհրդային կեանքի վրողութիւնից վերածուեց համաշխարհային արձագանքների վրողութեան: Հենց խորհրդային քաղաքացիների պատրաստած վաստաթղթերի չնորհիւ աշխարհն աւելի անմիջականօրէն իմացաւ, թէ իրականում ինչ է կատարուում խորհրդային երկրում եւ ինչ է ներկայացնում իրենից խորհրդային վրականութիւնը: Փաստաթղթերը ընդհանրապէս տարածուել ու տարածւում են տարերայնօրէն, մերթ հեղինակների ցանկութեամբ, բայց աւելի մեծ չափով՝ առանց նրանց մասնակցութեան ու նոյնիսկ դի–

տութեան: Այս կամ այն անհատից բխող կամ նրա հետ կապուած որեէ փաստաթղթային նիւթ վաղ թէ ուշ դառնում է այն հասարակայնութեան սեփականութիւն, որին առհասարակ մատչելի ու հասանելի է ինքնահրատարակչական գրականութիւնը, իր ընթացիկ տեղեկատուական կամ հոդեւոր-իմացական բարձր մակարդակով:

Դառնալով այս կամ այն առիթով յայտնի դարձած իրողութիւններից, Հայաստանում եւս անցեալ ասելի քան 15 տարում ինքնահրատարակչական գործունէութիւնը բաւական բազմազան ու աշխոյժ է եղել: Ժամանակին լոյս է տեսել, օրինակ, «Փարոս» պարբերականը, գրուել ու ցրուել են բազմաթիւ թռուցիկներ, յայտարարութիւններ, ձեռքից-ձեռք փոխանցուել ու արտագրուել են այլեւայլ գրական-հասարակաքաղաքական նիւթեր: Բայց այդ ամէնը, իրրեւ կանոն, մնացել է հայաստանեան շրջանակում եւ իր բուն պատունակութեամբ չի հասել հայ ամբողջ հասարակութեան գիտակցութեան, մանաւանդ արտասահմանում: Այնպէս որ հայաստանեան բուն ինքնահրատարակչական գործի մասին առայժմ անկարելի է ամբողջական խօսք ասել:

Դրա փոխարէն, ժամանակ առ ժամանակ արտասահմանեան հայ մամուլի էջերում հրապարակուել են զանազան ազգայնից տեսակէտից կարեւոր փաստաթղթեր, որոնք կփոխվին կարելի է ինքնահրատարակչական համարել: Բանն այն է, որ այդ փաստաթղթերը մեծ մասամբ չեն ստեղծուել յատկապէս տարածուելու համար, այլ գրուել եւ ուղղուել են համապատասխան պաշտօնական ատեաններին՝ միանգամայն պարզ ու գործնական նպատակով: Բայց քանի որ դրանք չեն հրապարակուել խորհրդային մամուլում եւ ճիշտ դրա համար էլ կողմնակի մարդկանց ջանքերով արտասահման են հասցուել հրապարակուելու համար, ինքնաբերաբար դառնում են ինքնահրատարակչական նիւթ, անկախ իրենց բովանդակութիւնից, հեղինակների անձից ու դիտաւորութիւններից: Եւ մեզ համար կարեւորը դրանց ձեւականօրէն ինքնահրատարակչական լինել կամ չլինելը չէ, այլ պատմական ու ազգային անփոխարինելի նշանակութիւնը, հայրենական վաւերական ճայներ լինելու պարագան:

Տարիներ առաջ արտասահմանեան հայ մամուլի էջերում հրապարակուած յիշեալ փաստաթղթային նիւթերի պատմական ու ազգային նշանակութիւնն էլ հիմք է տալիս, որպէսզի դրանք վերջապէս ամփոփուեն մի ամբողջական դրքի մէջ, ժամանակագրական կարգով ու համապատասխան լրացուցիչ տեղեկութիւններով ուղեկցութեամբ: Թերթերում ցրուած լինելու եւ մի ամբողջական հատորում ամփոփուելու տարբերութիւնը հասկանալի է ինքնին: Հասկանալի է նաեւ, որ մեծ վերջին պարագայում կարող են տրամադրելի փաստաթղթերը իրենց իսկական կոչմանը արդիւնաւէտ կերպով ծառայել եւ համեմատական ծանօթութեան կամ հետազօտութեան աղբիւր դառնալ հայ նորահաս սերունդների համար:

Այս ժողովածուում դետեղուող նիւթերը հիմնականում լոյս են տեսել արտասահմանեան հայ ազգային մամուլում: Կան նաեւ որոշ, առայժմ լոյս չտեսած նիւթեր: Վերջին տեսակի նիւթերն, ի հարկէ, մեծ արժէք չեն ներկայացնում, բայց տուեալ դէպքում նախընտրելի է դրանցից մեծն ընտրել սոյն դրքի համար՝ իրրեւ լրացուցիչ յատկանշական նմոյշներ: Անկախ ճեւական հանդամանքներից, ընդհանրապէս նկատելի է, որ այստեղ կողքկողքի ներկայացուող նիւթերում ըստ էութեան մի բաւական ուռոշակի խնդիր է արծարծւում եւ բոլորն էլ վիճաստային աղդակցութիւն ունեն: Ամենուրեք քննութեան են առնւում հայութեան հաւաքական ճակատագրի հետ կապուած հանգուցային հարցեր, նոյն հայրենական պիրքերից:

Ոչ ժամանակին մամուլում տպուելու դէպքում եւ ոչ էլ հիմա դաղտնիք չէ նիւթերի մի մասի հեղինակների ինքնութիւնը: Եթէ կան եւ «անանուն» հեղինակներ, ապա դրանք «անանուն» են միայն մեզ համար, բայց ոչ հեղինակների շրջապատի: Նոյնիսկ «հաւաքական հեղինակների» ինքնութիւնը ճշտման կարիք չունի, քանի որ դրանք ներկայացնում են իրենց ներշնչած ու առնուազն բարոյապէս լիազօրած բազմութիւնների կամքը. եւ այդքանը բաւական է թէ բազմութիւնների եւ թէ նրանց կամքը շարադրող մարդկանց դիմագիծը որոշելու համար:

Արդ, թէ անուանով յայտնի եւ թէ անյայտ հեղինակները ամբողջովին իրենց միջավայրին են պատկանում եւ իրենց մտքերը

ձեւակերպել են այդ միջավայրում ընդունուած ու ըմբռնելի ընկալեալ կանոնների համաձայն: Նրանք, մեծ մասամբ, ապրում եւ դործում են այսպէս ասած բնականոն պայմաններում, միւս քաղաքացիների նման, ճանաչուած ու դնահատուած անձեր են հասարակութեան մէջ: Բայց ունեն նաեւ յանելեալ ասելիքներ, որոնք, ստեղծուած պայմաններում ու վերին իշխանութիւնների տեսակէտից, լայն հրապարակման ենթակայ չեն եւ ուստի լսելի են սոսկ սահմանափակ միջավայրում:

Եթէ այդ «յանելեալ ասելիքները» բաղմութիւնների լսողութեանն ու գիտակցութեանը հասնելու ուղղակի միջոցներից զուրկ են՝ իշխանութիւնների ստեղծած կամայական խոչընդոտների պատճառով, դա բնաւ չի նշանակում, թէ իրաւացին իշխանութիւններն են, իսկ ասելիք ունեցողները՝ մոլորեալներ: Հենց այս դրքում դետեղուած նիւթերի հեղինակները, դրեթէ առանց բացառութեան, իրենց մտքերը չարադրել են խորհրդային երկրում ընդունուած դաղափարախօսութեան եւ դործող օրէնսդրութեան համաձայն: Բայց որովհետեւ այդ երկրում «տեսութեան» ու «պրակտիկայի», «օրէնքի» ու «քաղաքականութեան», «խօսքի» ու «դործի» միջեւ անչափելի հակասութիւն գոյութիւն ունի, ոմանք կարող են, անդիտակցաբար, խրաքանչիւր անկեղծ ու ճշմարիտ խօսք անթոյլատրելի չեղում համարել, իսկ իշխանութիւնների կամայականութիւնները՝ միակ թոյլատրելի չափանիշ: Սակայն հասկացողները գիտեն, թէ որն է օրինական եւ որը ոչ:

Եւ քանի որ դրքում ներկայացուող փաստաթղթերի հեղինակները մտածել ու իրենց մտածումները չարադրել են երկրում ընդունուած չափանիշների համաձայն, ինքնին հասկանալի է դառնում, որ փաստաթղթերի մէջ եւ ոչ մի տեղ հարցականի տակ չի դրւում երկրում գոյութիւն ունեցող քաղաքական վարչակարդը եւ վէճի նիւթ չի դարձւում այդ հարցը: Այս հիմնական պարադան պէտք է հաշուի առնել բոլոր դէպքերում, հասկանալու համար, որ հեղինակները իրենց առաջարկած բարեփոխումների ու չափումների իրադործումը հնարաւոր են համարում հենց յատկապէս գոյութիւն ունեցող վարչակարդի պայմաններում ու չըջանակում, բայց ոչ այլ կերպ:

Բայց բոլոր հեղինակներին անհանդուրժողականությունը հայության հաւաքական ճակատագրին վնասող ուժերի գոյությունն ու գործունէությունն է: Ահա թէ ինչու բոլոր փաստաթղթերում, այս կամ այն չափով եւ ուղղակի կամ անուղղակի ձեւով, քննարկւում է հայ-թրքական յարաբերութիւնների պատմութիւնը, նրանց այժմեան վիճակն ու հետագայ զարգացման խնդիրը: Ահա թէ ինչու առաջ է քաշւում այդ յարաբերութիւնները վերջապէս արդար հիմունքներով կարգաւորելու պահանջը: Իսկ դրա համար նախ հարկաւոր է հարցի հրապարակային ու անաչառ քննութիւն: Հայ-աղրբեջանական փոխյարաբերութիւնների հարցը եւս, իր հերթին, հայկական ու հայաբնակ երկրամասերի ապօրինի օտարման կապակցութեամբ, ներկայանում է իրրեւ հայ-թրքական յարաբերութիւնների չարաղէտ զարգացման ուղղակի հետեւանք: Փաստաթղթերում մեծ տեղ է բռնում յատկապէս այդ օտարուած երկրամասերի հայութեան ինքնապաշտպանական ջանքերի նկարագրութիւնը, որովհետեւ առաւելապէս այդ ջանքերի յաջողութեամբ է պայմանաւորուած նաեւ հետագայ բոլոր աղգապաշտպանական քայլերի յաջողութիւնը:

Պէտք է այսօր ասել, որ սկզբից եւեթ Հայոց Նորագոյն պատմութեան կենսական հարցերը առարկայական դիրքերից լուսաբանելու ուղղութեամբ թափուած ջանքերը բոլորովին զուր չեն անցել: Շատ ու շատ հարցեր, որոնք, ասենք, 1962 թուականին դեռևս օրակարգի մէջ չէին և բոլորովին դուրս էին գտնւում պաշտօնական պատմագրութեան տեսադաշտից, այսօր արդէն սովորական ու ընթացիկ հրատարակութիւնների նիւթ են դարձել և արդէն լուսաբանւում են քիչ թէ շատ նկատելի գիտական դիրքերից: Իսկ եթէ դեռ կան ուրիշ շատ ու շատ, նոյնպէս «կենսական» հարցեր, որոնք տակաւին «արգելքի տակ են», դա եւս չի նշանակում, թէ սահմանուած «արգելքը» յաւիտենական զօրութիւն ունի: Նշանակում է, որեւէ ժողովրդի, նրա բոլոր խաւերի ու մանաւանդ մտաւորականութեան եւ գիտակից ղեկավարութեան նախաձեռնական ոգուց, գործունէութիւնից ու հետեւողական ջանքերից շատ բան է կախուած: Այսպիսով, միշտ եւ ամենուրեք, իր վաւերականութիւնը պահում է պայքարի ու ինքնապաշտպանութեան սկզբունքը:

Տասնհինգ տարուայ ընթացքում աստիճանական պարզութիւն է մտցուել ոչ միայն Հայոց նորագոյն պատմութեան որոշ բնագաւառներում, այլեւ հենց հասարակութեան կեանքում ու կենցաղում, սահմանադրութիւնների ու այդ սահմանադրութիւնները ամրապընդող միջոցների մէջ: Ծխեռնակաբերդի կոթողը, Սարդարապատի յուշարձանախումբը եւ նման յուշարձանները, ինչպէս յայտնի է, միշտ չէ որ գոյութիւն են ունեցել եւ միշտ չէ որ կարող էին գոյութիւն ունենալ: Ուրեմն, 1960ական թուականների սկզբի համարձակ «մոլորեալների» ջանքերը իրականում այս կամ այն չափով «պտղաւորուել են: Ուրեմն, այդ «մոլորեալներն» էին խօսում հայ ժողովրդի չահերից ու պատմութեան թելադրանքներից ելնելով, այլ ոչ թէ նրանց բերանն ու ճանապարհը փակողները: Համարձակներն անձամբ այս կամ այն չափով տուժել, բայց նրանց պաշտպանած գաղափարները ի վերջոյ չահել են:

Նոյնը կարելի է ասել ընթացիկ հասարակական կեանքի խոչընդոտները յաղթահարելու ասպարէզի մասին: Խօսքը վերաբերում է մանաւանդ հայկական ու հայաբնակ երկրամասերի օտարմանը վերջ տալու խնդրին: Նկատելի է, որ, պատմականօրէն ասած, Լոռվկատեան Հայաստանում այդ ուղղութեամբ մտածողների ու յատկապէս գործողների թիւը ժամանակի ընթացքում աճել, այլ ոչ թէ նուազել է: Թէեւ այս դրոյթը անկարելի է ապացուցել վիճակագրական ճշգրիտ տուեալներով, այդուհանդերձ, բոլոր նշանները ու երեւոյթները վկայում են, որ դա այդպէս է. հայրենական չահերի պիտակցութիւնը դնալով աւելանում է, այլ ոչ թէ պակասում: Այդ համեմատութեամբ էլ աճում է արդար գործի համար մարտնչողների թիւը, մանաւանդ երիտասարդութեան չարքերում: Այս պրքում ներկայացուող փաստաթղթերը ցոյց են տալիս հայրենական ինքնապաշտպանութեան ասպարէզում թափուած անհատական ու հաւաքական ջանքերի մօտաւոր կորագիծը:

Եթէ այստեղ նշւում են յատկապէս վերջին 15 տարիների ընթացքում նկատուած տեղաշարժերը, դա բնաւ նախորդ ժամանակաշրջանների անտեսում չի նշանակում: Ընդհակառակն: Վաթսունական թուականներին համազգային ու հաւաքական կչիռ ունեցող որոշ հարցեր առաջին պլան քաշուեցին, որովհետեւ դրանք

արդէն իսկ պոյուքիւն ունէին եւ լուծում էին պահանջում: Իսկ այդ հարցերը «չէին հնացել», մոռացուքեան չէին տրուել, այլ «պահպանուել» էին, որովհետեւ պոյուքիւն ունէր հայ ժողովուրդն ինքը, իր էթնիկական առողջուքեամբ ու հաւաքական՝ թէկուզ եւ, քչերի վստահուած յիշողուքեամբ, կենսական անելիքների դիտակցուքիւնը ներնդից-սերունդ փոխանցելու կարողուքեամբ: Եւ միայն ընդհանուր, մասամբ նպաստաւոր կարծուող հանգամանքները ի միջի այլոց դրդեցին, որպէսզի վերջապէս մի կողմ հրուեն օրստօրէ ծանրացող լռուքեան կապանքները:

Այս ներածուքեան մէջ, ինչպէս կարելի է տեսնել, մտադրուքիւն չկայ ըստ էուքեան ներկայացնել ու դնահատել ժողովածուում դետեղուող վաւերագրական նիւթերի բովանդակուքիւնն ու նշանակուքիւնը, քանի որ վաւերագրերն ինքնին պերճախօս են եւ մատչելի իւրաքանչիւր ընթերցողի: Այստեղ սոսկ մի քանի ընդհանուր բացատրուքիւններ տրուեցին այն պայմանների մասին, որոնց ծնունդ ու արդասիք են ներկայացուող փաստաթղթերը:

Ներկայացուող փաստաթղթերը մեծ մասամբ հայ ընթերցողի համար բաւէ բուն իմաստով նորուքիւն չեն, քանի որ արդէն տարբեր ժամանակ երեւացել են մամուլի էջերում: Նորուքիւնը միայն սոյն ժողովածուն է, որի մէջ ամփոփուում են իրերի բերմամբ անջատ ու ցրուած նիւթերը՝ մերօրեայ ընթերցողի տրամադրուքեան տակ դրուելու համար: Այսպիսով, ընթերցողը հնարաւորուքիւն ունի մէկ հայեացքով ընդգրկելու վերջին 15 տարիների հայրենական իրականուքեան մի որոշակի բնագաւառ, հայրենական միջավայրից բխած վաւերական ձայների օգնուքեամբ: Հետագայում ուրիշները կարող են ասելին անել եւ ասելի շատ նիւթեր ամփոփել: Բայց առայժմ այս ժողովածուն միակն է իր տեսակի մէջ եւ հանրագումարի է բերում անցած 15 տարիների բանաւոր ու գրաւոր, առաւել ուշադրաւ եւ արտասահմանեան հայ հասարակուքեանը հասած վերլիքների ժառանգուքիւնը:

Փաստաթղթերը ժամանակին տպուել են «ինչպէս որ կան», տրամադրելի պատճէնների հիման վրայ: Բայց տեղ-տեղ ասելացուել են եւ դանազան անխուսափելի տպագրական վրիպակներ:

Այդ, այս ժողովածուի մէջ ևս չի խախտուում փաստաթղթերի բնագիրը եւ դրանք ներկայացուում են «ինչպէս որ կան»: Բայց ամենայն ուշադրութեամբ աչքի են անցկացուել բոլոր նիւթերը եւ հարկ եղած դէպքում չտկուել ակնյայտ վրիպումները, բառերի հաւանական տեղափոխութիւնները ու շարահիւսական անհամաձայնութիւնները, եթէ մի պահ մոռանանք, որ իրենց հերթին ուրիշ ակամայ վրիպակներ կարող են սպրդել եւ սոյն հրատարակութեան մէջ: Իսկ այն դէպքերում, որտեղ ուղղելն անկարելի է, որովհետեւ անվտանգ է հնարաւոր հաւանականութիւններից մէկն ու մէկը ընտրել եւ նոր չփոթութիւն յարուցանել, խօսքը կամ նոյնութեամբ թողնուել կամ էլ որեւէ ձեւով «ընթեռնելի» է դարձուել: Սակայն պէտք է միաժամանակ ասել, որ փաստաթղթերը մեծ մասամբ եւ հիմնականում յստակ ու անխաթար են:

Իւրաքանչիւր փաստաթղթից առաջ տրուում են ծանօթագրական համառօտ տեղեկութիւններ՝ ընդհանուր կողմնորոշման համար: Եւ մանաւանդ նշուում են այն պարբերականները, որտեղ ժամանակին հրապարակուել են նիւթերը: Ի հարկէ, արտասահմանի հայկական բոլոր պարբերականները չեն պահուել մեր տրամադրութեան տակ: Եւ նոյնիսկ ժամանակին տրամադրութեան տակ եղածները ձեռքի տակ լրիւ չեն պահպանուել: Այնպէս որ խօսքը տուեալ դէպքում չի վերաբերում մատենադրական կատարեալ տեղեկութիւնների: Այդուհանդերձ, ուղղակի եւ անուղղակի տուեալները բաւական չատ են ու պերճախօս, որպէսզի իր տեսակի մատենադրական նշումները բաւարար համարուեն եւ ընթերցողին պատկերացում տան փաստաթղթերի հանրային շրջանառութեան մէջ դրուելու վաւերական հանգամանքների մասին: Յամենայն դէպս, ընթերցողի համար ամէնից կարեւորը փաստաթղթերի վաւերական ու ամբողջական բնագրերն են, որոնք եւ ներկայացուում են: Մնացեալը բուն բնագրերը ընթերցողի պիտակցութեան հասցընելու օժանդակ միջոցներ են, որոնք ներկայ պայմաններում չեն կարող սպառիչ ու կատարեալ լինել:

30· 12· 1977 թ· Լ· ՄԿՐՏՉԵԱՆ

Ա.

ՊԱՏՄԱԲԱՆ ՆԻԿՈՂՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՅՕԴՈՒԱԾԸ ԼԵՀԱԿԱՆ «ԿԻԵՐՈՒՆԿԻ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹՈՒՄ

1961 թ· Նոյեմբերի 26ին Վարշաւայում՝ լեհական «ԿԻԵՐՈՒՆ-ԿԻ» («Ուղղութիւն») «յառաջդիմական կաթոլիկական շաբաթաթերթում» լոյս տեսաւ լեհ արեւելագէտ Բոգդան Գենբարսկու «Նամակ իմ վաղեմի թուրք բարեկամիս» վերնագրով ընդարձակ յօդուածը, միանգամայն հայանպաստ դիրքերից: Այդ եւ ուրիշ նիւթեր վկայում են, որ Գենբարսկին յատկապէս հետաքրքրուել է Հայոց պատմութեամբ ու հայ կեանքով եւ անձամբ գտնուել է Խորհրդային Հայաստանում: Նոյն շաբաթաթերթի 1962 թ· յունուարի 14ի համարում տպուեց մի այլ լեհ հեղինակի՝ Հենրիկ Բատովսկու «Նամակ «կիերունկի»ի խմբագրութեան՝ հայկական հարցի եւ թուրքեւխորհրդային սահմանի մասին» յօդուած-արձագանքը, այս անգամ հակառակ՝ հայավնաս դիրքերից: Եւ ահա նոյն թուականի յուլիսի 1ին նոյն շաբաթաթերթում հրապարակուեց հայաստանեան պատմաբան Նիկողոս Կարապետեանի «Ոչ, կը սխալիք, Հենրիկ Բատովսկի» հանգամանալից յօդուածը, որի մէջ մերկացուում եւ դատապարտուում են Բատովսկու սոփեստութիւնները:

Հայ պատմաբան Կարապետեանը իր յօդուածը պատրաստել է ռուսերէն, որը Վարշաւայում թարգմանուել է լեհերէնի: Ապա, լոյս տեսնելուց յետոյ, Փարիզում կամ այլուր թարգմանուել է ֆրանսերէնի, որից էլ՝ արեւմտահայերէնի: Այդ յօդուածը, անմիջական դրդապատճառ ծառայած միւս յօդուածների հետ, ամե-

ինչ լայն արձագանք է ունեցել արտասահմանեան հայ մամուլում, միաժամանակ տպուել տարբեր ուղղութիւն ունեցող թերթերում: Յիշեալ յօդուածները առաջին անգամ տպուել են Բէյրութի «ՆԱՅԻՐԻ» շաբաթաթերթում 1962 թուականի ընթացքում: Կարապետեանի յօդուածը, այնուհետեւ, կարելի է տեսնել նաեւ հետեւեալ թերթերում.– «ԱԶԱՏ ՕՐ» (Աթէնք) – 1963 թ· յունուարի 24 եւ 25, «ԱԼԻՔ» (Թեհրան) – 1963 թ· յունուարի 26, «ՊԱՅՔԱՐ» (Բոստոն) – 1963 թ· մարտի 30 եւ 31, «ՀԱՅՐԵՆԻՔ» (Բոստոն) – 1963 թ·: Այս ժողովածուի համար հիմք է ծառայում «Ազատ Օր»ի օրինակը: Ինչպէս որ ասւում է սոյն ժողովածուի ներածութեան մէջ, ընդունող պարբերականների ցանկը երբեք սպառիչ չէ: Նշւում են միայն նրանք, որոնք կան ձեռքի տակ եւ կամ էլ որոնց մէջ տուեալ նիւթերը հրապարակուելու մասին ճշգրիտ տուեալներ կան:

Պատմաբան Կարապետեանը, իր ուսումնասիրութիւնների մէջ հայրենասիրական ոգի ցուցաբերելու համար, ժամանակին շնորհազրկուել է Հայաստանում՝ օրուայ իշխանութիւնների կողմից: Հրապարակային ժողովներում մեղադրուել է հայ ժողովրդի պատմութեան հարցերի նկատմամբ «դասակարգային մօտեցում» ցուցաբերելու փոխարէն «ազգային մօտեցում» ցուցաբերելու համար: Ինչպէս առաջներում, այնպէս էլ հիմա՝ նրան չի տրւում գործելու ասպարէզ եւ գիտական մամուլի էջերում ապարդիւն կ'անցնի նրա ստորագրութիւնը որոնելը:

ՈՉ, ԿԸ ՍԽԱԼԻՔ, ՀԵՆՐԻԿ ՊԱԹՈՎՍԿԻ

Լեհ յայտնի լրագրող Կենպարսկիի «Նամակ իմ վաղեմի թուրք բարեկամիս» խորագրով յօդուածին («Խրոնիքի», թիւ 47, 1961) եւ Հենրիկ Պաթովսկիի կողմէ այս յօդուածին պատասխանին («Նամակ խմբագրութեան – Հայկական Հարցին եւ թուրքեւխորհրդայինն սահմանին մասին») հրատարակութիւնը մամուլի մէջ, ներկայ քաղաքական կացութեան եւ անոր պատմական պահանջներուն հետեւանքն են:

Իւրաքանչիւր ժողովուրդի համար ազգային անկախութեան տիրանալու իրաւատուբեան ճանաչումը, ինչպէս նաեւ հաւասարուբեան, աղատուբեան եւ անկախուբեան իրաւունքը այժմ դարձած է աշխարհի պետուբիւններուն եւ ժողովուրդներուն բոլոր յարաբերուբեանց հիմնական սկզբունքը: Գաղթաստիրական վարչակարգին տապալումը, Ասիոյ եւ Ափրիկէի մէջ նոր պետուբիւններու կազմուբիւնը, երկու հազար տարուան «դադարէ» մը ետք Իսրայէլի պետուբեան վերստեղծումը, Եւրոպայի մէջ սահմանապծերու փոփոխուբիւնները – այս բոլորը, ըստ մեզի, կ'ընթանան պատմական անհրաժեշտուբեան մխեւնոյն սկզբունքին հիման վրայ:

Այս տեսակէտէն ուսումնասիրելով թուրքեւհայկական յարաբերուբիւնները, Պոլտան Կենպարսկի հարցական կը նկատէ պատմական Հայաստանի հողամասին 90 առ հարիւրին վրայ Թուրքիոյ ունեցած իրաւասուբիւնը եւ կը հաստատէ թէ՝ Թրքական իշխանուբիւնը հոն տեղաւորուեցաւ պարզապէս... ցեղասպանուբեան «իրաւական» հիման վրայ:

Այս սկզբունքէն մեկնելով, Կենպարսկի կ'առաջարկէ այն տեսակէտը թէ՝ միայն Թուրքերն են – եւ ի մասնաւորի՝ Թուրք մտաւորականները – որ պէտք է նախաձեռնարկ ըլլան 1915ին եւ 1918–20ին Թրքական կառավարուբեան կողմէ հայ ժողովուրդին դէմ եւ մխեւնոյն ատեն ամբողջ մարդկուբեան դէմ իրագործուած արիւնալի ոճիրները դատապարտելու գործին. ոճիրներ, որոնց հետեւանքով մէկ միլիոնէ աւելի Հայեր կոտորուեցան եւ աւելի քան մէկուկէս միլիոն ուրիշներ տեղահանուեցան իրենց պապենական հողերէն: Տարագիրները տակաւին մինչեւ այսօր աշխարհացրիւ են եւ չեն դադրիր Թուրքերու կողմէ հրկիզուած ու քանդուած իրենց օճախները վերադառնալ երազելէ, որպէսզի մոխիրներու ընդմէջէն վերականգնեն Հայաստանը – աշխարհի քաղաքակրթուբեան ամէնէն հին կեդրոններէն մին: Թուրքիա պէտք է Հայերուն վերադարձնէ անոնց հողերը, հետեւելով ՄԱԿ-ի եւ Ատլանտեան Ուխտի իր դաշնակիցներուն օրինակին, որոնք ազատուբիւն չնորհեցին իրենց գաղթավայրերուն: Ահա Կենպարսկիի յօդուածին հիմնական դաղափարը:

Առանց համարձակելու բոլորովին խնդրոյ առարկայ դարձնել այս յօդուածին կարեւորութիւնն ու կշիռը, Հենրիկ Պաթուվսկի անհրաժեշտ կը նկատէ որոշ ձեւի «բացատրութիւն» մը և «ճշդում» մը տալու կենպարսկիի յօդուածի մէկ մասին, որ, ըստ Պաթուվսկիի կարծիքին, «կրնայ չփոթութեանց տեղի տալ»: Մասնաւորաբար, խնդրոյ առարկայ է հետեւեալ նախադասութիւնը. «Առանց դնդակ մը իսկ պարպելու՝ ձեղի (Թուրքերուդ) յանձնուեցաւ Ռուսահայաստանի կէսը (Կարսի շրջանը), ինչպէս նաեւ Արարատի ստորոտին տարածուող շրջանը, որ պատմութեան ընթացքին, ոչ մէկ առեն ձեզի պատկանած է»:

Հենրիկ Պաթուվսկիի տուած բացատրութիւններն ու ճշդումները կատարուած են մեր կողմէ ընդգծուած նախադասութեան առընչութեամբ, ու զանոնք կարելի է ամփոփել հետեւեալ ձեւով.— Նախ եւ առաջ, Կարսի շրջանը Թուրքերուն յանձնուեցաւ Խ. Ռուսաստանի կողմէ, «որովհետեւ Թուրքիոյ կը պատկանէր 1878էն առաջ, նախ քան ցարական Ռուսիոյ կողմէ Թուրքերու ձեռքէն խլուիլը»: Երկրորդ՝ ռազմավիտական պատճառներով է, որ Թուրքիա Խ. Ռուսաստանէն պահանջեց Արարատի ստորոտին տարածուող շրջանը: Երրորդ՝ Արտահանի շրջանը Թուրքերուն տրուեցաւ՝ Պաթումը Վրաստանին կցելու փոխարէն: Չորրորդ՝ Նախիջեւանի եւ Ղարաբաղի շրջանները Ատրպէյճանին յանձնուեցան, որովհետեւ Թուրքերը համաձայն չէին զանոնք Հայաստանի ձգելու: Հինգերորդ՝ Խորհրդային Ռուսաստան չկրցաւ մերժել Թուրքիոյ պահանջները, քանի որ այս վերջինը կը սպառնար դրաւել Երեւանի հարաւը տարածուող շրջանը եւ նոյնիսկ՝ Երեւանը, որպէսզի ապահովէ Ատրպէյճանի հետ հողային ուղղակի կապը: Վեցերորդ՝ վերոյիշեալ բոլոր թիւնամի հողամասերն եւ ինչպէս նաեւ ներկայ Հայաստանի կարդ մը շրջանները «իրականութեան մէջ» Թուրքիոյ կը պատկանէին, քանի որ այս հողերուն վրայ ապրող Հայութիւնը ջարդուած էր, եւ աւելի զատ, ըստ Պրեսթ–Լիթովսկի, Պաթումի եւ Աղեքսանդրապոլի հաշտութեան դաշնագիրներուն, Թուրքիոյ պիտի տրուած էին անոնք:

Որպէս եզրակացութիւն, Պաթուվսկիի կը հաստատէ. «Հակառակ անոր որ Խորհ. Հայաստանի սահմանը... զգացական տեսա-

կէտով շատ անհաճոյ է Հայերուն համար, Կարսի եւ Արարատի շրջանին կորուստին պատճառաւ, բայց եւ այնպէս, եթէ նկատի առնուին այն բոլոր պարագաները որոնք ի զօրու էին 1918–1920 տարիներուն, պէտք է այս սահմանը նկատել պատմական անդառնալի անհրաժեշտութեանց արդիւնք» (մէջբերում՝ Պաթուվսկիի դրածէն):

Դիւրաւ կարելի է նշմարել, թէ Պաթուվսկիի «բացատրութիւններն» ու «ճշդումները» կարելի է ամփոփել հետեւեալ ձեւով. «Այն ինչ որ տեղի ունեցած է անցեալին, իր հետեւանքներով, պէտք է նկատուի որպէս պատմական անհրաժեշտութիւն. հետեւաբար չի կրնար վոխոխութեան ենթարկուիլ»:

Պատմութեան եւ մարդկային ընկերութեան զարգացման սկզբունքներու ի՛նչ տարօրինակ ըմբռնում: Գուցէ Պաթուվսկիի չ'անդրադառնար, թէ իր ըրած հաստատումներով որքա՛ն մեծ ծառայութիւն կը մատուցանէ յետադիմութեան եւ չարիքի բոլոր ուժերուն: Ասկէ կը հետեւի, թէ ժողովուրդի մը հողերուն տիրանալու եւ զանոնք թալանի ենթարկելու համար ամբողջ ժողովուրդներ մաքրագործման ենթարկելու քաղաքականութիւնը «պատմական անհրաժեշտութիւն» է, եւ Պրեսթ–Լիթովսկի, Պաթումի (1918) եւ Սեւրեսանդրապոլի (1920) հաշտութեան դաշինքներուն նման համաձայնութիւնները նմանապէս «պատմական անհրաժեշտութիւն» են, որ լաւ թէ «վոխոխութեան չի կրնար ենթարկուիլ»: Ասիկա ուրիշ բան չէ, եթէ ոչ ընդունիլ եւ արդարացնել միջազգային աւազակութիւն մը եւ մարդկութեան դէմ ուղղուած արիւնալի ոճիրները: Միւս կողմէ, ասիկա պարզապէս անտեսումն է պատմական իրաւասութեանց եւ միայն ճանաչումը՝ տիրակալներու եւ ցեղասպաններու իրաւունքին:

Ի՞նչ կը նշանակէ զոր օրինակ ըսել, թէ Ռ. Ռուսիա Թուրքիոյ վերադարձուց Կարսի շրջանը, որովհետեւ այս վերջինը մինչեւ 1878 «կը պատկանէր» Թուրքիոյ: Ասպա ուրեմն, ի՞նչ բան էր որ կը պատկանէր դարերէ ի վեր այդ հողին վրայ ապրած ու աշխատանք թափած ժողովուրդին: Ինչո՞ւ կարելի չըլլար, ենթադրենք, Կարսի եւ հայկական այլ շրջաններ հայ ժողովուրդին վերադարձնել, եթէ կ'ուզուէր վերջապէս սրբագրել ցարականութեան

կողմէ գործուած պատմական անիրաւութիւնը: Անշուշտ, որովհետեւ Խորհ. Ռուսաստան չուզեց խաթարել իր «դաշնակցին» – Թուրքիոյ – հետ ունեցած յարաբերութիւնները: Ապա ուրեմն պատմական պէտք է անմիջապէս ըսէր ասիկա, եւ ոչ թէ ակնարկէր այն իրողութեան, թէ այս չրջաններուն մէջ Թուրքերը չարդեցին հայ ժողովուրդը եւ այսպիսով այս հողամասերուն վրայ ձեռք ձգեցին «պատմական» իրաւունքներ: Որովհետեւ ամէն ոք չատ լաւ գիտէ, թէ այդ տարիներուն Թուրքիա որքան ռակի, թնդանօթ, ծանր գնդացիր, գէնք, փամփուշտ եւ այլ կարգի օգնութիւններ ստացաւ Խորհ. Ռուսաստանէն, արեւելքը դաղթատիրական վարչակարգին ձերբազատելու եւ Եւրոպայի մէջ յեղափոխութեան յաղթանակը ապահովելու համար[1]:

Այս օգնութիւնը ստանալով, Թուրքիա ամէն բանէ առաջ արշաւեց Հայաստանի վրայ, որ նոր հռչակած էր իր անկախութիւնը, քանի որ, ըստ Թուրքերուն, ճիշտ այս անկախ Հայաստանն էր որ պիտի դժուարացնէր Արեւելքի եւ Արեւմուտքի մէջ համաշխարհային յեղափոխութեան յաջողութիւնը, որպէս «համաշխարհային աշխարհակալութեան եւ դրամատիրութեան մարտկոցը», լինչպէս նաեւ որպէս «համաշխարհային հակա–յեղափոխութեան բոյն»: Երեւանի հայկական պետութեան քայքայումը, ըստ Թուրքերուն, «պիտի ապահովէր համաշխարհային յեղափոխութեան յաղթանակը՝ դրամատիրութեան վրայ»: Եւ այսպէս տկսաւ նուաճումի արշաւանքը:

Չկարենալով դիմադրել Գարա–Պեքիր փաշայի «յեղափոխական բանակներուն» յարձակմանց եւ 11րդ Կարմիր բանակի վերջ–

---

1) Յօդուածագիրն այստեղ տողատակի ծանօթագրութեան մէջ յայտնում է, թէ այդ նիւթի չուրջ չատ է գրուել եւ թէ բաւական է կարդալ թէկուզ հենց իր յիշատակած մի քանի նիւթերը: Բայց լեզուից–լեզու անցնելով՝ անուանների տառադարձութիւնը այլափոխուել է: Իրականում խօսքը վերաբերում է Ա. Սկաչկոյի «Հայաստանը եւ Թուրքիան յառաջիկայ խորհրդաժողովի մէջ» յօդուածին («Ազգութիւնների կեանքը» պարբերականի 1921 թուականի մարտի 24ի համարում), Մ. Պ. Պաւլովիչ–Վոլոնտեօրի (Մ. Վոլտմանի) «Յեղափոխական Թուրքիան» գրքին (Մոսկուա, 1922 թ.) եւ Ս. Մ. Կուզնեցովի «Թուրքեւխորհրդային յարաբերութիւնների հաստատումը» գրքոյկին (Մոսկուա, 1961 թ.):

նադիրներուն, «Միջազգային աշխարհակալութեան մարտկոցը» – Մանուկ Հայաստանը – անձնատուր եղաւ: Եւ միջազգային աշխարհակալութիւնը իր մօրուքին մէկ թելն իսկ չկորսնցուց: Ոչ մէկ բախում տեղի ունեցաւ թրքական ուժերու եւ իրական աշխարհակալներու միջեւ:

Շնորհիւ խորհրդային իշխանութեան – հայ ժողովուրդի բախտէն – փոքրիկ Հայաստանը ազատեցաւ բնաջնջումէ, որ իրագործուած էր հայկական հողերու մնացեալ 90 առ հարիւրին վրայ:

Ահա թէ ինչ էր 1918–20 տարիներու դէպքերուն երեւոյթը, որ առեղծեց Պաթումկիի կողմէ «պատմական անխուսափելի անհրաժեշտութիւն» նկատուած գոյավիճակը:

Ի՞նչ էր 1918ի Պրեսթ–Լիթովսկի դաշինքը, որուն կ'ակնարկէ Պաթումկի: Ուրիշ բան չէր, եթէ ոչ թուրքեւգերմանեան նախայարձակներու կողմէ Խորհ. Ռուսիոյ պարտադրուած բռնադատութեանց արարք մը: Սակայն, միթէ նոյն ինքն Խ. Ռուսաստան պահ մը իսկ այս դաշինքը նկատե՞ց «պատմական անխուսափելի անհրաժեշտութիւն»: Ընդհակառակն: Այս դաշինքին վնքուելէն ուէ ամիս միայն աւելի ուշ՝ արդէն չեղեալ նկատեց զայն եւ պատմական ամօթի մուրը սրբուեցաւ:

Եւ ի՞նչ էր հապա Պաթումի «խաղաղութեան» դաշինքը, որուն վրայ Պաթումկի կը հիմնաւորէ Հայաստանի ու Վրաստանի հանդէպ Թուրքիոյ «պատմական» պահանջները: Թրքական նախայարձակման վաղաժամօրէն ծնած զաւակն էր, որ չմկրտուած թաղուեցաւ հաղիւ չորս ամսու նորածին:

Եւ ի՞նչ էր նաեւ Ալեքսանդրապոլի (աւելի ճիշտ դիակային) «խաղաղութեան» դաշնադիրը, եթէ ոչ վաղաժամօրէն ծնած ուրիշ մանուկ մը, որ մեռած ծնաւ եւ որ նոյնիսկ չճանչցուեցաւ իր ծնողքին կողմէ:

Եւ ահա նաեւ 1918–19–20ի բռնութիւնները, որոնց Պաթումկի կը համարձակի տալ միջազգային իրաւասութեան արժէք՝ զանոնք նկատելով «պատմական անհրաժեշտութիւն եւ անխուսափելի իրադարձութիւններ»: Ո՞ր մասնագէտ իրաւաբանն է – միջազգային իրաւաբանութեան մասնագէտը – որ այս «իրադարձութիւնները» բաւարար վաստ պիտի նկատէ՝ հին Հայաստանի հողերուն 90 առ

հարիւրին վրայ Թուրքիոյ պատմակա՛ն իրաւասութիւնները հաստատելու համար: Թերեւս միայն՝ Միլլէրի, Փաւլովիչի եւ ասոնց նման թուրք յարձակողներու նախահայրապետները:

Բայց Միլլէր եւ իր նմանները չեն որ միայն կան: Ասոնցմէ զատ, աշխարհի մէջ տակաւին դոյութիւն ունին խմաստուն ուղեղներ եւ պատմութեան ու միջազգային օրէնքի մասնագէտներ, կայ մարդկութիւնը, պատմական զարդացման տրամաբանութիւնը, որոնք կը դատապարտեն մարդասպանութեան քաղաքականութիւնը եւ որպէս բացառութիւն չընդունող օրէնք կը պահանջեն ոճրագործներու հետապնդումը:

Տարօրինակ է, որ 1918–1920ի դէպքերը յիշած առեն, Պաթովսկի «կը մոռնայ» յիշատակել Սեւրի դաշնագրին նման մանրամասնութիւն մը, որուն տակ վարելի է տեսնել Թուրքիոյ, Հայաստանի ու նաեւ համաշխարհային մեծ պետութեանց ստորագրութիւնները (ու նաեւ՝ Լեհաստանի): Եթէ կ'ուզէր պատմական անհրաժեշտութեան մասին խօսիլ, պէտք է յիշեցնէր Սեւրի Դաշնագիրն ու Հայաստանի վերաբերող մասը, քանի որ այս դաշնագիրը պատմական իրական անհրաժեշտութեան մը հետեւանքն էր, եւ ատոր համար ալ վոփոխութեան պէտք չէր ենթարկուեր:

Բայց, 1921ի պայմանագրով դծուած սահմանը, կը նշանակէ մէկ կողմէ բացարձակ ուրացումը հայ ազգին հաւասար իրաւունքներով դերիչխան դոյութեան, իսկ միւս կողմը կը նշանակէ մարդասպանութեան քաղաքականութեան քաջալերումը եւ արդարացումը, բան մը որ – իբր թէ – Պաթովսկիի իսկ նպատակներուն մաս չէր կազմեր: Ու եթէ այսպէս է, Պաթովսկիի կը մնայ ընդունիլ թէ Կենեվարսկիի յօդուածին առթիւ իր «բացատրութիւններն» ու «ճշդումները» սխալ են եւ անճիշդ, ո՛չ միայն պատմական իրողութեան տեսակէտէն, այլ նաեւ ՄԱԿ–ի Ուխտին տեսակէտէն, որուն անդամ են Ս. Միութիւնը, ինչպէս նաեւ Թուրքիա: Եւ վերջապէս, մարդկային բարոյականի տեսակէտէն, որովհետեւ Կարսի եւ այլ շրջաններու կորուստը (պատմական Հայաստանի հողամասին 90 առ հարիւրը), ինչպէս նաեւ միլիոնաւոր մարդկային էակներու բնաջնջումը միայն «ղգացական տեսակէտէն անհաճոյ» չէ Հայերուն համար, ինչպէս կ'ըսէ Պաթովսկի, այլեւ Հայերուն հա-

մար մահուկենաց խնդիր մըն է, զոր կարելի չէ «տհաճոյ» խընդիրներու սահմանին մէջ պարփակել:

Պաթուվսկի չի կրնար նոյնիսկ անդրադառնալ թէ ինչպէս կը սահի ու կ'իյնայ վոզքրիկ աղղերու ղպացումները վիրաւորող վիճակի մը մէջ, ու կը մոռնայ ընկերվարական մեծ պետութեանց պետական արժանապատուութիւնը: Խ. Միութեան արժանապատուութիւնը բաղկացած է խորհրդային 15 հանրապետութիւններու արժանապատուութենէն – որոնց մաս կը կազմէ Հայաստանը:

Հայկական հարցին արդար եւ վերջնական լուծում մը արդի պատմութեան արժանաւոր պարտաւորութիւններէն մին է, այնպէս ինչպէս էին լեհական պետութեան ստեղծման նախկին հարցը կամ Ասիոյ, Աֆրիկէի, Հարաւային Ամերիկայի աղգութեանց ազատագրումը՝ օտար տիրակալներու լուծէն:

Ահա այն, ինչ որ կ'ուզէի նշմարել տալ Հենրիկ Պաթուվսկիի «բացատրութեանց» առընչութեամբ:

Երեւան, 1962

Ն. Վ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Բ.

ԱՐՑԱԽԻ 2500 ՀԱՅԵՐԻ ԲՈՂՈՔԱԳԻՐ ԴԻՄՈՒՄԸ ԽՐՈՒՇՉՈՎԻՆ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի եւ յարակից հայկական շրջանների շուրջ 2500 հայերի՝ Խորհրդային Միութեան կոմկուսակցութեան կենտկոմի առաջին քարտուղար եւ Նախարարների խորհրդի նախագահ Նիկիտա Խրուշչովին յղած հանրագրութիւնը առաջին անգամ, որքան յայտնի է, հրապարակուել է Բէյրութի «ՍՓԻՒՌՔ» շաբաթաթերթի 1963 թ. դեկտեմբերի 31ի համարում, որը եւ հիմք է հանդիսանում այս ժողովածուի համար:

Փաստաթղթի բովանդակութիւնից պարզ երեւում է, որ այն պատրաստուած է 1962 թուի մայիսից յետոյ: Եւ քանի որ բազմաթիւ ստորագրութիւններ հաւաքելու ու նման մի հանրագրութիւն պատրաստելու համար երկար ամիսների աշխատանք է պահանջւում, պէտք է ենթադրել, որ վերջնական բնագիրը շրջանառութեան մէջ է դրուել 1963 թուականին:

Փաստաթղթի մէջ ոչ միայն արտացոլւում է արցախահայութեան տուեալ ժամանակի կացութիւնը, փաստական ու թուական անբեկանելի տուեալների օգնութեամբ, այլեւ որոշ չափով տրւում է նաեւ նախորդ տասնամեակների պատկերը, երբ «ժողովրդի քըշնամի Բագիրովն» էր իշխում Ադրբեջանում: Բացի այդ, ինչ որ ամէնից ուշագրաւն է, պարզ երեւում է, որ արցախահայութիւնը երբեք չի հրաժարուել իր ինքնութիւնը անխաթար պահելու նախանձախնդրութիւնից, այդ ուղղութեամբ հետեւողականօրէն պայ-

ֆարելու կամք ցուցաբերելուց: Եթէ արդիւնքները նրա օգտին չեն դասաւորուել բոլոր դէպքերում ու նաեւ մինչեւ հիմա՝ դա պէտք է առաջին հերթին բացատրել ամբողջ երկրում տիրող պետական կամայականութեամբ, իւրաքանչիւր խնդիր միայն ու միայն «ուժի դիրքերից» լուծելու անփոփոխ բաղաքականութեամբ: Յամենայն դէպս, յատկանշականը բուն արցախահայութեան՝ իր դիրքերի վրայ մնալու յամառութիւնն է, չարիքին դիմադրելու պատրաստակամութիւնը:

Արցախահայութեան խրուշչովին յղած դիմումը հրապարակուել է նաեւ հետեւեալ թերթերում.– «ԱԼԻՔ» (Թեհրան) – 1964 թ· մայիսի 23, 24 եւ 25, «ՅՈՒՍԱԲԵՐ» (Կահիրէ) – 1964 թ· յուլիսի 14, 15 եւ 16, «ԱԶԴԱԿ» (Բէյրութ) – 1964 թ· յուլիսի 21, 22 եւ 24, «ՀԱՅԱՍՏԱՆ» (Փարիզ) – 1964 թ· մայիսի 21 եւ 28:

Փաստաթուղթը արձագանք է գտել նաեւ ամերիկեան մամուլում:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ, ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԸՆԿԵՐ Ն· Ս· ԽՐՈՒՇՁՈՎԻՆ

ՅՈՒՇԱԳԻՐ

Մենք, Լեռնային Ղարաբաղի Աւտոնոմ Մարզի կոլտնեռեսականները, բանուորները ու ծառայողները եւ ադրբեջանական ՍՍՌ Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի, Շահումեանի շրջանների հայ աղգաբնակչութիւնս, մեր կեանքի ծանր պայմանների պատճառով յուսահատութեան հասնելով, որոշեցինք դիմել Ձեզ՝ արդարութեան ու պաշտպանութեան համար:

Անյիշելի ժամանակներից Քուռի, Արաքս, Սեւանայ լճի միջեւ ընկած մեր հողը, որ պատմականօրէն յայտնի է «Արցախ» անունով, միշտ էլ Հայաստանի անբաժանելի մասն է կազմել: Թուրք–մոնղոլների արշաւանքները հայերին դուրս են մղել հար–

թավայրերից, դիւղերն ու քաղաքները ոչնչացուել են եւ քոչուորների համար վերածուել արօտավայրերի: Հայերին յաջողուել է ամրանալ ու պաշտպանութիւն դնել Ղարաբաղի նախալեռնային ու լեռնային շրջաններում միայն:

Ռուսաստանին միանալուց յետոյ վերացուեց Ղարաբաղի հայութեան ֆիզիկական դոյութեան ոչնչացման վտանգը, չնայած դեռ մնում էր կրել ցարական իշխանութեան ծանր լուծը: Ցարական իշխանութիւնը 1903–1905 թուականներին, աճող յեղափոխական շարժումից պաշտպանուելու նպատակով, արհեստական թշնամանք ու արիւնալի կոտորած հրահրեց հայերի ու ադրբեջանցիների միջեւ: Առաջին իմպերիալիստական պատերազմի շրջանում, ինչպէս ազգային հանրապետութիւններ ստեղծուելուց առաջ, այնպէս էլ յետոյ, Ադրբեջանի մուսաւաթական կառավարութիւնը Ղարաբաղի հայկական շրջանները մեկուսացրեց արտաքին աշխարհից եւ ոչնչացնում էր հայերին ամէն տեղ, ուր այդ հնարաւոր էր: Ղարաբաղի հայութիւնը, ուժերի դերագոյն լարմամբ, չհնազանդուեց Ադրբեջանի մուսաւաթական կառավարութեանը, հերոսական ջանքերով պաշտպանելով իր անկախութիւնն ու ինքնուրոյնութիւնը:

Այդպիսին է Ղարաբաղի հայութեան տարաբախտութեան ու տառապանքների անվերջ շղթան: Եւ միայն 1920 թ. ապրիլին էր, որ Սովետական իշխանութիւնը վերջ դրեց այդ ամէնին:

Մենք չխնայեցինք՝ կարծելով, որ կը յաղթանակի լենինեան ազգային քաղաքականութիւնը, եւ հայ ազգաբնակչութիւն ունեցող Ղարաբաղը կ'անցնի Սովետական Հայաստանին: Եւ, իրօք, Հայաստանում սովետական իշխանութիւն հաստատուելուց յետոյ Ադրբեջանի սովետական կառավարութիւնն ընդունեց Ղարաբաղն ու Նախիջեւանը Հայաստանին վերադարձնելու մասին դեկլարացիա, որ ստորագրել ու 1920 թ. դեկտեմբերի 1ին Բաքուի Սովետի հանդիսաւոր նիստում հրապարակել է Ն. Նարիմանովը:

Սակայն այդ արդարացի եւ լիապէս եղբայրական որոշումը չիրականացուեց: 1921 թ. մարտին, Թիւրքիայի հետ կնքուած դաշնադրով, Նախիջեւանը մտցուեց Ադրբեջանական ՍՍՌ-ի կազմի մէջ: 1923 թ. Ղարաբաղի լեռնային մասին տրուեց ինքնավա-

րութիւն՝ Ադր. ՍՍՌ-ի սահմաններում, իսկ գերակշռող հայկական ազգաբնակչութեամբ Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի, Շահումեանի շրջանները (շուրջ 90 տոկոս) ուղղակի մտցուեցին Ադրբեջանական ՍՍՌ-ի մէջ: Ազատամարտ, Ղարաբաղի հայութիւնը կտրեցին Հայկական ՍՍՌ-ից, իսկ ինքնավարութիւնը չընդգրկեց բոլոր շրջանները: Ինքնավար մարզի իրաւունքներն աստիճանաբար սահմանափակուեցին եւ այժմ համարեա խոպառ վերացուել են:

Ադրբեջանական ՍՍՌ-ի հայ ազգաբնակչութեան նկատմամբ վարուել է ուղղակի ազգայնական քաղաքականութիւն, ստեղծուել են սահմանափակումներ եւ կեանքի ծայրայեղ աննպաստ պայմաններ: Եթէ ինքնավարութեան ստեղծման առաջին շրջանում որոշ բան, այնուամենայնիւ, արուել է մարզի արդիւնաբերութեան եւ գիւղատնտեսութեան զարգացման ուղղութեամբ, ապա յետոյ ամէն մի ձեռնարկում արգելակուել է. ակսուած ամէն մի բան խոչընդոտուել է եւ կամ տրուել ադրբեջանական շրջաններին: Մինչդեռ մեր մարզի նկատմամբ ներկայացուել են զարմանալի եւ ուժից վեր պահանջներ (ներքնակների, վերմակների ու զարձերի միջից հարկադրաբար բուրդ հանելու ու մթերման յանձնելու դէպքերը):

Հայ ազգաբնակչութեան տնտեսական վիճակի վատթարացման եւ մարզից հարկադրաբար հեռանալու նպատակով ձեռնարկուած այդ սքօղուած միջոցառումներից բացի, նոյն նպատակով ձեռնարկուել են նաեւ վնասարարական, հակայեղափոխական գործողութիւններ:

Ժողովրդի թշնամի Բաղիրովը ադրբեջանցիներով էր վերաբնակեցնում Մարտունու եւ Մարզի այլ շրջանների հայկական գիւղերը, չնայած այն բանին, որ Ադր. ՍՍՌ-ի մի շարք շրջաններում կային ոռոգուող հողերի ազատ տարածութիւններ: Դրա հետեւանքով այդ գիւղերում քիչ էր մնում, որ առաջանային ազգամիջեան ընդհարումներ: Ըստ երեւոյթին, ժողովրդի թշնամի Բաղիրովի հետեւորդները չեն մոռացել նրա ցուցումները: Հայ ազգաբնակչութեան շահերի անվերջ ու սիստեմատիկ ոտնահարումով, աշխատաւորութեան նկատմամբ գործադրուած ծաղրով եւ ոչնչով չարդարացուող թշնամական միջոցառումներով նրանք ջա-

նում էին ոչ միայն ոչնչացնել մարզի ինքնավարությունը, այլեւ հայ ազգաբնակչությունը դուրս մղել Ղարաբաղից:

Բերենք մի քանի օրինակներ.

1. Ստեփանակերտի հացի գործարանը ենթարկւում է Աղդամին (40 կմ. հեռաւորութեան վրայ գտնուող ադրբեջանական շրջկենտրոն): Աղդամի շրջանում պիտի կազմակերպեն Ստեփանակերտին հաց մատակարարելու գործը, պլանաւորեն ալիւր բայց թողնեն ու հացի որակը:

2. Մարզի առողջապահական բաժինը ենթարկւում է Աղդամին, որտեղից նշանակւում կամ հեռացւում են մարզի առողջապահական աշխատողները. հիւանդանոցներն ու այլ հիմնարկներն ապահովւում են եւ աւելի ճիշտ՝ չեն ապահովւում անհրաժեշտ դոյքով ու դեղանիւթերով: Մարզի դեղատները նոյնպէս ենթարկւում են Աղդամին, ինչպէս մատակարարման, այնպէս էլ աշխատակիցներ նշանակելու առումով:

3. Շինարարական վարչութիւնը ենթարկւում է Մինգեչաուրին, որը 120 կմ. հեռու է Ստեփանակերտից: Դրա անյապաղ արդիւնքը եղաւ այն, որ լաւագոյն մեքենաներն ու մեխանիզմները տեղափոխուեցին Մինգեչաուր, իսկ նրա փոխարէն բերեցին անպէտք, հնացած սարքեր, տեխնիկա: Ստեփանակերտի աւտոպարկի գլխաւոր աշխատողներն աղատուել եւ նրանց տեղերն ուղարկուել են ադրբեջանցիներ:

4. Մարզի մետաքսի կոմբինատը, որն ունի 3000 բանուոր (մարզի միակ արդիւնաբերական ձեռնարկութիւնը), ենթարկել են Նուխու համապատասխան, բայց փոքր հզօրութեան մի ձեռնարկութեան, որը 120 կմ. հեռու է Ստեփանակերտից:

Ներկարարական ֆաբրիկան տեղափոխել են Նուխի, որի հետեւանքով կրճատուել է աշխատավարձի ֆոնդը եւ իջեցուել է Ստեփանակերտի բանուորների աշխատավարձը:

Ինձորեստանում, Սէյիդչէնում, Ղշլաղում եւ այլ գիւղերում փակուել են մետաքսամանուածային ֆաբրիկաները:

5. Մարզի սոյուզպէչատի բաժինը (թերթերի եւ հրատարակչութիւնների առաքման բաժին) տեղափոխել են Աղդամ (1962 թ. մայիսից): Աղդամը պէտք է պլանաւորի, թէ մենք ինչ պիտի

կարդանք: Իսկ Ստեփանակերտի «Սոյուզպեչատի» աշխատողները մնացել են անգործ:

6. Ստեփանակերտի ցեմենտ-բետոնի գործարանը ենթարկւում է Բարդայի շրջանին (60 կմ. հեռաւորութեամբ), որը բացարձակապէս ոչ մի կապ չունի գործարանի հետ:

7. Թարթառդէսի չինարարութեան հարցը մտցուած է եղել յետպատերազմեան հնգամեակի մէջ, բայց ցարդ լիապէս չի կատարուած: Թարթառդէսը կոչուած է լուծելու մարզի էներգետիկայի եւ լեռնային ու նախալեռնային շրջանների ոռոգման հարցը:

Մինղեչաուրի չինարարութեան պատճառով դադարեցուել է Թարթառդէսի չինարարութիւնը, մինչդեռ Մինղեչաուրը չի կարող լուծել այն հարցերը, որոնք ներկայացուում էին Թարթառդէսին:

8. Մարզի համար վերջին հնգամեակների մէջ մտցուած մի շարք օբիեկտներ չեն իրացուել: Այժմ եւս ոչ մի քան չի ձեռնարկուում, թէեւ այդ օբիեկտները մտցուած են եօթնամեակի մէջ (Հրուշակեղէնի կոմբինատը, Կուրպատկինոյի գինեգործարանը եւ ուրիշներ):

9. Զնայած անհրաժեշտ նախադրեալների ու կադրերի առկայութեանը, եօթնամեայ պլանով նախատեսուած Ստեփանակերտի աւտովերանորոգման գործարանը կառուցուել է կիրովաբադում:

10. Քառասուն տարիների ընթացքում գիւղերի եւ մարզային կենտրոնի միջեւ ոչ մի կիլոմետր ճանապարհ չի կառուցուել եւ չեն բարեկարգուել եղած ճանապարհները:

11. Ոչ մի հնարաւոր գործ չի ձեռնարկուել մարզի գիւղատնտեսութեան զարգացման համար:

Զեն ընդարձակուել այգիների, տեխնիկական կուլտուրաների եւ հացահատիկի ու կարտոֆիլի տարածութիւնները: Զկայ բերքատուութեան աճ:

Անկում է ապրում անասնապահութիւնը, ղեկավարութիւնը ոչ մի ուշադրութիւն չի դարձնում ոռոգմանը: Լեռնային Ղարաբաղի մի շարք գետերի վրայ ոռոգման նպատակով ջրամբարներ են կառուցուել, բայց այդ ջրերից օգտուում են միայն աղրբեջանական

դիւղերը: Լեռնային Ղարաբաղի կոլտնտեսականները իրաւունք չունեն օգտագործել իրենց գետերի ջրերը: Հնուց Լեռնային Ղարաբաղը հռչակուած էր թթենու այգիներով, որոնք շատ յաճախ ծանր տքնութեամբ աճեցուել են ժայռոտ սարալանջերին: Այդ այգիներն օգտագործւում էին սպիրտ, դոշաբ ստանալու, չինանիւթի ու վառելափայտի համար: Հաշուի չառնելով աղքատութեան բողոքը, պրչի մի հարուածով արգելել են սպիրտ թորելը եւ առաջարկել թթենիները օգտագործել միայն չերամ կերակրելու համար: Դրա հետեւանքով ոչնչացւում են թթուտները, լերկանում են ժայռոտ լանջերը եւ դառնում ոչ պիտանի՝ երկրագործութեան համար, եթէ չխօսենք այն մասին, թէ տեխնիկական ինչ կարեւոր յատկանիշներ ունի թթենու փայտը:

Չեն ուսումնասիրուել Մարդը, նրա հողա-կլիմայական պայմանները. ենթաշրջանների նեղ մասնագիտական արդիւնագործական բաժանում չի կատարուել:

Մարդուչաւանի մարզային փորձակայանը ենթարկւում է Բաքուին: Ըստ երեւոյթին, Մարզի գիւղատնտեսութեան հարցերի ուսումնասիրութիւնը եւ տեղական նշանակութեան խնդիրների լուծումը չի հետաքրքրում Մարզի ղեկավարութեանը:

12· Անկում է ապրում լոսսաւորութիւնն ու կուլտուրան: Լուսաւորութեան բնագաւառում պէտք է նշել դպրոցների վատ աշխատանքը, որ յատկապէս ակներեւ է դառնում Հայկական ՍՍՌ· բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների ընդունելութեան քննութիւնների ժամանակ: Փակուել են Ստեփանակերտի երկամեայ մանկավարժական ինստիտուտը, երաժշտական դպրոցը: Ստեփանակերտի թատրոնը կուլտուրական մեծ նուաճում է, բայց նա ստեղծուել է Բաքուի հայկական թատրոնի վերացման գնով, չնայած նրան, որ Բաքուում կայ մեծաքանակ հայութիւն:

Կարելի է շարունակել Աւտոնոմ մարզի եւ նրա հայկական աղքատաբնակչութեան նկատմամբ կիրառուած ապօրինի եւ վնասարար կարգադրութիւնների ու գործողութիւնների թուարկումը, բայց եւ վերը նշուած թուացիկ տուեալներն իսկ լիապէս բնութագրում են մարզի աղքատաբնակչութեան աննորմալ եւ ծանր իրավիճակը: Դա ծաղր է ինքնավարութեան, հայ աղքատաբնակչութեան

չահերի ու սովետական քաղաքացու իրաւունքների, լենինեան ազգային քաղաքականութեան նկատմամբ:

Կատարածից վեր է այն, թէ երկար տարիների ընթացքում պարբերաբար ինչ նպատակներ են հետապնդուել, որոնք այժմ աւարտուելու վրայ են:

Լեռնային Ղարաբաղի հիմնարկ-ձեռնարկները՝ 40–60 կիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող ադրբեջանական շրջանների համապատասխան ձեռնարկութիւններին ենթարկելուն նախասիրութիւն տալը (Աղդամ, Բարդա, Մինգեչաուր, Կիրովաբադ, Նուխի եւ այլն), մարդի հիմնարկութիւններն ու ձեռնարկութիւնները Ադրբեջանական ՍՍՌ-ի շրջաններ տեղափոխելը, մարդի՝ պլանով նախատեսուած արդիւնաբերական եւ այլ անհրաժեշտ ձեռնարկութիւնների կառուցման խափանումը հասցրել են մարդի վարչա-տնտեսական դործունէութեան կատարեալ քայքայման:

Այդ միակողմանի վնասակար միջոցառումների պատճառով Մարդի հայ աղդաբնակչութիւնը դրկուել է աշխատանքից ու բարեկեցութիւնից ու հարկադրաբար թողել իր հարազատ օրրանը:

Ահա թէ ինչով պէտք է բացատրել վերջին 25 տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի հայ աղգաբնակչութեան աճի կատարեալ բացակայութեան փաստը: Պէտք է նշել, որը վերը նըշուածի չնորհիւ Ղարաբաղը միաժամանակ բնակեցուած է աղդբեջանցիներով:

Ուղղակի տարուում է աղգային-չովինիստական, պան-թուրքիստական քաղաքականութիւն, որը միանգամայն աներեւակայելի է ու անյարիր Սովետական իշխանութեան պայմաններում, բայց, ըստ երեւոյթին, ընդունելի է Ադրբեջանի հանրապետութեան ղեկավարութեան համար: Այդ քաղաքականութիւնը մարդից դուրս գտնուող հայկական շրջաններում (Շամխորի, Շահումեանի, Նանլարի շրջանները) աւելի նողկալի ձեւեր է ընդունել:

Ստեղծուել է անհանդուրժելի դրութիւն: Խորականութիւն ամէնուր եւ ամէն ինչում: Մեր վիճակն այժմ վատթար է, քան 1918–1920 թուականներին, թուրք մուսաւաթական եւ անգլիական նուաճման շրջանում: Այժմ կատարուում է նոյնը՝ բարեկամութեան ու եղբայրութեան քօղի տակ: Մենք առաջ էլ բողոքել

ենք, որ վաստօրէն չկայ ինքնավար մարզ: Փորձեր են արուել պարզելու մասսայի դժգոհութեան պատճառները, բայց դրա համար դործադրուել են անթոյլատրելի մեթոդներ:

Օրինակ, Բաղիրովը Ստեփանակերտում հրաւիրել էր կուսակցական ակտիւի նիստ եւ առաջարկել. «Ովքեր ճիշտ չեն համարում Ղարաբաղի՝ Ադրբեջանական ՍՍՌ-ին միացումը, թող դուրս գան ժողովից»: Պարզ է, թէ տուեալ դէպքում ինչով կարող էր վերջանալ ժողովից դուրս գալը:

Մէկ ուրիշ դէպք, որ տեղի է ունեցել վերջերս, երբ պատճառները պարզաբանելու համար կարծիքներ են հարցրել միայն մարզի ղեկավարներից եւ այն էլ բաքուում (ընկ. Մուխիտդինով):

Ճնշման եւ խտրականութեան քաղաքականութիւնը առաջացնում է արդարացի ատելութիւն նրա աղբիւրի՝ հանրապետութեան եւ մարզի ղեկավարութեան դէմ: Ցաւալին այն է, որ այդ հողի վրայ առաջանում են աղգամիջեան անցանկալի փոխյարաբերութիւններ:

Այն օրերին, երբ մենք կոմունիզմ ենք կառուցում, չենք կարող ապրել նման պայմաններում: Մեզ անհաւատալի եւ անհնար էր թւում ազգային-չովինիստական այդպիսի կոպիտ քաղաքականութեան կենսագործումը: Բայց այժմ կասկած չկայ, մեղ լիովին համոզեցին 1962 թ. սկզբից արուող կարգադրութիւնները:

Մենք խնդրում ենք անյապաղ վճռել Լեռնային Ղարաբաղը եւ յարակից հայկական բոլոր շրջանները Հայկական ՍՍՌ-ի մէջ վերամիաւորելու կամ ՌՍՖՍՌ-ի կազմի մէջ մտցնելու հարցը:

Մենք խնդրում ենք Ղարաբաղի հայութեան նկատմամբ դործադրել միայն Լենինեան ազգային քաղաքականութիւն:

Ստորագրել են Լեռնային Ղարաբաղի
շուրջ 2500 հայ բնակիչներ

Գ.

ՍԻԼԻԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱԽԱՓՈՅԹՆԵՐԻՑ ՄԷԿՈՒՄ

Բանաստեղծուհի Սիլւա Կապուտիկեանը ելոյթ է ունեցել Երեւանի «26 կոմիսարների» հաղաբայիկ շրջանի կուսակցական կոնֆերանսում, Հայկոմկուսի 24րդ համագումարի նախօրեակին եւ Մեծ Եղեռնի 50ամեակի նշումից շատ ամիսներ յետոյ, այսինքն 1965 թուականի վերջերին: Այդ կոնֆերանսի մասին «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» թերթի 1965 թ· դեկտեմբերի 28ի համարում տրպուած հաշուետուութեան մէջ ասւում է, թէ՝ «Երիտասարդութիւնը սովետական ջերմ հայրենասիրութեան, պրոլետարական ինտերնացիոնալիզմի եւ ժողովուրդների լենինեան բարեկամութեան ոգով դաստիարակելու հարցերին նուիրեցին իրենց ելոյթները գրող Ս· Կապուտիկեանը, ՍՄԿՊ կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական փիլիալի սկզբնական պարտկազմակերպութեան քարտուղար Ա· Եղիազարեանը, ՀԼԿԵՄ շրջկոմի քարտուղար Ռ· Միրոյեանը, № 78 դպրոցի դիրեկտոր Ա· Յակոբեանը»: Իսկ նոյն հաւաքոյթի մասին ռուսերէն «ԿՈՄՈՒՆԻՍՏ» թերթում նոյն օրը տպուած յօդուածում ոչ մի յիշատակութիւն չկայ Կապուտիկեանի ելոյթի մասին:

Կապուտիկեանի ելոյթը, ի շարս այլ թերթերի, հրապարակել է հետեւեալ թերթերում·– «ԱԶԴԱԿ» (Բէյրութ) – 1966 թ· յու–

ւնիսի 1, 2 եւ 3, «ՅՈՒՍԱԲԵՐ» (կահիրէ) – 1966 թ· յունիսի 7, 8 եւ 9, «ՀԱՅՐԵՆԻՔ» (Բոստոն) – 1966 թ· յունիսի 15, 16 եւ 18, «ՀԱՅԱՍՏԱՆ» (փարիզ) – 1966 թ· յունիսի 23, 30, եւ յուլիսի 7 (ֆրանսերէն թարգմանութեամբ):

ՍԻԼԻԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ՀԱՅԿՈՄԿՈՒՍԻ 24-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Ընկերնե՛ր, հաշուետու ժամանակաշրջանում, ինչպէս մեր ամբողջ հանրապետութիւնը, այնպէս էլ 26 կոմխաարների շրջանը ունեցել է տնտեսական յաջողութիւններ, բայց ես, որպէս զրոյց, պէտք է կանգ առնեմ այն մի քանի երեւոյթների վրայ, որ տեղ են գտել մեր հանրապետութեան հասարակական, քաղաքական կեանքում եւ որոնց կողքով անցնել չի կարելի:

Ինչպէս գիտէք, այս տարի համայն հայ ժողովուրդը նշեց Մեծ Եղեռնի՝ սուլթանական Թուրքիայի կողմից հայ ժողովուրդի վերաբերեալ գործադրած ժողովրդասպանութեան յիսունամեակը: Այս տարելիցի արձագանգը լայնօրէն տարածուեց աշխարհում, շատ օտարերկրեայ պետութիւններ մամուլում եւ այլ հաւաքոյթներում նշեցին այդ տարելիւը, եղան պետութիւններ, որոնք ապրիլի 24ին աղգային սուգի օր յայտարարեցին: Էլ չեմ խօսում սփիւռքահայութեան սուգի եւ բողոքի բուռն ու բազմազան արտայայտութիւնների մասին:

Այս Ֆոնի վրայ միանգամայն ճիշտ էր, քաղաքական տեսակէտից հեռատես, որ Սովետական Միութեան Կոմպարտիայի Նախագահութիւնը հաւանութիւն տուեց Հայաստանի Կոմկուսի կենտկոմի որոշմանը՝ պետականօրէն նշելու այդ յիսնամեակը:

Սակայն, ցաւօք սրտի, այդ նշումը չընդունեց անհրաժեշտ խորութիւն ու լայնութիւն, որը եւ տեղիք տուեց 1965 թուի ապրիլի 24ի յայտնի դէպքերին:

Մեզանում տիրապետող կարծիքից բացի, որի վրայ ես յետոյ կանգ կ'առնեմ, դոյութիւն ունեն այդ դէպքերը բոլորովին տարբեր ծայրերից դնահատող երկու տարբեր կարծիքներ: Գնահատողների մի մասը աշխատում է փոքրացնել դրա նշանակութիւնը, համարել սոսկ մի քանի ջահել–ջհուլների խաղ, երիտասարդութեան օյինրաղութիւն. միւս մասն էլ աշխատում է այդ դէպքերին տալ ամենամռայլ գունաւորում, համարել հակապետական ցոյց, նացիոնալիստական, հակառուսական տրամադրութիւնների արտայայտութիւն, Սովետական Միութիւնից անջատուելու կոչ եւ այլն:

Վերջին կարծիքի կողմնակիցները, թուով չատ քիչ, բայց ակտիւ տարրեր են, որոնց հիմնական զբաղմունքն է անդադարօրէն դրպարտագրեր հասցնել Մոսկուա եւ որքան կարելի է ծուռ հայելու մէջ ներկայացնել իրողութիւնը: Դժբախտաբար, պատահում են պատասխանատու անձինք, որոնք ոչ միայն ընթացք են տալիս այդ դրպարտագրերին, այլեւ, ելնելով դրանցից, ինչպէս եւ այս վամ այն ինֆորմատորի սխալ տեղեկութիւններից, ճիշտ պատկերացում չեն կազմում Հայաստանի եւ նրա ժողովրդի մասին:

Այսպիսի սխալ պատկերացման արդիւնք է այս դեկտեմբերի 9–11ին Մոսկուայում կայացած ստեղծագործական երիտասարդութեան հետ տարուող աշխատանքներին նուիրուած խորհրդակցութեան ժամանակ Համկեմ կենտկոմի քարտուղար ընկ. Կամչալովի յայտարարութիւնը, թէ իբր ապրիլեան դէպքերը Հայաստանում դոյութիւն ունեցող նացիոնալիստական տրամադրութիւնների դրսեւորում են, որի ընթացքում եղել են Ռուսաստանից անջատուելու կոչեր, հակասովետական ելոյթներ, եւ այլն, եւ այլն, եւ այլն:

Ինչ խօսք, որ ընկ. Կամչալովը, որպէս Սովետական Միութեան երիտասարդութեան ղեկավարներից մէկը, պէտք է անդրադառնար Հայաստանում տեղի ունեցած դէպքերին: Ես այն կարծիքին եմ, որ տեղի ունեցածը աւելի՛ ուշադրութեան է արժանի, քան կարծում են որոշ ընկերներ: Սակայն այդ ուշադրութիւնը պէտք է ընթանայ ոչ թէ ամէն քայլափոխի նացիոնալիզմ ձեւա-

կերպելու, դէպքերի ակտիւ մասնակիցներին կոմերիտմիութիւնից հեռացնելու եւ այս կամ այն ասպարէզում հակողութիւնն աւելի ուժեղացնելու ուղղութեամբ, այլ դէպքերի պատճառների մէջ խորանալու, այդ պատճառները քննելու եւ ճշմարիտ եզրայանգումների հասնելու ուղղութեամբ:

Միամտութիւն կը լինի մտածել, որ ապրիլի 24ի ցերեկը Երեւանի փողոցները ողողող մօտ հարիւր հազարի հասնող բազմութեան հայրենասիրական բուռն ղգայմունքները եւ այդ օրուան նախորդող եւ յաջորդող օրերի մեր ժողովրդի բորբոք հոգեվիճակը արդիւնքն է մտաւորականների՝ դրողների, հրապարակախոսների, դասախօսների «չափից դուրս բուռն, կրքեր բորբոքող» աշխատանքի, արդիւնք են այս կամ այն գեղարուեստական ստեղծագործութեան, թատերական ներկայացման եւ կամ ուսումնասիրութեան հրապարակ գալուն:

Մենք մարքսիստներ ենք եւ գիտենք, որ կացութի՛ւնն է որոշում գիտակցութիւնը. ոչ մի իդէա, գաղափար զանգուածների արտում արմատ չի գցի, եթէ դրա համար չկայ համապատասխան հող, այդ իդէաները ծնող ու անող իրավիճակ:

Անդրադառնանք, ուրեմն, համառօտակիօրէն, ա՛յն իրավիճակին, որ ներկայումս գոյութիւն ունի հայ, ինչպէս եւ Սովետական Միութեան մէւս սոցիալիստական ազգերի կեանքում:

Ինչպէս գրուած է Սովետական Միութեան Կոմունիստական պարտիայի ծրագրում, մեր երկրում կոմունիզմի ծաւալուն շինարարութեան ժամանակ չարունակւում է սոցիալիստական ազգերի տնտեսական եւ մշակութային ծաղկումն՝ զուգակցուած այդ ազգերի սերտ եւ բազմակողմանի մերձեցման հետ: Սակայն, ծաղկում ասելով, չպէտք է հասկանալ միայն այդիների տնկում եւ կամ գործարանների ու դպրոցների կառուցում. գիտութեան եւ տնտեսութեան ծաղկման հիմքի վրայ տեղի է ունենում նաեւ սոցիալիստական ազգերի հոգեւոր ծաղկում: Կոլտնտեսական աւելի առաջաւոր կարգերը, նորակառոյց հզօր գործարանները ու գիտաուսումնական հիմնարկները, այնտեղ գործող ազգային կադրերի՝ բանուորների, կոլտնտեսականների, երկտասարդութեան տեխնիկական, գիտական եւ գեղարուեստական մտածողութեան բուռն

ած ըարձրացնում է նաեւ ազգի ընդհանուր հոգեւոր մակարդակը, հոգեկան այդ զարթօնքը հրապարակ է հանում տուեալ ազգի մինչ–այդ նիրհող, պոտենցիալ ուժերը, բարձրացնում ազգային արժանապատուութեան զգացումը, հրահրում զարգացման իր ներկայ մակարդակին համապատասխան՝ գնահատելու անցեալը, ցաւելու կորցրածի համար, հրճուելու ստեղծածի համար, որոնք (ազգերը) իրաւունք ունեն, ելնելով սոցիալիստական հասարակարգում խրաքանչիւր ժողովրդի տրուած վերածննդի հնարաւորութիւնից, լիաբուռն հատատաելու իրենց ինքնուրոյնութիւնը սովետական բազմազգ ընտանիքում, ինչպէս եւ ո՛չջ մարդկութեան, սեփական ձիրքերը երեւան բերելու իրենց կամքն ու կարողութիւնը:

Ահա, ինձ թւում է, սրանով, այս հոգեւոր ծաղկումով պէտք է բացատրել, որ սոցիալիզմի պայմաններում համարեա բոլոր ազգերն էլ, ե՛ւ նա, որ հարիւր միլիոնից աւելի է, ե՛ւ նա, որի թիւը 100 հազարի էլ չի հասնում, միեւնո՛յն ներշնչումով, լծուած են իրենց ազգային գոյութիւնը, լեզուն եւ մշակոյթը պահելու եւ զարգացնելու վճռակամութեամբ, որ հազիւ 200 հազարի հասնող աւար ժողովրդի տաղանդաւոր բանաստեղծ, Լենինեան մրցանակի լաւրեատ Ռասուլ Համզաթովը հաւատ ու վստահութիւն է ստանում գրելու հետեւեալ տողերը.

Եթէ ես իմանամ, որ վաղը իմ լեզուն չի լինելու,
Կը գերադասեմ այսօր եւեթ մեռնել:

Եթէ այդպիսի զարթօնք են ապրում մեր բոլոր ազգերը, եթէ վերոյիշեալ ձեւով է գրում եւ մտածում միայն Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ այբուբեն ստացած ժողովրդի բանաստեղծը, ապա ինչպէ՞ս կարող է, որ այդ զարթօնքի ոգին չհամակի մօտ երեք հազար տարուայ ճանապարհ անցած, 1600 տարուայ իր այբուբենը ունեցող մի ժողովրդի, ինչպիսին է հայ ժողովուրդը, որը սոցիալիստական կարգերի շնորհիւ ապրելով իր վերածնունդը՝ դեռ շատ անելիքներ ունի աշխարհում:

Այնպէս որ, իմ կարծիքով, ազգային ինքնագիտակցութեան վերածնումը հայ իրականութեան մէջ ոչ թէ մտաւորականութեան կողմից հրահրուած մի տրամադրութիւն է, այլ, ունենալով հան–

դերձ իր՝ միայն իր ժողովրդի ճակատագրով պայմանաւորուած առանձնայատուկ ղրդապատճառները, ընդհանուր մի երեւոյթ է, բնորոշող՝ սոցիալիստական ազգերի զարգացման ներկայ աստիճանի համար:

Սակայն մեր երկրում ազգերի այս ծաղկումը չի հասնում մի ազգի տիրապետութիւնը միւսի վրայ հաստատելու ձգտման, այլ, ընդհակառակը, դնում է տարբեր ժողովուրդների տնտեսական եւ մշակութային մերձեցման ուղղութեամբ, սեփական դոյնով՝ ազգերի համերաշխ ծիածանի մէջ ներդաշնակութեամբ հիւսուելու նշանարանով:

Կարելի է ժամերով պատմել մերձեցման այն եղանակների ու փաստերի մասին, որ պոյութիւն ունեն սոցիալիստական ազգերի միջեւ. բայց ես կ'ուզէի աւելացնել, որ մերձեցում ասելով՝ չպէտք է հասկանալ միայն իրարու հադուստը հադնել, իրարու մօտ հիւր գնալ ու խմել մէկը միւսի պերցովկան ու կոնեակը, փոխադարձ սիրալիրութեամբ երգել ռուսական «չաստուշկան» կամ հայկական «ծիծեռնակը», թէեւ սրանք էլ նոր եւ դեղեցիկ տրադիցիաներ են:

Մերձեցումը, դա նշանակում է բարձր փոխըմբռնում՝ տարբեր սոցիալիստական ազգերի միջեւ, փոխներթափանցում՝ իրար վչտերի եւ ուրախութիւնների մէջ, փոխադարձ յարգանք՝ մէկը միւսի պատմական ճակատագրի նկատմամբ, ինչպէս եւ պատրաստակամութիւն՝ օգնելու իրար, որպէսզի լուծուեն այդ ճակատագրի համար նշանակութիւն ունեցող կենճռոտ հարցերը:

Սրանք նոր փոխյարաբերութիւններ են ազգերի պատմութեան մէջ, որոնք կարող էին կեանքի կոչուել միայն սովետական կարգերի օրօք, երբ պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարները պայմաններ են ստեղծում բարեկամօրէն հարթելու ազգերի մէջ պոյութիւն ունեցող տարակարծութիւնները:

Հենց այս նկատի ունէր նշանաւոր յեղափոխական, մեծ ինտերնացիոնալիստ Օրջոնիկիձէն, երբ 1920 թուի նոյեմբերի 30ին, Բաքուի Սովետի նիստում, պատանեկան խանդավառութեամբ ողջունելով Յեղափոխական Կոմիտէի նախագահ Նարիման Նարիմանովի հրատարակած Ադրբեջանի Յեղկոմի դեկլարացիան՝ Լենա-

յին Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջեւանը նորաստեղծ Սովետական Հայաստանին միացնելու մասին, ասում էր.

«Մուսուլմանները եւ Հայերը այլեւս դառնում են հարազատ եղբայրներ՝ սովետական իշխանութեան կարմիր դրօշների ներքոյ: Այստեղ կարդացուած այս ակտը մեծագոյն կարեւորութիւն ունեցող ակտ է, որը մարդկութեան պատմութեան մէջ իր օրինակը չունի»:

Ահա ազգերի վոխըմբռնման այսպիսի բարձր իդէալներով է սկսել իր գործունէութիւնը սովետական իշխանութիւնը, այդ իդէալների իրականացումն են հետապնդել յեղափոխութեան նուիրեալ գործիչները, իդէալնե՛ր, որոնք շատ բանով իրականութիւն են դարձել մեր կեանքում. բայց որոշ տեսակէտից, չգիտեմ ո՛ւմ եւ ի՛նչ պատճառներով, մնացել են թղթի վրայ... Այլապէս ինչո՞վ բացատրել այն անարձագանգ վերաբերմունքը, որ ունեցան մեր կենտրոնական իշխանութիւնները հայ ժողովրդի մեծ վշտի՝ Եղեռնի 3իանամեակի նկատմամբ:

Հայ ժողովուրդը իրաւացիօրէն սպասում էր, որ սոցիալիզմի երկիրը իր ազդու ձայնը կը բարձրացնի դատապարտելու Թուրքական պաղութարարների կազմակերպած, պատմութեան մէջ մինչ այդ ամենամասշտաբային, ամենապլանաւորուած, մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը հետապնդող դենոցիդը, ճի՛շտ այնպէս, ինչպէս նա այդ արեց համաշխարհային երկրորդ պատերազմի 20ամեայ տարելիցին, երբ վոսքը վերաբերում էր պերմանական ֆաշիզմին եւ նրա ցեղասպան ոճիրներին:

Սակայն մեր սպասելիքները չիրականացան. բացի Հայաստանում կազմակերպուած կիսատ-պռատ միջոցառումներից և «ՊՐԱՒԴԱ»յում տպագրուած 3–4 տողից, մխիթենական ոչ մի թերթ, ոչ մի կազմակերպութիւն չարձագանգեց 50ամեայ տարելիցին, չբաժանեց հայ ժողովրդի վիշտն ու վրդովմունքը:

Ընդհակառա՛կը, հենց ա՛յդ ամիսներին սկսուեցին բարեկամութեան եռանդուն բանակցութիւններ Թուրքիայի հետ՝ անտեսելով ոչ միայն կենտրոնական օրգաններին եւ «ՊՐԱՒԴԱ»յի խմբագրութեանը ուղղուած ինչպէս անհատների, այնպէս էլ աշխատաւորութեան ներկայացուցիչների կոլեկտիւ նամակները, այլեւ

Թուրքիայից այնքան տառապանք կրած մի ողջ ժողովրդի հոգեվիճակը:

Մենք հասկանում ենք, որ բացի առանձին ազգերի շահերից, կայ սովետական ընդհանուր շահ, մեծ քաղաքականութիւն: Բայց գենոցիդի դատապարտութիւնը, փոքրաթիւ ազգի արժանապատւութիւնը յարգելը նոյնպէ՛ս մտնում է մեծ քաղաքականութեան մէջ:

Ջէ՞ որ աչխարհի մեծ ու փոքր ժողովուրդները նայում են մեր երկրին որպէս օրինակելի երկրի, որտեղ սոցիալիզմի յաղթանակը ազատութիւն եւ արդարութիւն է բերում նրա կազմում գտնուող ազգերի համար:

Ուրեմն, չպէտք է մոռանալ, որ ազգային քաղաքականութեան ամէն մի խեղաթիւրում մեր երկրում, փոքրաթիւ ազգի շահերի ամէն մի անտեսում կարող է վնասել մեր մեծ քաղաքականութեանը, կարող է խախտել ժողովուրդների հաւատը դէպի սոցիալիստական կարգերը:

Իսկ ինչ վերաբերում է իր՝ անտեսուողի հաւատին, ապա, դժբախտաբար, վերոյիշեալ փաստերը ցոյց տուեցին, որ դա այնքան էլ չի մտահոգում մեր որոշ կենտրոնական ղեկավարների:

Ընկերնե՛ր, արդէն երկու դարից աւելի է, որ հայ ժողովուրդը իր ազատագրութեան լոյսը կապել է Ռուսաստանի հետ. ի հարկէ, չի սխալուել: Մեր մեծ լուսաւորիչ Խաչատուր Աբովեանը յոյսով եւ հրճուանքով օրհնել է այն պահը, երբ ազատարար Ռուսաստանի ոտքը կը դիպչի Հայոց հողին: Ցարական կառավարողները Ռուսաստանի ամբողջ հարաւային սահմաններում բնակեցրել են հայերին, որպէս ամենայուսալի տարրի: Աբեմտեան Հայաստանի հայրերն ու մայրերը, իրենց երեխաներին տալով Ռուսէթ անունը՝ Ռուսաստան, երազել են այն օրը, երբ քեռին՝ փրկարար ռուսը պիտի հասնի մինչեւ իրենց դիւղը: Եւ այդ ղգալով է, որ աւելի՛ են մոլեգնել Թալէաթն ու Էնվերը եւ բնաջնջել, ժողովրդի կէսին աքսորել են պապենական հողերից:

Հայերի հաւատարմութիւնը Ռուսաստանին պայմանաւորուած է եղել ո՛չ միայն աչխարհագրութեամբ, այլեւ պատմութեամբ, հոգեհարազատութեամբ: Ահա թէ ինչո՛ւ կրկնակի անհեթեթու-

թիւն է հայ ժողովրդին վերապրել Ռուսաստանից եւ Սովետական Միութիւնից անջատուելու տրամադրութիւններ: Մեղնից իւրաքանչիւրը, եթէ նրա ուղեղը մթագնած չէ, պիտի, որ հայ ժողովըրդի բախտը ընդմիշտ կապուած է Ռուսաստանի հետ, սովետական կարգերի հետ, որոնց եւ նուիրուած է ողջ էութեամբ:

Սակայն, ցաւօք սրտի, այս նուիրուածութիւնը ըմբռնելու եւ գնահատելու փոխարէն, երբեմն նկատուում է սովետական երկրի ղեկավարներին ոչ–սաղական անփութութիւն՝ մեր ժողովրդին խորտակիչ յուղող այս վամ այն խնդրի նկատմամբ: Անփութութի՛ւն, որի ենթատեքստը հետեւեալն է. «Դէ, ոչինչ, ինչ էլ լինի՝ Հայերը հաւատարիմ են»:

Ընկերնե՛ր, բարձր հաւատարմութիւնը հոգու բարձր յատկութիւն է: Բարոյական եւ այլ կարգի ճնշումներով, սեփական ամենաղօրութեան չեչտումով չպէտք է հրահրել, որ այդ բարձր հաւատարմութիւնը, սրտագին նուիրուածութիւնը փոխարկուի վախի, երեսպաշտութեան, կոյր ենթարկուածութեան: Այս վիճակը ենթարկուողի ներսում առաջացնում է չարութիւն, անզօրի թաքնուած հակառակութիւն, ստիպում՝ չյարգել ոչ ուրիշին եւ ոչ էլ իրեն: Իսկ իրեն չյարգող մարդը արդէն սկզբունքներ եւ սըրբութիւններ չունեցող մարդ է: Նա կարող է այսօր նոյն երեսպաշտութեամբ մէկին ծառայել, վաղը՝ միւսին: Անհատների մէջ գոյութիւն ունեցող այս փոխյարաբերութիւնները աւելի՛ եւս բարդանում եւ նրբերանգներ են առանում, երբ փոխադրւում են ժողովուրդների միջեւ գոյութիւն ունեցող փոխյարաբերութիւնների ոլորտը, մանաւանդ եթէ խօսքը վերաբերւում է սոցիալիստական ազգերի փոխյարաբերութեանը, երբ մերձեցման ֆակտորը տրամադրում է իւրաքանչիւր ժողովրդի՝ աւելի շատ յարգանք եւ վոխնոներթափանցում ապասել միւս ժողովուրդներից:

Ահա թէ ինչո՛ւ այդքան անհրաժեշտ է, որ այդ փոխյարաբերութիւնները մշտապէս պահուեն լենինեան գաղափարներին արժանի բարձրութեան վրայ:

Ընկ. Կամչալովը, ինչպէս եւ նրա նման մտածողները, ոչ թէ պէտք է անճիշտ, մակերեսային յայտարարութիւններ անէին ապրիլեան պէպքերի առթիւ, այլ փորձէին խորանալ դրանց մէջ,

թափանցել կեղեւից ներս ու նոր մխային եղրակացութիւններ անել:

Իսկ խորանալու դէպքում կը հասկանային, որ այդ օրը փողոց ելած բազմութեան հոգիներում փոթորկում էին հաղար ու մի ըղդացումներ եւ վիշտ՝ միլիոն ու կէս նահատակների համար, եւ զայրոյթ՝ թուրքական ցեղասպանների հանդէպ, եւ բողոք՝ հայկական հողերը բռնագրաւողների եւ նրանց միջազգային հովանաւորողների հանդէպ, եւ վիրաւորանք, որ Մոսկուան եւ եղրայրական ժողովուրդները այդպիսի մի պահի չեն կիսում հայ ժողովրդի վիշտն ու խռովքը, եւ ցաւ, որ հայրենի ժողովրդի կէսը բնաւեր թափառում է աշխարհի չորս ծայրերում, եւ տարակուսանք, որ Սովետական Միութիւնում գտնուող հայերի 44 տոկոսը բնակւում է Սովետական Հայաստանի սահմաններից դուրս, մեծ մասամբ՝ այդ սահմաններին կպած հողերում, եւ մտահոգութի՛ւն, որ Հայաստանի ներկայ նեղուածք տարածութեան վրայ անհնար է տեղաւորել հայրենաբաղձ հայերի մի փոքրիկ մասն անգամ:

Ու նաեւ, ու մանաւանդ այդ հոգիներում կար յոյս ու ակընկալութիւն, որ սովետական իշխանութիւնը, որ հայրենիք եւ վերածննդի հնարաւորութիւն բերեց հայ ժողովրդին, աւելի սրտցաւ ու հանգամանօրէն կը զբաղուի նաեւ մեր ժողովրդի ճակատագրի համար այնքան կարեւորութիւն ունեցող այս հարցերով:

Իմ յիշողութեան մէջ մնացել են այդ օրերին փողոցներում քայլող երկու՝ ոչ լաւ հագնուած, լուրջ, կենտրոնացած դէմքերով պատանիները, որոնք տանում էին սատինի մի կտոր, վրան անվարժ ձեռքով գրուած միամիտ մի նախադասութիւն. «Ա ր դ ա ր լ ո ւ ծ է ք Հ ա յ ոց հ ա ր ց ը»:

Ի հարկէ, կարելի է զոռալ այդ տղաների վրայ, ռեժիմէ մահակով հարուածել, խլել սատինի կտորը, պատռել կամ ներկայացնել համապատասխան տեղ՝ որպէս իրեղէն ապացոյց: Բայց դա խնդրի լուծում չէր լինի: Դա աւելի՛ կը դրգռի այդ պատանիներին, կը հրահրի անառողջ տրամադրութիւններ, կը մղի տագարիւն արարքների:

Ա՛հա, այս պատանիների հետագայ բախտի համար է, որ ես, որպէս աւագ եւ կեանքի փորձ ունեցող մարդ, որպէս կոմունիստ,

որպէս բանաստեղծ անհանդուրժանում եմ: Այլընտրանքից այդ առաջ ոչինչ հիմա իմ աչքի առաջ են այդ ղոյդ տղաների եւ նրանց հաղարաւոր ընկերների մտքի անսովոր աշխատանքից լարուած, տղնիւ եւ ներշնչուած հայեացքները:

Սովետական կարգերում ծնուած ու մեծացած, այդ կարգերին ողջ էութեամբ մերուած, բայց դեռ անփորձ, անմեղ, դեռ կեանք չմտած երիտասարդնե՛ր, որոնց չի կարելի թողնել այդպէս՝ իրենք իրենց դէմ, որոնց պէտք է տէր կանգնել, ետ պահել անխոհեմ քայլերից, օգտակար հունի մէջ դնել նրանց տղնիւ խռովքները: Իսկ այդ օդնութիւնը շատ դժուար է՝ առանց ճշմարիտ եւ արդար պատասխան ունենալու նրանց յուզող հարցերին:

Ահա այդ հարցերին արդար պատասխան ունենալու համար է, այդ երիտասարդների բախտի նկատմամբ պատասխանատուութեան զգացումն է, որ այսօր ինձ ստիպել է ընդհատել իմ գրական գործերը եւ չրջանային կոնֆերանսի՝ այդ նպատակի համար թերեւս ոչ այնքան նպատակայարմար ամբիոնը բարձրանալ:

Պէտք է ասել, որ այդ հարցերը արծարծող նամակները են դրնում մխութենական կենտրոնական կոմիտէ, երբեմն բազմաթիւ ստորագրութիւններով: Սակայն, ցաւօք սրտի, դրանք մնում են անհետեւանք կամ, աւելի վատթարը, այդ նամակների հեղինակները ենթարկւում են տոյժի: Սա եւ այս կարդի միջոցները նո՛յնպէս լուծում չեն:

Ընկերնե՛ր, ազգային հարցը բարդ հարց է: Պատմութիւնը ունի շատ օրինակներ, երբ բազմազգ տէրութիւնները, չկարողանալով կարգաւորել ազգային հարցերը, կործանուել են: Սովետական Միութեան մօտ ներկայ կեանքը ցոյց է տալիս, որ լենինեան ազգային քաղաքականութիւնը տուել է իր բարերար արդիւնքները, ստեղծել է բազմազգ պետութիւն. ամուր մի ճուլուածքով հանդերձ՝ սովետական պետութեան մէջ ամէն ազգ ըստացաւ իր կեանքը կառուցելու հնարաւորութիւն, իր տնտեսութիւնը եւ երիտասարդութիւնը ծաղկեցնելու պայմաններ:

Սակայն, դրա հետ միասին, ազգային հարցի մէջ կան դեռ շատ վաղուց լուծում պահանջող հարցեր՝ մի կողմից եւ սոցիա-

վիստական աղբերի հետ կապուած, նոր առաջացած ու առաջացող հարցեր՝ միւս կողմից:

Իմ ելոյթի նպատակն էր հիմնականում կանգ առնել մեր հանրապետութեանը վերաբերող խնդիրների վրայ: Ուրիշ հանրապետութիւնների կեանքում նոյնպէս դոյութիւն ունեն այս կամ այլ կարգի խնդիրներ, որոնք նո՛յնպէս կարիք ունեն ուսումնասիրութեան:

Ելնելով այս ամէնից, մեր կուսակցութեան կենտրոնական օրգանները պէտք է աւելի հանդամանօրէն զբաղուեն ազգային հարցերով եւ լուծում տպաւող հարցերին տան արդարացի ընթացք եւ լուծում՝ լենինեան ազգային քաղաքականութեանը, սովետական օրէնքներին եւ սահմանադրութեանը համապատասխան:

Դա մեծապէս կ'օգնի ազգերի հետագայ ծաղկմանն ու մերձեցմանը, ժողովուրդների բարեկամութեան առաւե՛լ ամրապնդմանը:

Դ.

Ե. Հ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ

Թէեւ երեւաւարեակ կոմունիստ Ե. Հ. Յովհաննիսեանի՝ խորհրդային Միութեան կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէին յղած նամակը կապուտիկեանի ելոյթից աւելի ուշ հրապարակուեց մամուլում, ամենայն հաւանականութեամբ՝ դա շատ աւելի շուտ է գրուել: Նամակում միաժամանակ շօշափւում են հայաբնոյթ բազմաթիւ հարցեր, – Հայոց նորագոյն պատմութեան առանձին դրուագներ, Արեւմտեան Հայաստանի ճակատագիր, կովկասեան Հայաստանի հրատապ հոգսեր: Նամակը գրուել է թերեւս 1965 թուականի առաջին կէսին:

Յովհաննիսեանի նամակը հրապարակուել է հետեւեալ թերթերում.– «ԱԶԴԱԿ» (Բէյրութ) – 1966 թ. սեպտեմբերի 22, «ՀԱՅՐԵՆԻՔ» (Բոստոն) – 1966 թ. հոկտեմբերի 1, «ԱԶԱՏ ՕՐ» (Աթէնք) – 1966 թ. սեպտեմբերի 27 եւ 28, «ՅԱՌԱՋ» (Փարիզ) – 1966 թ. սեպտեմբերի 28, 29, 30 եւ հոկտեմբերի 1, «ՀԱՅԱՍՏԱՆ» (Փարիզ) – 1966 թ. հոկտեմբերի 6, իսկ ֆրանսերէն ամփոփ թարգմանութեամբ՝ հոկտեմբերի 13: Ռուսերէն թարգմանութեամբ, փաստաթուղթը տպուել է Արեւմտեան Գերմանիայի Մայնի Ֆրանկֆուրտում լոյս տեսնող «ՊՈՍԵԻ» շաբաթաթերթում, խմբագրական նախաբանով (1966 թ. հոկտեմբերի 28ին):

Ժողովածուի համար հիմք է ընդունւում «ԱԶԴԱԿ»ի օրինակը:

ՆԱՄԱԿ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ

Կասկած չկայ, որ մեր կուսակցութեան կենտրոնական օրգան «ՊՐԱՒԴԱ»ն պաշտպանում է արդարութիւնն ու ճշմարտութիւնը, սակայն մեզ մօտ արդարութիւնն ու ճշմարտութիւնը, մասնաւորապէս «ՊՐԱՒԴԱ»ն ունեն որոշ «խորհրդատուներ», որոնք ճշմարտութեան տեղ են ներկայացնում սուտն ու անարդարութիւնը, երկերեսանիութիւնն ու խարեբայութիւնը եւ փակում են իսկական ճշմարտութեան ճանապարհը: Հայերի հանդէպ թուրք մարդակերների կատարած դաղանութիւնների եւ անմեղ զոհուածներին յուշարձան կանգնեցնելու մասին 1964 թ. 25–11ի «ՊՐԱՒԴԱ»յի խմբագրութեանն ուղարկած «Դա չի կարելի մոռանալ» իմ նամակի վսորհրդատուն եղել է Իկենիցկին: Նա գործն այնպէս ներկայացրեց, որ իբր թէ «ՊՐԱՒԴԱ»յում այս նամակի յայտնուելը կարող է հասցնել այն «բարի դրացիական» յարաբերութիւնների խզմանը, որ այդպէս երջանիկ կերպով դասաւորել էին Թուրքիայի Արտաքին Գործերի Մինիստրի ՍՍՌՄ կատարած այցի հետեւանքով: Խորհրդատուի կարծիքով, «հարկ չկայ յիշել յիսնամեայ վաղեմութիւն ունեցող պատմական իրադարձութիւնները», դա կարող է «նացիոնալիստական տրամադրութիւններ բորբոքել»:

Ինչո՞ւ այդ խորհրդատուն նոյն ձեւով չի տալիս խորհուրդ՝ դադարեցնել գերմանական դահիճների դիմակազերծումը, չէ՞ որ դա աւելի՛ հակաֆաշիստական տրամադրութիւններ է բորբոքում, սաստկացնում է միջուկային պէնք ունենալու գերմանացու ձգտումը, կամ դուցէ թուրքերի կատարած կոտորածի մասին յիշատակելն անգամ նացիոնալիստական տրամադրութիւններ է առաջացնում, իսկ հրեաների կամ լեհերի կոտորածները, որը կազմակերպեցին գերմանացիները, առաջացնում են միայն լաւ տրամադրութիւններ:

Եթէ այդ կարդի խորհրդատուները կարողանային փաստերը վերլուծել, ապա հեշտ էր համոզուել, որ ժողովուրդների ոչնչացումը օրինակուել է թուրքերից: Այդ մասին Հիտլերն ինքն է ամ-

լուղջ աշխարհով մէկ յայտարարել, երբ իր զօրքերին ողջերթ էր մաղթում եւ ուղարկում, որքան կարելի է շատ մարդ սպանել–ոչնչացնել: Այդ բոլորի պատասխանատուութիւնն ընկնում է Հիտլերի վրայ: Ձէ՞ որ թուրքերի կատարած հայկական կոտորածների համար ոչ ոք պատասխան չտուեց եւ այդ մասին ոչ ոք էլ չի յիշում:

Թուրքերի մարդակերութիւնը օրինակ հանդիսացաւ ֆաշիստներին: Մեզ մօտ իկենբերգիները նոյնիսկ հայերին արգելում են յիշել թուրքական գազանութիւնների մասին: Եթէ Առաջին Համաշխարհային պատերազմից յետոյ մեղաւորները հարկ եղած պատիժը կրէին իրենց կատարած գազանութիւնների համար՝ Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ քիչ գազանութիւններ կը լինէին: Այդ բանը չեն հասկանում որոշ խորհրդատուներ: Թուրք դահիճները հողը մաքրեցին անհաւատ դեաւուրներից, եւ դրա համար նրանց չդատապարտեցին, այլ օդնեցին, ու խրախուսեցին, թուրքերի օրինակով դերմանացիները նուաճեցին «կենսական տարածութիւններ», ինչո՞ւ դերմանացիներին պէտք է դատապարտել, իսկ թուրքերին՝ ոչ:

Սովետական Միութիւնում անցեալում եւ հիմա որոշ «խորհրդատուներ» հանդէս են գալիս որպէս թուրքական մարդակերութեան ու պանթուրքիզմի պաշտպաններ: Հարկաւոր է անողոք պայքար մղել ֆաշիզմի բոլոր տեսակների դէմ: Այդ մասին է մեր երկրի ժողովուրդների վրդովմունքը՝ 1965 թ. նացիստների հետապնդումը դադարեցնելու դերման–ֆեդերատիւ կառավարութեան որոշման դէմ: Ոչ ոք չի կարող առաջարկել՝ պատերազմ սկսել Թուրքիայի դէմ, Գերմանիայի դէմ: Բայց մի՞թէ միայն յանուն այն բանի, որ չտրամեցնենք Թուրքիայի տէր ու տիրականներին, որոնք վերջերս կիպրոսցիների արիւնով ներկեցին հողը, պէտք է մոռանալ թուրքերի կատարած գազանութիւնները, չյիշել այդ, ինքնամոռացութեան աստիճան կեղծաւորութիւն պարտադրել ժողովուրդներին, եւ դեռ լկտիաբար մեղադրել իրենց զոհերին:

Թուրքիայի արտաքին գործերի մինիստրի չարաշահական այցը «ՊՐԱՒԴԱ»յի խորհրդատուներին յիշեցրեց Վ. Ի. Լենինի ու

Ա֊թաթիւրքի ժամանակի տրադիցիան: Ես անձամբ լաւ եմ յիշում դրա իսկական իմաստը: Այն ժամանակ Ստալինը դրչի մի հարուածով լուծեց հայկական հարցը, որի վրայ պլուվ էին ջարդում Եւրոպայի քաղաքագէտները:

Երբ Բաքւում սովետական իշխանութիւն հաստատուեց, Հայաստանում ժողովուրդը ապստամբեց Դաշնակցութեան դէմ, 1920 թ. մայիսի 9ին Հայաստանի Ռեւկոմը դաշնակցական կառավարութիւնը յայտարարեց տապալուած: Ղարսում, Սարիղամիշում, Ալեքսանդրապոլում, որտեղ կենտրոնացուած էր դաշնակցական բանակի 70 տոկոսը, ղօրքերը անցան Սովետական իշխանութեան կողմը, Զանգեզուրում, Ղարաբաղում, Նոր Բայէզիտում իշխանութիւնը անցաւ սովետների ձեռքը, հարկաւոր էր դաշնակցական իշխանութիւնը լիկվիդացնել միայն Երեւանում, բայց Ստալինը անհրաժեշտ չգտաւ այդ անել:

Սովետական իշխանութեան ամրապնդման գործում Հայաստանի աշխատաւորներին օգնելու փոխարէն՝ 11րդ Կարմիր բանակն ուղարկուեց Ադրբեջանին միացնելու Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջեւանը:

Դաշնակցականներին լիկվիդացնելու փոխարէն, նրանց ներկայացուցիչներին հրաւիրեցին Մոսկուա, իբրեւ թէ Թուրքիայի ու Հայաստանի միջեւ եղած սահմանային վէճերը լուծելու: Քեմալականները ժամանակ չահեցին, ղէնք ու ոսկի ստացան ու ոսկու եւ ղէնքի ուժով դնացին «դաշնակցականների հետ վէճեր լուծելու»: Դաշնակցականներն ու բոլշեւիկները թերթերում յայտարարեցին, թէ քեմալիստների հետ գալիս են ռուս բոլշեւիկները: Բոլշեւիկների ադիտացիան դաշնակցական բանակը քայքայեց ի օգուտ «եղբայրական Թուրքիայի», առաջնակարգ ամրոցներ Ղարսն ու Ալեքսանդրապոլն ընկան առանց մի հատիկ կրակոցի, աւելի քան 10 հազար ռազմագերիներից ոչ ոք չվերադարձաւ, բոլորը զոհուեցին էրզրումում: Այդ ժամանակ Բաքու եկաւ Ստալինը, եւ Սերգօ Օրջոնիկիձէն նրան հաղորդեց հայ ժողովրդի ծանր վիճակի եւ օգնութիւն ցոյց տալու անհրաժեշտութեան մասին: «Ճընշուած ժողովուրդների բարեկամը» հանդիստ պատասխանեց «չտապելու կարիք չկայ»:

Այն ժամանակ դեռ չդիտէին, թէ Թուրքերն ուր պէտք է չարժուէին, դէպի Թիֆլի՞ս, թէ՞ Երեւան. Թուրքերը դնացին դէպի Ղարաքիլիսա, Թիֆլիսում խուճապ սկսուեց: Ժողովուրդը բողոքի ցոյց էր կազմակերպում ՌՍՖՍՌ–ի լիազօր–ներկայացուցիչների դէմ: Երբ սաստկացաւ Թուրքերի ներխուժման վտանգը, վրացական մենշեւիկների մայրաքաղաքը, այն ժամանակ Ստալինը կարգադրեց «հարկաւոր է Հայաստանը փրկել»· կարմիր բանակը օգնութեան եկաւ, փրկեց Ալարատեան հանրապետութեան մի փոքր քարքարոտ տերիտորիա, – որը 1918 թուականին Բաթումի համաձայնագրով Թուրքիան ճանաչել էր, – յանուն բազմաչարչար, տանջուած, ուժասպառ եղած հայ աշխատաւոր ժողովրդի, միաժամանակ Ղարսում, Արդահանում, Ալեքսանդրապոլում եւ այլ տեղերում Թուրք դահիճների սրին յանձնելով եւս երկու հարիւր հազար հայերի: Այն ժամանակ կար ոմն Սկաչկո, որը նոյնպէս խորհուրդ էր տալիս եւ սովորեցնում «անցեալը մոռանալ, անցեալին չվերադառնալ, ընդունել Թուրք եղբայրների թելադրած պայմանները»: Այդպիսին է բոլոր բարեկամներից ու թշնամիներից վտարուած հայ ժողովրդի բախտը: Սովետական Հայաստանի սահմանների մասին դաշնակցական կառավարութեան հետ ՌՍՖՍՌ–ի լիազօր–ներկայացուցիչ Լեդրանի կնքած պայմանագիրը դատարկ խօսք դուրս եկաւ, ամբողջ մեղքը բարդեցին սնանկացած դաշնակցականների վրայ եւ պարզուեց, որ հանրապետութեան տերիտորիան երեք անգամ փոքր է դաշնակցական Հայաստանի տերիտորիայից: Սովետական Հայաստանի պայմաններում Զանգեզուրը միայն հրաչքով մնաց այն պատճառով, որ (1921 թ.) մարտին Մոսկուայի համաձայնագրի կնքման ժամանակ այստեղ նըստած էին դաշնակցական պարագլուխները: Սակայն այս բոլորը եղան Սովետական իշխանութեան տարիներին, Լենինը որոշ բաներ դիտէր հայ ժողովրդի ծանր դործողութիւնների մասին: Այն ժամանակ «օգնեցին» Ստալինն ու Սկաչկոները, եւ նրան այնպէս էլ չվիճակուեց վերանայել անարդարութիւնները:

Մեր կուսակցութիւնը հանդիսանում է արդարութեան, արդարադատութեան (պաշտպան), իր դոյութեան հենց սկզբից կառավարութիւնը պայքարել է եւ պայքարում է աշխատաւոր ժողո-

վըրդի վայլուն ապագայի համար, ամենաարդար կոմունիզմի համար: Այժմ, երբ ամբողջ աշխարհում օտար իմպերիալիստական իշխանութիւնները զանթում են ժողովուրդներ ու տերիտորիաներ, երբ պետականութիւն են ձեռք բերել միլիոնաւոր ժողովուրդներ, որոնք նախկինում երբեք այն չեն ունեցել, միայն հայ ժողովուրդը ցրուած աշխարհով մէկ, իսկ հայկական հողերը աւերուած քաղաքներով ու գիւղերով, ամայի վիճակում մնացել են Թուրքիայի տերիտորիալ ամբողջութեան մէջ: Միայն հայե՞րը իրաւունք չունեն յիշեցնել իրենց զոհերը ու յուշարձան կանգնեցնել: Մինչեւ ե՞րբ, մի՞թէ յիսուն տարուայ ընթացքում հնարաւոր չէր լուծել հայկական հարցը:

Ենթադրենք, թէ Թուրքական կառավարութեան հետ հնարաւոր չէ խաղաղ ճանապարհով լուծել տերիտորիալ հարցեր, թէեւ դրան հաւատալ չի կարելի, հարցի ճիշտ դրման դէպքում Թուրքերի հե՛տ էլ կարելի է համաձայնութեան գալ, արդարացի ձեւով, առանց խաբէութեան, բայց ինչո՞ւ դարեր ի վեր հայերով բնակուած հայ ժողովուրդի ներքին հողերը չեն միացուած հայկական ՍՍՌ-ին: Հիմնական ժողովրդի միաւորումը կոմունիզմի կառուցման գործում մի նոր վիթեան կը հանդիսանայ էկոնոմիկայի, կուլտուրայի զարգացման համար: Կը վերացուի աւելորդ բախումները եղբայրական ժողովուրդների միջեւ, կը ստեղծուի Անդրկովկասի ժողովուրդների իսկական, այլ ոչ թէ կեղծ իրաւահաւասարութիւն, երբ հայ ժողովուրդն առանց որեւէ անհրաժեշտութեան մոնում է ոչ թէ հանրապետութեան կազմի մէջ, ինչո՞ւ չի վերացուում այդ աղաղակող անարդարացիութիւնը, մի՞թէ մեր կուսակցութիւնն ու կառավարութիւնը այդքան անզօր են եւ չե՞ն կարող վերացնել դա: Քաոներորդ համագումարի նախօրեակին գրուած իմ նամակին Ն. Ս. Խրուշչովը պատասխանեց, որ կենտրոնական կոմիտէն այժմ չի կարող զբաղուել այդ հարցով: Մինչեւ ե՞րբ:

Ղրիմը յանձնեցին ՈՒՍՍՌ-ին, Գոլոդնայա Ստեպը, որը համարեա մէկ ու կէս (անգամ) մեծ է Հայկական ՍՍՌ-ից տրուեց Ուզբեկստանին եւ այլն: Իսկ ինչո՞ւ հայերին չի կարելի վերա-

մխաւորել հարազատ ժողովրդի հետ՝ իրենց հանրապետութեան սահմաններում:

Չնայած Պան–թուրքիզմի դաղափարախօսութեանը, թուրք ժողովուրդը սովորական ժողովուրդ է, տարբերում է բարին չարից, յանցագործութիւնն ու մարդակերութիւնը մարդկայնութիւնից, հայերի կոտորածը կազմակերպել էր ոչ թէ թուրք ժողովուրդը, այլ պանթուրքիզմը, որոնք հիմա էլ թուրք աշխատաւորների լեանքը թունաւորում են դառնացական պատրանքներով, նախնիների հայրենիքի թուրանական ֆեդերացիայի մասին, 50 միլիոն մուսուլմաններին կոմունիզմի լծից ազատելու մասին եւ այլն: Առանց Պան–թուրքիզմի դաղափարախօսութեան վերացման չի կարող բարեկամութիւն ու եղբայրութիւն լինել ՍՍՌՄ–ի ժողովուրդների ու Թուրքիայի միջեւ: Թուրքերը պէտք է իմանան, որ աշխարհի բոլոր ժողովուրդները միատեսակ իրաւունք ունեն ապրելու արեւի տակ, քեմալէստները դրաւեցին ոչ միայն Արեւմտահայաստանը, այլեւ մեր վրից փաթաթեցին Ղարսի ամօթալի պայմանագիրը, դրաւեցին Ղարսն ու Իգդիրը, որով թուրք դահիճները թուրք ժողովրդի վրից փաթաթեցին պատմական անարդանք՝ հայ ժողովրդի եղեռնը, կատարեցին հրէշաւոր ոճրագործութիւններ, որոնք կարելի է համեմատել հիտլերեան մարդակերների յանցագործութիւնների հետ: Վաղ թէ ուշ, իր հայրենի հողից արտաքսուած ժողովուրդը պէտք է վերադառնայ իր հայրենիքը: Դա չպէտք է կատարուի արիւնհեղութեամբ: Բոլոր իմպերիալիստները, թէեւ ոչ առանց ցաւի, ստիպուած են հեռանալ իրենց կողմից գաւթուած ուրիշի տերիտորիաներից:

Թուրքերը չեն կարող բացառութիւն կազմել: Հարցը վաղուց լուծուած կը լինէր, եթէ կուսակցութիւնն ու կառավարութիւնը ղբաղուէին դրանով, բայց չդիտես ինչու նրանց չի հետաքրքրում հայերի վիշտն ու տառապանքը:

Լուծուած են մի չարք փոքր եւ ստրկացուած ազգերի հարցերը: Սովետական կառավարութիւնը իր հեղինակաւոր խօսքն է ասում յօդուտ արդարութեան եւ յօդուտ օտարերկրեայ գաւթիչներից տուժած ժողովուրդների, իսկ ե՞րբ պէտք է իր կառավարութիւնը իր խօսքն ասի յօդուտ բազմաչարչար հայ ժողովրդի:

Մեր կառավարութիւնը ե՞րբ կը հասկանայ ժողովրդի ակնկալութիւնները եւ կը դադարի լսել «խորհրդատուներին»:

Հայկական Եղեռնի 50ամեակի կապակցութեամբ, աշխարհի ժողովուրդները պատրաստւում են դա նշել որպէս մարդկային պատմութեան մէջ տեղի ունեցող ամօթալի երեւոյթ: Պէտք է ենթադրել, որ ՄԱԿ–ն էլ կը նշի: Թուրքերը լաւ են հասկանում, թէ ինչ է նշանակում: Միայն չգիտես ինչու մեր կառավարութիւնը եւ «ՊՐԱԽԴԱ»յի խորհրդատուները Թրքական կառավարութեան բեմման մէջ նկատել են ՍՍՌՄ–ի (Հանդէպ) Թուրքական տէր ու տիրականների եղբայրական զգացումների յորդումը: Թուրքերը Կիպրոսում փաղուեցին իրենց աւանտիւրայի մէջ: Հիմա էլ Եղեռնի յիշատակը: Վերջերս նրանք քարուքանդ են արել սովետական պաւիլիոնը, կազմակերպել են հակասովետական խռովութիւններ եւ յանկարծ 180 աստիճանի շրջադարձ, «Առեւտրի մինիստրի այցը», չատ վեր հարկաւոր չէ հասկանալու համար, որ այդ քայլը խարէութիւն է, դիւանագիտական ճարպիկ խաղ, կանխամտածուած կերպով ժամանակ չահելու (համար): Ինչպէս նաեւ Կիպրոսի եւ այլ հարցերում ՆԱՏՕ–ի գծով իրենց վրայ ճնշում գործ դնելու միջոց:

Ափսո՛ս որ մեր կառավարութիւնը հեչտութեամբ ենթարկւում է ուխտադրուժ դիւանագիտութեան եւ նորից, քանի՛երորդ անդամ, դեկլարացիա անում «տերիտորիալ ամբողջութեան մասին»:

Հեռաւոր Հնդկաստանում եւ (Պարագուայո՞ւմ) գիտեն, որ Թուրքերը հայերին արտաքսեցին ամենաւայրագ ձեւով, որ հայերը պէտք է վերադառնան իրենց հայրենիքը, այլ ոչ թէ Թուրքերի տերիտորիալ ամբողջականութիւնը:

Ելնելով վերը շարադրուածից, յանուն Մարքսիզմ–Լենինիզմի պաշտպանների՝ անհրաժեշտ է – առաջին – Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի, Շահումեանի եւ Լեռնային Ղարաբաղի հայկական շրջանները միացնել Հայկական ՍՍՌ–ին, այդ վաղուց հասունացած հարցը աննպատակ կերպով ձգձգւում է, որպէս մեր կառավարութեան ազգային քաղաքականութեան մեծ թերութիւն: Այդ հարցը քննարկում չի պահանջում, այլ ենթակայ է անյապաղ լուծման: Երկրորդ – Ղարսն ու Արդահանը պէտք է միացուի Հայ–

կական ՍՍՌ–ին, եւ ոչ ունենալով դէպի ծով – որպէս դաշնակցական Հայաստանից անաղնիւ կերպով խլուած տերիտորիաներ: Հարցը վաղուց լուծուած կը լինէր խաղաղ ճանապարհով, եթէ մեր կառավարութիւնը դրանով զբաղուէր:

Երրորդ – Հոկտեմբերեան Սոցիալիստական ռեւոլիւցիայի մեծ դաղափարներով լուսաւորուած մեր դարում, դաղութատիրութեան եւ ժողովուրդների հարստահարութեան լիկվիդացման դարում, պէտք է իրենց հայրենիքը վերադառնան ամբողջ աչխարհով մէկ սփռուած հայերը: Նրանք պէտք է Հայկական ՍՍՌ–ի կազմի մէջ ունենան իրենց տերիտորիան:

Մինչեւ 1915 թուականը Թուրքիայում կային 3 միլիոն հայեր: 1927 թ. Թուրքիայի բնակչութիւնը կազմում էր 12,5 միլիոն: Բնակչութեան համար 767 հազար քառակուսի կիլոմետր տերիտորիայից հայերին բաժին է ընկնում մօտաւորապէս 200 հազար քառակուսի կիլոմետր: Պատմական Հայաստանն ունէր մինչեւ 360 հազար քառ. կլմ.: Արտասահմանում գտնուող հայերը պէտք է Հայկական ՍՍՌ–ին միացած ստանան թէկուզ 70–90 հազար քառ. կլմ.՝ Մուշ, Վան, Տրապիզոն: Մինչեւ 3,5 միլիոն հայեր ապրում են ՍՍՌՄ–ում: Մեր կառավարութիւնը պէտք է հանդէս գայ ի պաշտպանութիւն այդ ժողովրդի՝ ոչ միայն որպէս սոցիալիստական պետութիւն, այլ եւ որպէս ՄԱԿ–ի անդամ, եւ որպէս ժողովրդի համար պայքարող կառավարութիւն, դրան պէտք է հասնել ՄԱԿ–ի միջոցով:

Չորրորդ – Ինչպէս չկան եւ չեն կարող սահմանափակումներ լինել ժողովուրդների հանդէպ նացիստների մարդակերային քաղաքականութեան մերկացման գործում, այնպէս էլ չպէտք է (լինեն) դրանց թուրք նախորդների մերկացման ու դատապարտման սահմանափակումներ: Բոլոր դերմանացիները դիտեն, թէ դերմանացի մարդակերները ինչպիսի յանցագործութիւններ են կատարել, սակայն ոչ թուրքերը, ոչ էլ ուրիշ ժողովուրդները չդիտեն Պան–թուրքիզմի յանցագործութիւնների մասին:

Հայերի դահիճներին յուշարձաններ են կանգնեցնում – Թալէաթ փաշա եւ ուրիշներ: Նրանց դաղանութիւնները արդարացնում են կեղծ փաստեր հրապարակելով: Հարկաւոր է վճռակա-

նապէս իկենիցկիների նման խորհրդատուներից հրաժարուել, որոնք փակում են ճշմարտութեան ճանապարհը: Թոյլատրել անսահմանափակ քանակութեամբ հրապարակել Պան-Թուրքիզմի մարդակերային քաղաքականութիւնն ու պաղանութիւնները մերկացնող փաստեր: Պէտք է «ՊՐԱԻԴԱ»յում եւ այլ հրատարակութիւններում տպագրուեն իմ (յօդուածը) եւ նման յօդուածներ:

Պէտք է յուշարձաններ կանգնեցուեն պաղանային քաղաքականութեան զոհերի յիշատակին, որպէսզի երբեք պաղանութիւններ չլինեն:

ՍՄԿՊ-ի անդամ Ե. Հ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Երեւան – 15, Միասնիկեանի փող., բնակարան 4
Հեռախօս 6-85-54

Ե.

ԱՆԱՆՈՒՆ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԽՕՍՔԸ 1917–1921 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՄԱՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Փաստաթուղթը առաջին անգամ հրապարակուել է Սիմոն Վրացեանի «ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ» յուշերի Զ. հատորում 1967 թուին, իբրեւ յաւելուած («Մի Թուղթ»): Վրացեանը հաղորդում էր, թէ «Թուղթը» իր ձեռքն է ընկել մի քանի տարի առաջ, թէ Հայաստանից բերողները վկայում են, որ դա երեւանում «գաղտնի ձեռքից ձեռք է անցնում բազմագրուած»: Ասում էր նաեւ, թէ առաջին էջերը բացակայում են: Վրացեանը իրաւացիօրէն բացառիկ նշանակութիւն էր տալիս այդ փաստաթղթին: Եւ, յիրաւի, մինչեւ հիմա էլ այդպիսի ծաւալով ու մակարդակով պատմագիտական հետազօտութիւն չի ստեղծուել Հայաստանում՝ ընդարկելով ժամանակաշրջանի վերաբերեալ: Ինչպէս պարզում է Վրացեանի հաղորդումից, հայաստանեան պատմաբանի վերլուծական ու ինքնապաշտպանական խօսքն ուղղուած է ակադեմիկոս Աշոտ Յովհաննիսեանին, որը աւելի առաջ իր պաշտպանութեան տակ է առել մի այլ «պատմաբանի»՝ Բադալեանի արտայայտած գրաւոր դրոյթները, հակադրուելով սոյն փաստաթղթի հեղինակի նոյնպէս գրաւոր դրոյթներին:

Հայաստանեան պատմաբանը «անանուն» է միայն մեզ համար: Բայց նա չի կարող անյայտ լինել իր միջավայրում ու պաշտօնակիցներին: Որովհետեւ խորհրդային երկրում տպուող ու չտպուող

ամէն մի յօդուած սովորաբար արձանագրւում է շատ ու շատ անգամ եւ ոչ ոք չի կարող խուսափել այդ պարտադիր գրանցումներից: Իսկ փաստաթղթում յիշատակուող կամ ակնարկուող յօդուածները հենց այդպիսի պաշտօնական մաղերից անցնող նիւթեր են: Այսպէս թէ այնպէս, առայժմ անյայտ է ներկայացուող փաստաթղթի հեղինակը՝ հասարակութեան համար:

Միանգամայն դժուար է որոշել եւ փաստաթուղթն ստեղծուելու թուականը: Ֆանզի հակասական տուեալների ենթ հանդիպում հենց բուն բնագրում: Առաջին իսկ էջում կայ մի այսպիսի՝ «թէ չէ 40 տարուայ ընթացքում» արտայայտութիւն: Եթէ դա բառացի ընդունենք՝ պէտք է կանգ առնել 1960 թուականի վրայ: Բայց կարող է եւ եղածը ընդհանուր բնոյթ կրող բացականչութիւն լինել: Մի այլ տեղ գրուած է· «Ինչպէս նկատել է Ա· Միկոյեանը պատմաբանների հետ ունեցած – այս տարուայ մարտին (1956 թ·) – զրոյցի ժամանակ»: Այդ հաշուով՝ յետ պիտի գնալ մինչեւ 56 թուականը: Սարդարապատի հերոսամարտի առիթով ասւում է, թէ «անցել է 42 տարի» Այս դէպքում էլ պէտք է վերադառնալ 1960 թուականը: Ո՞րն է ճիշտը: Անյայտ է: Մինչդեռ բոլոր դէպքերում ճիշտ թուականը խիստ կարեւոր է՝ հայաստանեան հասարակական խմորումների իսկական ընթացքը յստակօրէն պատկերացնելու, ամէն ինչ իր որոշակի ու անփոխարինելի տեղը դնելու համար:

Անանուն պատմաբանի հետազօտութիւնը տպուել է նաեւ «ԱԶԴԱԿ» թերթում 1967 թ· օգոստոսին, ինչպէս եւ «ԱԼԻՔ»ում, որի նախաձեռնութեամբ էլ լոյս տեսաւ առանձին գրքով:

ՄԻ ԹՈՒՂԹ

... Միթէ պարզ չէ՞, որ ճշմարտութեան քարոզը դերիշխող դառնալով մեր պատմագիտութեան, դրականութեան, մամուլի մէջ, չափազանց անելանելի կացութեան մէջ կը դնի արտասահ-

մանում «մեր թշնամիներին», կը խլի նրանցից ճշմարտութեան քարոզի մենաշնորհը, կարագացնի նրանց վերջնական անանկացումը: Թէ չէ 40 տարուայ ընթացքում մենք, երեւի, միլիոն անդամ թաղել ենք մեր այդ «թշնամիներին», բայց նրանք միլիոն անգամ յարութիւն են առել, եւ այսօր էլ մի ուժ են ներկայացնում, որի դէմ հարկ է լինում կռուել:

Կռւում ենք, բայց Բադալեանի դէնքերով, ատի եւ զրպարտութեան դէնքերով: Իսկ պատմութեան մէջ յայտնի չէ մի դէպք, որ քաղաքական կուսակցութիւնը մահանայ զրպարտութեան հետեւանքով: Ընդհակառակը, հենց մեր սուտն է այն բալասանը, որ բուժում է «մեր թշնամիների» վէրքերը եւ աւելի ուժ տալիս դրոհելու մեզ վրայ: Այս է ճշմարտութիւնը, որի առաջ մենք մեր աչքերը փակել ենք եւ չենք ղղում, որ Բադալեանի ստերով մենք, փաստօրէն, զբաղուած ենք ինքնասպանութեամբ:

Այժմ Ձեր նկատողութիւնների մասին. ըստ էութեան, Դուք իմ «հիմնական սխալը» համարում էք այն, որ ես իբր թէ «չրջանցում եմ» 1917–18 թ.թ. իրադարձութիւնները եւ ամէնից առաջ մեր «դարաչրջանի ելակէտային իրողութիւնը, Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը»:

Նախ ի՞նչ ասել է «չրջանցել ենք Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը»: Ճիշտ է, ես չեմ նկարագրել Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը, թէ ինչպէս եւ ինչու տեղի ունեցաւ այն, չեմ բնութագրել նրան իբրեւ «մեր դարաչրջանի ելակէտային իրողութիւն»:

Իմ յօդուածը պատասխանում է Բաթումի դաշնագրին նուիրուած Բադալեանի յօդուածին. ուստի իմ խնդիրը չէր Հոկտեմբերեան Յեղափոխութեան համաշխարհային-պատմական նշանակութիւնը բացայայտելը: Բայց ես Հոկտեմբերը յիշել եմ եւ մատնացոյց արել իբրեւ պատմական իրողութիւն, որի հետեւանքով ստեղծուել է Սովետական Ռուսաստանը, ընդունուել էին դեկրետներ հողի, հաշտութեան մասին եւ այլն, եւ ցոյց տուել յեղափոխութիւնից յետոյ ռազմաճակատում եւ թիկունքում ստեղծուած իրադրութիւնը, – բանակի զօրացրում, ճակատի փլուզումը եւ

մերկացումը, որից օգտուեցին գերմանա–թուրքական իմպերիալիստները եւ ներխուժեցին երկրի խորքերը: Ուրիշ ի՛նչ պիտք է յիշենք Հոկտեմբերի մասին իմ յօդուածի կապակցութեամբ: Ի՞նչ նկատի ունէք, պարզ չէ:

Ասում էք, որ ես իրը թէ «պանդ եմ արել» 1917–18 թ.թ. իրադարձութիւնները եւ կոնկրետացնում, որ «Դաշնակցութիւնը եւ Անդրկովկասեան բլոկի միւս կուսակցութիւնները» վճռականապէս անցան «մեր թշնամիների» բանակը, «ակսուեց, – չարունակում էք, – գործողութիւնների չղթայ, որի օղակներից մէկը հանդիսացաւ Բաթումի դաշնագիրը»: Հայաստանի անկախութեան հրըչակման կապակցութեամբ Դուք գրգռեալ մատնացոյց էք անում, որ «մեծարելով գարերի երազանքները, պատմաբանն իրաւունք չունի չրջանցելու գէթ մէկ տարուայ պատմական իրողութիւնների կապակցութիւնը», այսինքն գրգռեալ նկատի ունէք 1917–18 թ.թ. իրադարձութիւնների կապակցութիւնները: Յօդուածս չծանրաբեռնելու մտահոգութիւնն է ինձ ստիպել մանրամասնութիւնների մէջ չմտնել: Ակնարկուած ժամանակաշրջանի պատմական իրողութիւնների կապակցութիւնը ամենեւին չի հակասում, այլ, ընդհակառակը, աւելի քան կարող է հաստատել մեր տեսակէտի իրաւացիութիւնը եւ Բաքվեանի կարծիքի անհիմն լինելը:

Իսկապէս, այդ մէկ տարուայ պատմական իրողութիւնների կապակցութիւնն ի՞նչ է ցոյց տալիս: Այն, որ Ռուսաստանում սովետական իշխանութեան հռչակուելուց յետոյ Անդրկովկասում չարունակում էր գործել տակաւին ժամանակաւոր կառավարութեան կողմից սահմանուած քաղաքական–պետական վարչակարգը...

Ամբողջ Անդրկովկասում միայն Բաքու քաղաքում հռչակուեց սովետական իշխանութիւն, իսկ մնացած մասերում՝ ազգայնական կուսակցութիւնների բլոկի առաջարկով հռչակուեց Սէյմը, որը ե՛ւ միակ իշխանութիւնն էր ներկայացնում երկրամասում: Իր բնոյթով Սէյմը մենշեւիկեան–մուսաւաթական հակասովետական իշխանութիւն էր, որտեղ Հայաստանի ներկայացուցիչների ձայնը ոչ մի վճռական դեր չէր կարող խաղալ – 112 դեպուտատից ընդ–

ամէնը 27 դաշնակցական –: 1917 թ. Հոկտեմբերից մինչեւ 1918 թ. կէսերը Լենինը քնութագրել է որպէս սովետական իշխանութեան յաղթական երթի ժամանակաշրջան: Բայց այն փաստը, որ Անդրկովկասում սովետական իշխանութիւնը չյաղթեց, այլ՝ աղդայնական ուժերը, որ Հայաստանում, Վրաստանում եւ Ադրբեջանում – բացի Բաքուից – իշխանութեան դլուխ անցան ոչ թէ բոլշեւիկները, այլ աղդայնական կուսակցութիւնները, – այս պատմական իրողութիւնը ինչի՞ մասին է վկայում: Միայն այն մասին, որ երկրամասում մասսաների վրայ աւելի մեծ աղդեցութիւն ունէին աղդայնական կուսակցութիւնները և ոչ թէ բոլշեւիկները, մանաւանդ Հայաստանում: Մինչդեռ Բաղալեանը ցանկութիւնը հրամցնում է ընթերցողին որպէս իրականութիւն, երբ իր յօդուածի հենց առաջին պարբերութիւններում ճղնում է ընթերցողի մէջ ստեղծել տպաւորութիւն, թէ Ռուսաստանի օրինակով ամբողջ երկրամասում ծաւալուել էին իբր թէ բանուորա-գիւղացիական յեղափոխութեան շարժումներ եւ նրանք իշխանութեան տէրն էին արդէն, բայց նացիոնալիստները միայն իրենց ուժերով չէին կարողանում ճնշել այդ շարժումները, ուստի եւ հրաւիրում էին Թուրքերին, դերմանացիներին, Անտանտային, ԱՄՆ-ին, որպէսզի աչխարհի բոլոր իմպերիալիստների սուիններով ճնշեն այդ շարժումները եւ երկրամասում իշխանութիւնն իրենց ձեռքը վերցնեն կամ իրենց իշխանութիւնը հաստատեն նաեւ Բաքում, որի համար էլ դաշնակցականները իբր թէ «գործարքի» մէջ մտան Թուրքերի հետ, «ռազմա-քաղաքական» դաչինք ստեղծեցին հայ ժողովրդին եւ Բաքուի պրոլետարիատին ընաջնջելու համար: Կարճ ասած, 1917–18 թ.թ. մէկ տարուայ իրադարձութիւնների կապակցութիւններին ակնարկելով, Դուք ուզում էք ասել, որ ես չըրջանցել եմ Անդրկովկասում իբր թէ ստեղծուած յեղափոխական *սիտուացիան*:

Նախ՝ այդ *սիտուացիան* իրականում չստեղծուեց, այլ ասպէս սովետական կարգեր կը ստեղծուէին երկրամասում եւ ոչ թէ Մէյմ: Երկրորդ՝ չստեղծուեց այդ *սիտուացիան* այն պատճառով, որ, բացի Բաքուից, երկրամասի մնացած մարզերում

բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը գիւղացիութիւնն էր, որտեղ բոլշեւիկների ազդեցութիւնը համեմատաբար թոյլ էր, որտեղ լուծող էին ազգայնական կուսակցութիւնները: Ցետոյ այն պատճառով, որ, ի տարբերութիւն կենտրոնական Ռուսաստանի, այդ ծայրամասում առաջնահերթ պահանջ էր ազգային հարցի լուծումը, որի համար սակայն տասնեակ տարիներ ազատագրական պայքար էր մղել ժողովուրդը: Հոկտեմբերեան Յեղափոխութեան լոզունգներից Անդրկովկասի ժողովուրդների սրտին առանձնապէս հարազատ ու մօտիկ էր ազգերի ինքնորոշման իրաւունքի մասին լոզունգը: Ազգային պետականութեան հասնելու հետ սերտօրէն առընչւում էին նաեւ սոցիալական ազատագրման յոյսերը: Դարերով ճնշուած ու հարատահարուած, օտար լծից ազատագրուելու ձգտող ժողովուրդների հայեցակէտից ազգային եւ սոցիալական ազատագրումները սերտօրէն միահիւսւում եւ միասնաբար էին հանդէս գալիս, մէկը պայմանաւորուած էր միւսով: Բայց քանի որ շարունակւում էր Առաջին Համաշխարհային պատերազմը, իսկ ռազմաճակատը մերկանում էր ռուսական բանակի հեռանալով, որի հետեւանքով Թուրքական արիւնարբու ագրեսիայի վտանգը դամոկլեան սրի նման կախուած էր մանաւանդ հայ ժողովրդի դըլխին, ուստի եւ նրա համար ֆիզիքական գոյութեան պահպանման հարցը գերիշխող նշանակութիւն էր ստանում միւս հարցերի նկատմամբ: Այդ է պատճառը, որ սեփական բուրժուազիային կործանելու լոզունգը, որ յամառօրէն պրոպագանդում էին բոլշեւիկները այդ կրիտիկական օրերին, մեծամասնութեան կողմից ընկալւում էր որպէս, մեղմ ասած, ոչ հայրենասիրական: Ազգային կուսակցութիւնները գարձրացրել էին ազգային ազատագրութեան դրօշը, որ մատչելի էր ամէնքի ըմբռնումներին, արձագանքում էր հայերի դարաւոր իդէալներին: Հայ բոլշեւիկների ճակատագրական սխալը հենց այն էր, որ ղեկավարւում էին կենտրոնական Ռուսաստանի չարլոնով՝ անտեսելով երկրամասի այդ իւրայատկութիւնը:

Ներանք չհասկացան, որ ազգային դրօշը պարզելով՝ կարող էին այդ օրերին իրենց յետեւից տանել հոծ մասսաներին եւ հաս-

նել սովետական կարգերի հաստատմանը նաեւ ամբողջ երկրամասում:

Այդ սխալը ըմբռնուեց եւ ուղղուեց առնուազն երկու տարի ուշացումով:

Կասկածից վեր է, ինչպէս նկատել է Ա. Միկոյեանը պատմաբանների հետ ունեցած – այս տարուայ մարտին (1956) – զրոյցի ժամանակ, որ եթէ Կովկասի բոլշեւիկները ժամանակին հասկացած լինէին եւ գնային այն ուղիով, որ նշում էր Շահումեանը կուսակցութեան Զ. համագումարից վերադառնալուց յետոյ – 1917 թ. աշնանը –, ապա, ամենայն հաւանականութեամբ, Անդրկովկասի ժողովուրդները եւ մասնաւորապէս Հայաստանը չէին ապրի 1918–21 թ.թ. ողբերգութիւնը:

Ի՞նչ է առաջարկել Շահումեանը: Պարզւում է, որ համագումարից վերադառնալուց յետոյ նա պահանջում էր, որ Կովկասի բոլշեւիկները պաշտպանեն ազգերի ինքնորոշման լոզունգը, այսինքն՝ ճանաչեն պետական անկախութեան իրաւունքը Անդրկովկասի երեք հիմնական ազգերի համար – հայերի, վրացիների, ադրբեջանցիների, – հակառակ դէպքում – ասել է նա – հնարաւոր է, որ իրադարձութիւնները կը զարգանան հենց այդ ղրօշի ներքոյ, նախաձեռնութիւնը կը մնայ ազգայնական կուսակցութիւնների ձեռքում, բոլշեւիկները կը մնան չարժումից դուրս: Պարզւում է, որ Շահումեանի դէմ դուրս են գալիս Մախարաձէն, ինքը՝ Միկոյեանը եւ մերժում են Շահումեանի առաջարկութիւնը, որդեգրում կենտրոնական Ռուսաստանի շաբլոնը, որի հետեւանքով է՛ւ մեկուսանում են փաստօրէն ժողովրդից: Հարց է առաջ գալիս, ո՞վ պէտք է պատասխան տայ այս ճակատագրական սխալի համար: Պարզ է, որ իրենք՝ Անդրկովկասի բոլշեւիկները: Ազգայնական կուսակցութիւններից, մասնաւորաբար հայ դաշնակցականներից ի՞նչ կարող է պահանջել մարքսիստ պատմաբանը: Իրենց դասակարգային բնութեան հաւատարիմ, նրանք չէին պայքարում սովետական իշխանութեան համար, բայց նկատի ունենալով արտաքին վտանգի սպառնալիքները, նրանք իրենց զինուած ուժերի կէսը, Ռոստոմի միջամտութեամբ եւ համաձայնութեամբ, դրին Բաքուի սովետական իշխանութեան տրամադրու-

թեան տակ, թուրք մուսաւաթական դաւադրութիւններից եւ ղինուած ապրեսիայից կոմունան պաշտպանելու համար:

Փաստ է, որ կոմունան պաշտպանող հիմնական ղինուած ուժերը դաշնակցական ղինուած ուժերն էին – 16·000 կռուողից, ասում է Շահումեանը, 200 հոգի միայն Պետրովի բոլշեւիկեան ջոկատն էր, մի այդքան էլ Ամիրեանի պարտիզանական ջոկատը եւ մի 3·000 հոգի էլ այլ կռուողներ:

Սովետական Ռուսաստանից ղինուած օգնութիւն չստացուեց, կովկասեան ռազմաճակատը լքող ռուսական զօրամասերը չմնացին նոյնիսկ կոմունան պաշտպանելու համար: Ո՞ւր էին Կովկասի բոլշեւիկները: Ո՞ւր էր հենց Բաքուի պրոլետարիատը, որը, Բադալեանի ասելով, իր հետ ունէր ողջ երկրամասի բանուորներն ու գիւղացիները, որոնք գնում էին բոլշեւիկների յետեւից· ինչո՞ւ այդ միլիոնաւոր յեղափոխական բոլշեւիկների բանակից մի 50·000 մարդ էլ զէնք չվերցրեց թուրքական բանակի յարձակումից Բաքուի կոմունան պաշտպանելու համար, որ յոյսը դրել էր դաշնակցական փոքրաթիւ ուժերի վրայ: Իսկ երբ դաշնակցական զօրքերը պարտուեցին, ապա կոմունայի պաշտպանութեան մեղքը հանգիստ խղճով փաթաթում էին դաշնակցականների վրայ: Ո՞ւր էր ընկեր Հ ..... եանը[1], սովետական իշխանութեան համար կեանք գնող բոլշեւիկեան բանակը, երբ երկրամասում յեղափոխական *սիտուացիա* կար եւ այդ *սիտուացիայի* հրամանատարներն էին բոլշեւիկները: Պարզ ասած, բոլշեւիկները չունէին այդպիսի բանակ: Նրանք տակաւին գեներալներ էին առանց բանակի, դրա համար էլ ապաւինել էին դաշնակցական Համազասպի, Ազեփխովի, Ռոստոմի ունեցած 12–13·000 ղինուորներին, 50 թնդանօթներով:

Հենց Զեզ հետ տեղի ունեցած զրոյցի ժամանակ Միկոյեանը խոստովանել է, որ թուրքերի դէմ դաշնակների մղած պատերազ-

---

1) Եթէ ճիշտ է, որ զրուածքն ուղղուած է ակադեմիկոս Ա.Ս. Ծովհաննիսեանին, ինչ որ կռահելի է բովանդակութիւնից, ապա այստեղ կէտերի տեղ տառեր դնելիս ստացւում է «Հովհաննիսեանը» անունը:

մը երկարացրեց կոմունայի կեանքը. այլապէս կոմունան չէր ապրի մինչեւ յուլիսի վերջը: Ինչո՞վ էին զբաղուած հայ բոլշեւիկները այդ կրիտիկական օրերին: Զեղ քաջ յայտնի է, որ նրանք եռանդուն կերպով պրոպագանդում էին հայկական զօրամասերին դաշնակցութեան, հակապատերազմական կոչեր էին տարածում, անիծում էին հայկական «բուրժուական նացիոնալիզմը», «անկախ» Հայաստանի գաղափարը, կոչ անում բանուորներին եւ գիւղացիներին՝ կոտորելու սեփական բուրժուաներին, եղբայրանալու Թուրք ասկեարների հետ եւ այլն, եւ այլն: Սա կոչւում է կազմալուծել ռազմաճակատը եւ թիկունքը, ճանապարհ հարթել Թուրք ագրեսորների համար դէպի Բաքու՝ կոմունան խեղդելու համար: Սովետական իշխանութեան եւ մասսաների անունից երդուելը քիչ է, հարկաւոր էր գործնական պայքար այդ մասսաների կենսական շահերի համար, սովետական իշխանութեան համար: Իսկ ամենաեւ պայքարը դրա համար Թուրքական ագրեսիայի կանգնեցնելն էր: Դրա համար պէտք էր համալրել հայկական կորպուսի շարքերը եւ ո՛չ թէ կազմալուծել բարոյազրկող դեմագոգիայով, որով զբաղուած էին այդ ահեղ օրերին հայ բոլշեւիկները: Դուրս է գալիս, որ բոլշեւիկները այդ կազմալուծող գործունէութեան համար էլ պատասխանատու են համարում դաշնակներին: Նրանք «մեղաւոր» են, որ ամբողջ երկրամասում իշխանութիւնը չեն յանձնել բոլշեւիկներին:

Մոռանում են, որ Բաքուն չկարողացան պահել, էլ ո՞ւր մնաց ամբողջ երկրամասը: Դաշնակցական Վրացեանը մի տեղ, խօսելով ստեղծուած այս իրողութեան մասին, ասում է. «Ի հարկէ, Դաշնակցութիւնը դէմ չէր լինի, եթէ հանդէս գար մի աւելի կարող ուժ, որ աւելի հմուտ ձեւով կարողանար կազմակերպել պայքարը Թուրքական ագրեսիան կասեցնելու եւ երկիրն ու ժողովուրդը կոտորածից ու կողոպուտից փրկելու համար: Բայց հրապարակի վրայ չկար այդպիսի մի այլ ուժ: Ծանրութիւնն ընկած էր դաշնակցականների տկար ուսերին»: Ցիշենք եւ այն անառարկելի իրողութիւնը, որ մասնաւորապէս հայ բոլշեւիկները ոչ մի տեղ այնպէս իրենց ապահով չեն զգացել, ինչպէս դաշնակցականների տիրապետութեան ժամանակ՝ 1918–1920 թ. մայիս ընկած ժամա-

նակաշրջանում: Հայաստանում դաշնակցական իշխանութիւնը դոյութիւն է ունեցել ընդամէնը երկու եւ կէս տարի: Երկու տարուայ ընթացքում ոչ մի բոլշեւիկի քիթ չի արիւնոտուել, նրանք ազատ ելոյթներ են ունեցել, մինչեւ իսկ բանավէճեր դաշնակցականների հետ՝ հրապարակային ժողովներում, հրատարակել են իրենց թերթերը, աշխատել են եւ դրել են Դաշնակցութեան դէմ, քաղաքական ապաստան են գտել Հայաստանում՝ փախչելով Բաքուից, Հիւսիսային Կովկասից եւ Վրաստանից:

Ձերբակալութիւնները սկսել են միայն 1920 թ. մայիսեան դէպքերից յետոյ, իսկ դնդակահարութիւնների եւ առաջին սպանութիւնների օրինակը տուել են իրենք բոլշեւիկները: Սա՛ է պատմական իրողութիւնը, որ ես իրրեւ թէ «չրջանցել եմ» եւ կարծես թէ մի ինչ որ դրական բան կարող է ասել Բաղալեանի տեսակէտների օգտին: Իրականում, որքան մանրամասնութիւնների մէջ ընկնենք եւ որոնենք 1917–18 թուերի եւ հետագայ տարիների իրողութիւնների մէջեւ կապակցութիւնները, այնքան աւելի անխոցելի կը դառնան իմ եզրակացութիւնները, իմ տեսակէտը, որի հետ Դուք համաձայն չէք: Կրկնում եմ. 1917–18 թ. իրադարձութիւնների բոլոր տեսակի կապակցութիւններից քխում են հետեւեալ ճշմարտութիւնները.

Ա.— Այդ ժամանակաշրջանում յեղափոխական *սիտուացիայի* համար երկրամասում, անմիջական սեփական կարդեր հաստատելու տեսակէտից, (հող) չկայ: *Սիտուացիայի* բնորոշ գիծն է ազգային ազատագրական չարժման նպատակը՝ օտար լծից երկիրը ազատելու եւ ինքնորոշման իրաւունքով անկախութեան իրականացումը:

Բ.— Բոլշեւիկները թոյլ էին տուել ճակատագրական *ախալ*՝ արհամարհելով ազգային դրօշը, խորացնելով ռազմաճակատի քայքայումը:

Գ.— Իրողութիւն էր Սովետական Ռուսաստանի կողմից գերմանա-թուրքական *իմպերիալիստական* դիշատիչների հետ հարկադրական դժբախտ *բրեստի* հաշտութեան կնքումը, որով Կարսը, Բաթումը տրւում էին թուրքերին:

Դ.— Հետեւապէս չարունակւում էր պատերազմը կովկասեան ռազմաճակատում, որովհետեւ թուրք ագրեսորները մտադիր չէին կանգ առնել Կարսում եւ Բաթումում, այլ ձգտում էին հասնել Բաքու եւ անցնել նոյնիսկ Միջին Ասիա:

Ե.— Հայաստանը, անկախ իր կամքից, անկախ դաշնակցականների ցանկութիւնից, դատապարտւում էր մեկուսացման եւ ոչ մի օգնութիւն չէր կարող ստանալ ոչ Սովետական Ռուսաստանից եւ ոչ էլ դրսից: Ապացոյց՝ Բաքուի կոմունան:

Զ.— Մենշեւիկները ու մուսաւաթականները Վրաստանում եւ Ադրբեջանում իշխանութեան տէրն էին: Ադրբեջանի ազգայնականները դրկաբաց Բաքու են հրաւիրում թուրքերին. եւ չի կարելի դաշնակցականներին վերագրել մուսաւաթականների այդ ճգտումը, որովհետեւ թուրքերը (հայերի) համար թշնամիներ էին, որի համար եւ կոտորում էին հայերին: Իսկ ադրբեջանցիները հաւատակիցներ եւ ցեղակիցներ էին, մի ընտանիքի անդամներ: Այս տարբերութիւնը չէր կարող անտեսել պատմութիւնը:

Է.— Բրեստի պայմանագիրը չընդունելը դաշնակցականների կողմից զտարիւն (°) թրքական ագրեսիան արդարացնող՝ դեմագոգիա է[2]: Փաստ է, որ դեռ Բաթումի բանակցութիւններից մէկ ամիս առաջ, այնուամենայնիւ, Բրեստի պայմանագիրը ճանաչուեց Սէյմի կողմից, բայց թուրքերը նոր, լկտի պահանջներ էին ներկայացնում, եւ ի վերջոյ պէտք է հասկանալ, որ նպատակ ունէին առհասարակ Հայաստանը վերացնել մէջտեղից: Սա է մերկացնող ճշմարտութիւնը: Այլեւս ի՞նչ հետեւութիւններ կարելի է հանել իրադարձութիւններից:

Ը.— Այդ պատճառով էլ պատերազմը Հայաստանի դէմ չարունակուեց մինչեւ Բաթումի դժբախտ հաշտութիւնը: Յոյց տուէք,

---

2) Այստեղ լմաստը բաւական մթագնուած է: Բայց յաջորդ տողերի չարքում, այնուամենայնիւ, այն է նշանակում, որ ոմանք դնում են, թէ Բրեստի պայմանագիրը դաշնակցականների եւ ուրիշների կողմից չընդունուելը պատճառ դարձաւ, որ թրքական նախայարձակումը աւելի արագանայ: Անանուն պատմաբանը հերքում է այդ դրոյթը՝ որոշակի փաստարկումներով:

թէ ի՛նչպէս հայերը կարող էին խուսափել դրանից: Այլ ելք դժուար է ենթադրել:

Անցնենք Ձեր երկրորդ դրոյթին, որ վերաբերում է Բաթումի պայմանադրին: Իմ տեսակէտներն էին, որի հետ Դուք համաձայն չէք.—

Ես ասում եմ, որ Բաթումի պայմանադիրը ռազմական դործողութիւնների հետեւանք է, Անդրկովկասի վրայ յարձակուող թուրքական բանակի ճնշման, թուրքական ագրեսիայի արդիւնք՝ անեքսիոնիստական հաշտութեան պայմանադիր: Իսկ Դուք, հետեւաբար, Բաղալեանի տեսակէտն էք բաժանում, որի համաձայն Բաթումում իբր թէ նիւթուել է «դործարք», «ռազմա-քաղաքական դաշինք՝ Սուլթանական Թուրքիայի եւ դաշնակցականների միջեւ», իբրեւ թէ հայ ժողովուրդը եւ Բաքուի պրոլետարիատը բնաջնջելու նպատակով: Ինձ կչտամբում էք, թէ ես Բաթումի պայմանադրի մասին դատում եմ իբրեւ թէ «ֆորմալ իրաւաբանութեան տեսակէտից»: Իբր թէ «մոռանում եմ», որ այդ պայմանադիրը ունեցել է «դործնական հետեւանքներ, կատարել է պատմական ֆակտորի դեր»: Բայց ինչի՞ց է երեւում, որ չեմ տեսել Բաթումի պայմանադրի «դործնական հետեւանքները» եւ նրա «պատմական ֆակտորի դերը»· այդ ցոյց չէք տալիս: Բաթումի պայմանադիրը ի՞նչ դեր է կատարել, ես չեմ անտեսել, այլ ընդդծել եմ, որ թուրքերը ձգտում էին իրենց տիրապետութիւնը հաստատել ոչ միայն Անդրկովկասում, այլ եւ Միջին Ասիայում, որ նրանք ձգտում էին վերացնել այդ նպատակի ճանապարհին կանդնած արդելքները, յանձինս հայ ժողովրդի եւ Բաքուի կոմունայի: Իմ եւ Բաղալեանի տեսակէտների տարբերութիւնը այդ հարցում այն է, որ թուրքերի այդ նպատակը նա վերագրում է նաեւ հայ աղգայնականներին, որ ես ժխտում եմ, որովհետեւ եթէ հայութիւնը բնաջնջելը լինէր հայ աղգայնականների «նպատակը», ապա նրանք աղգայնական չէին կոչուի, այլ՝ թուրքական:

Միւս կողմից՝ բնութեան մէջ չկայ եւ չի կարող լինել մի աղգայնական կուսակցութիւն, որ իր առաջ դնի սեփական ժողովրդին բնաջնջելու անհեթեթ նպատակը: Սա աբսուրդ է· բայց,

չգիտես ինչու, Դուք հաւատում էք այդ հնարքին: Իրականում ո՞րն է Բաթումի պայմանագրի դերը, որ նա կատարել է պատմութեան մէջ: Ա՛յն, որ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ որոշ ժամանակ – շուրջ երկու տարի – ընդհատուեցին ռազմական գործողութիւնները: Ինչ վերաբերում է Թուրքերի առաջխաղացմանը դէպի Բաքու, դա ոչ թէ ապահմանուեց պայմանագրով, այլ բխում էր Թուրքական կառավարութեան նպատակներից, որոնց իրականացմանը դիմադրելու ուժ չունէր այլեւս Հայաստանը, ճիշտ այնպէս, ինչպէս ուժ չունէր ո՛չ կոմունան, ո՛չ Սովետական Ռուսաստանը: Դուք մտքէ Բաղալեանի կարծիքո՞ն էք, որի համաձայն դաշնակցական կառավարութիւնը Թուրքերին միացաւ դէպի Բաքու արշաւելու համար, որ այդ նպատակով իբր թէ դաշնակցականները պարտաւորութիւն վերցրին – ո՛չ թէ պարտադրուեցին զէնքի ուժով, այլ կամաւոր վերցրին իրենց վրայ, չէ՞ որ միեւնոյն նպատակն ունէին Թուրքերն ու դաշնակցականները, Բաղալեանի պնդումով – օգնել Թուրքական զօրք փոխադրելու Ալեքսանդրապոլ–Ջուլֆա գծով եւ Բաքուից դուրս բերելու իրենց զինուած ուժերը: Եթէ այս համոզմունքին էք, ապա նախ մի հարց. այլեւս ի՞նչ կարիք կայ դաշնակցական զօրքը դուրս բերելու Բաքուից. չէ՞ որ նրանք, իբր, Թուրքերի «դաշնակիցներն» էին Բաքուի պրոլետարիատին բնաջնջելու համար: Մի՞թէ Դուք իրօք այն կարծիքին էք, որ դաշնակցականները, Ռոստոմը, Արամը եւ այլք, ցանկանում էին, որ Թուրքերը Բաքու մտնեն: Այդ դէպքում ինչո՞ւ էին Բաքուի սովետում դաշնակցականները քուէարկում յօդուտ անդլիացիներին Բաքու հրաւիրելու առաջարկին: Չէ՞ որ սա իրական վտանգ է: Ո՞ւր է տրամաբանութիւնը: Ոչ մի տրամաբանութիւն չկայ այս հարցում Բաղալեանի պնդումների մէջ:

Այժմ, ըստ էութեան, մտքէ Դուք համոզուա՞ծ էք, որ դաշնակցականները իրօք ցանկանում էին բնաջնջել հայ ժողովուրդը եւ պրոլետարիատը: Եթէ համոզուած էք այդ բանում, ապա ի՞նչ հիմքեր ունէք:

Երկրորդ, մտքէ Դուք համոզուա՞ծ էք, որ Բաքուն գրաւելուց յետոյ Թուրքերը կարող էին դաշնակցականներին յանձնել իշխանութիւնը: Եթէ Դուք նոյնիսկ հաւատում էք այդ անհաւանակա-

նութեանը, ապա ես կատեգորիկ կերպով յայտարարում եմ, որ չկար մի դաշնակցական, որ այդ համոզման լինէր: Այդպիսի հայ մարդ չի եղել եւ չկայ բնութեան մէջ: Ասենք, չէ, կայ մէկը, որ 1907 թուականին գրել է, որ իրենք պերադաստում են, որ Հայաստանը դառնուի թուրքերի տիրապետութեան տակ, քան դաշնակցակաների:

Այդ մէկն էլ բոլշեւիկ կարինեանն էր:

Այս բոլորից հետեւում էր, որ թուրքերին Բաքու թողնելը չէր բխում ոչ դաշնակցականների բուրժուական-տնտեսական, ոչ քաղաքական, ոչ ստրատեգիական եւ ոչ էլ ազգային շահերից:

Հետեւապէս ինչո՞ւ նրանք պէտք է ձգտէին թուրքին ճանապարհ տալ կամ օգնել Բաքու հասնելու համար: Եթէ Դաշնակցութիւնը բուրժուազիայի շահերի արտայայտիչ կուսակցութիւնն էր, ապա յայտնի բան էր, որ հայ բուրժուաների մեծ հարստութիւնները հենց Բաքուում էին:

Մթթէ դաշնակցականները ուղո՞ւմ էին նաեւ նիւթապէս կողոպտուել: Եթէ դաշնակցականները նացիոնալիստներ էին, ապա նրանք չէին կարող իրենց ազգայնական շահերը թուրքական եաթաղանին զոհարերել: Ուրեմն, ուրիշ ի՞նչ շահերից ելնելով դաշնակցականները կարող էին թուրքերին հրաւիրել Բաքու: Չէք կարող այլ շահեր ցոյց տալ, եթէ չէք ուղում կտրուել կոնկրետ պատմական իրականութիւնից:

Գիտեմ, դարձեալ պէտք է յիշէք, որ դաշնակցականները դէմ են Հոկտեմբերեան Յեղափոխութեան, չէին ուղում, որ սովետական կարգեր լինեն Անդրկովկասում: Այս է Բաղալեանի եւ Ձեր միակ փաստարկը, որի վրայ կառուցուած է նիհիլիզմի ամբողջ վերնաշէնքը: Այս փաստից էք ելնում Դուք՝ ինձ կշտամբելով ամէն տեսակի «ձեւական» կամ «իրերն արտաքին կողմից տեսնելու, բուն խորքերը չտեսնելու», «ֆորմալ տրամաբանութեան» մեթոդով հարցերին մօտենալու կամ այլ եւ այլ «ֆորմալիզմների» մէջ:

Բայց տեսէք, թէ իրականում որտե՞ղ է թաքնուած ֆորմալիզմը: Մարքսիստները դառնում են, որ դաշնակցականները սոցիալիստներ չեն, այլ բուրժուական նացիոնալիստներ. դաշնակցականները իրենք էլ չեն ժխտում, որ սովետական կարգերի համար չեն

պայքարել երբեք: Եթէ նրանց ծրագրից ու տակտիկական լողունգներից ելնէինք միայն եւ յայտարարէինք, որ դաշնակները պայքարել են նաեւ սովետական կարգերի համար, ապա դա կը լինէր իսկական ֆորմալ մօտեցում հարցին: Բայց ոչ ոք այդպիսի բան չի արել: Ես այդպիսի միտք չեմ արտայայտել: Եթէ, մեկնակէտ ունենալով դաշնակիներին տրուած մարքսիստական քնութագրիչը, յայտարարուէր, որ դաշնակները իրականում պայքարել են ազգային ինքնորոշման իրաւունքի հիման վրայ Հայաստանը օտար լծից ազատագրելու կամ ընդհանրապէս բուրժուա-դեմոկրատական քաղաքական ազատութիւններ նուաճելու համար, ապա դա իրաւացի կը լինէր. իսկ մօտեցումը՝ միանգամայն ռէալիստական ու դասակարգային: Ես հենց այդ տեսակէտից եմ մօտենում Դաշնակցութեան գործունէութեանը: Ինչպէս տեսնում էք, այստեղ ֆորմալ մօտեցում չկայ, այլ իրերի բուն խորքը թափանցող ռէալիզմ: Իսկ եթէ դա ճիշտ է, ուրեմն ի՞նչ իրաւունքով Դուք պահանջում էք, որ Դաշնակցութիւնը կրի բոլշեւիկների պլատֆորմը, մանաւանդ, որ, իրրեւ ռէալիստ բուրժուական մօտեցողներ, նրանք աւելի շուտ էին նկատել եւ ղգացել յատկապէս հայ բոլշեւիկների ազգային նիհիլիզմը եւ յեղափոխական ֆրազեօրութիւնը, (որը) սոցիալիստական իդէալիզմը, ամէն ինչ ենթարկել է համաչխարհային յեղափոխութեան ուրուականին, որ ոչ կարելի է չօշափել, ոչ տեսնել, ոչ էլ ղգալ:

Հորիզոնում չէր երեւում ռէալ կերպարանք, չէր ատացւում ուրուականը նոյնիսկ, իսկ սրատուող հայութեանը կերակրում էին այդ պատրանքներով: Մէթէ պրակտիկ մտածողութեան տէր բուրժուական նացիոնալիստը կարո՞ղ էր յոյսեր կապել այդպիսի պատրանքի հետ: Ո՛չ: Այդ մի՛ կողմից, մեւս կողմից էլ հենց իրենց դասակարգային շահերից ելնելով դաշնակները չէին կարող յոյսները կապել մի դոկտրինայի հետ, որ մահ էր բերում նրանց: Նրանք չէին հետապնդում մասնաւոր նախաձեռնութեան ու սեփականութեան ոչնչացման նպատակ: Ծրագրով դա ապագայի հարց էր նրանց համար: Ես նրանց գործունէութեան մէջ տեսնում եմ.

Ա.— Բուրժուական ամենալայն եւրոպական տիպի դեմոկրատիայի եւ ազատութիւնների ջերմեռանդ պաշտպանների:

Բ.— Թուրքիայի լծից ազատագրելու եւ Հայաստանը մէկ պետութեան, տուեալ դէպքում՝ Ռուսաստանի դեմոկրատական կարգերի պետութեան շրջանակներում միաւորելու, որպէս նախնական պայման՝ անկախ եւ ինքնուրոյն Հայաստանի համար պայքարի անճնաղոհ մարտիկների: Իսկ ի՞նչ է սա, եթէ ոչ ճնշուած ժողովրդի ազգային ազատագրական պայքար, որ Լենինի բնորոշմամբ հանդիսանում է արդարացի ու առաջադիմական, բուրժուական դեմոկրատիայի իմաստով յեղափոխական չարժում, որը չեն կարող չպաշտպանել մարքսիստները, եթէ նըրանք չեն ուզում դադարել մարքսիստներ լինելուց: Այստեղից էլ Լենինի ծրագրային պահանջն այդ ճնշուած ժողովուրդների համար, որպէս առաջնահերթ լոզունգ, ազգերի ինքնորոշման իրաւունքի, ընդհուպ մինչեւ պետական անկախութեան պահանջի առաջադրումը: Կուսակցութեան Զ. համագումարից յետոյ Շահումեանի առաջադրած պլատֆորման Անդրկովկասի երեք հիմնական ազգերի մարքսիստների համար ելնում էր հենց լենինեան տեսութիւնից եւ պրակտիկայից:

Բայց, ինչպէս արդէն ասել ենք վերեւում, այդ պլատֆորման մերժուեց Մախարաձէի առաջարկով եւ հայ մարքսիստների պաշտպանութեամբ: Ինչո՞ւ. որովհետեւ Մախարաձէն եւ հայ մարքսիստները դրութիւնը — միջազգային, ներքին — պատկերացնում էին այսպէս.

ա) Աչխարհը թեւակոխել է պրոլետարական յեղափոխութեան դարաշրջանը, ուստի բուրժուական դեմոկրատիան այլեւս կորցրել է իր պատմական նշանակութիւնը, մոռանալով, որ այս մարքսիստական դրութիւնը վերաբերում է «կապիտալիստօրէն լրենց ապառած ազգերի» — Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսաստանի բուրժուազիային եւ նրա դեմոկրատիային եւ ոչ թէ օտար լծի տակ ճնշուած ու այդ լծից ազատագրուել ցանկացող ժողովուրդներին, որ այդ ճիշտ դրոյթը դառնում է եւ յեղափոխական ֆրազ, երբ այդ մեխանիկօրէն տարածւում է այդ ճնշուած ազգերի վրայ: Հայ մարքսիստները զնացին այդ սխալ ուղիով, անտեսելով պատմական զարգացման օրինաչափութիւնը:

բ) Ցետոյ, հայ մարքսիստները դատում էին այսպէս. համաշխարհային պրոլետարական յեղափոխութեան կենտրոնը Ռուսաստանն է, որի պրոլետարիատը յաղթանակ է տարել արդէն սեփական բուրժուազիայի նկատմամբ, հռչակել սովետական կարգեր. ուստի մնացած փոքր ժողովուրդները պէտք է մոռանան այլեւս բուրժուական դեմոկրատիայի էտապի մասին, եւ այդ էտապը շրջանցելով միանգամից թռչեն սոցիալիստական դեմոկրատիայի համար պայքարի ճակատը, մոռանալով, որ մարքսիտական այդ դրոյթը վերաբերւում է այնպիսի ժողովուրդների, որոնց մօտ տակաւին չէր սկսուած ազգային–ազատագրական շարժումը՝ սեփական բուրժուազիա եւ պրոլետարիատ չունենալու պատճառով, բացակայում են ձեւակերպուած ազատագրական դաղափարախօսութիւնները – գտնւում են Ռուսաստանի բուն տերիտորիայի վրայ եւ պրակտիկօրէն անհնար է նրանց անջատումն ու անկախ պետութեան ստեղծումը, որ վնաս կը լինէր այդ դրոյթը մեխանիկօրէն տարածել այն ժողովուրդների վրայ, որոնք ունեն ազգային–ազատագրական շարժման հարուստ փորձ, պատմական անցեալ, տրադիցիա...

Եւ այդ է պատճառը, որ Սովետական Ռուսաստանը անմիջապէս ճանաչեց Ֆինլանդիայի, Մերձ Բալտիկեան ժողովուրդների, Ուկրաինայի պետական անկախութիւնը: Ֆինլանդիայում եւ Մերձ Բալտիկեան երկրներում նոյնպէս կային եւ ոչ պակաս ակտիւութեամբ գործում էին մարքսիստներ, բոլշեւիկներ:

Բայց պարզուեց, որ Հոկտեմբերի եռուն օրերին այդ երկրներում աւելի պոպուլեար էր ազգային պետական անկախութեան լոզունգը եւ իշխող ազդեցութիւն ունէին ժողովրդական մասսաների վրայ ոչ թէ բոլշեւիկները, այլ ազգային դրօշը պարզած բուրժուա–նացիոնալիստական կուսակցութիւնները: Դրա համար էլ այնտեղ յաղթեց անմիջապէս ոչ թէ սովետական իշխանութիւնը, այլ բուրժուական դեմոկրատիան: Մարքսիստ Լենինը հաշուի էր նստում կոնկրետ պատմական իրողութեան հետ, ուստի եւ անյապաղ ճանաչեց այդ երկրների անկախութիւնը, ամենեւին չձգտելով ղէնքի ուժով այդ երկրներում սովետական կարգեր հաստատել եւ չմեղադրելով այդ երկրների նացիոնալիստներին այն

բանի համար, թէ ինչու նրանք սովետական կարգերի համար չեն պայքարում, որ առհասարակ տխմարութիւն է ոչ մարքսիստներից նման պահանջի առաջադրումը, որովհետեւ այդ մէկ է թէ բոլշեւիկներից պահանջեն, որ նրանք սովետական կարգերի փոխարէն բուրժուական դեմոկրատիայի համար պայքարեն: Այդ կը նշանակէր արհամարհել եւ անտեսել մարքսեան դասակարգային պայքարի ուսմունքը: Լենինը հաւատարիմ մնաց այդ ուսմունքին, իսկ հայ մարքսիստները դնացին այդ ուսմունքը դռեհկացնելու, արհամարհելու ուղիով, փոխարինելով պատմական կոնկրետ մօտեցման պահանջը յեղափոխական ֆրազերութեամբ, անտեսելով այն փաստը, որ Անդրկովկասի ժողովուրդները դնում էին Ֆինլանդիայի եւ Մերձ Բալտիկայի ժողովուրդների ուղիով, որ իրենք տակաւին այդ ժողովուրդների մէջ չէին դարձել իշխող դաղափարական եւ քաղաքական ուժ, որ այդ դերը Հայաստանում ասենք պատկանում էր դաշնակցականներին: Փոխանակ այդ ժողովուրդների համար ճանաչելու ազդային ինքնորոշման եւ պետական անկախութեան լողունգը, նրանք սկսեցին պահանջել դաշնակցականներից, որ իրենց օդնեն, Բաքուի կոմունան պաշտպանեն, սովետական «օրիենտացիա ընդունեն»: Իսկ եթէ այդ չեն արել, ուրեմն նրանց պետական անկախութիւնն էլ, իրենք էլ, նրանց յետեւից դնացող մասսաներն էլ թող դրողի ծոցը դնան:

Ոչինչ չեն ճանաչում հայ մարքսիստները, բացի սովետական իշխանութիւնից, եւ պատահական չէ, որ նրանք իրենց ծրագրում էլ Անդրկովկասի ժողովուրդների համար չէին նախատեսել ազդային ինքնորոշման եւ պետական անկախութեան պահանջ. պատահական չէ, որ ամէն մի այլ կարգեր ունեցող պետական անկախութիւն նրանց աչքում երեւում էր որպէս «խրտուիլակ» կամ նման բան: Հայ մարքսիստները ոչ մի կերպ չուզեցին հաշտուել այն մտքի հետ, որ իրերի բերումով, Հայաստանը նախ եւ առաջ պէտք է հռչակուէր որպէս անկախ բուրժուական հանրապետութիւն, որ այնտեղ սոցիալիստական կարգերը կարող են որոշ չափով ուշանալ: Եւ այնտեղ նրանց մօտ գլուխ է բարձրացնում յեղափոխականի աւանտիւրիզմը, ֆրազերութիւնը եւ նոյնիսկ սաբոտաժորութիւնը (*), թէ ինչ որ կատարուել է կենտրոնական Ռու-

աստանում, նոյնը պէտք է տեղի ունենայ Հայաստանում: Սրան ասում են կորցնել պատմական ղեկավարութեան ընդունակութիւնը, բարդ իրադրութեան մէջ կորցնել հաշիւները եւ ընկնել ամէն տեսակի ատերի եւ դրսեւորութիւնների ճահիճը: Վերեւում ասուածից կարծես միանգամայն պարզ է, թէ ովքեր են առաջնորդում դիալեկտիկական տրամաբանութեան օրինակներով իրենց դատողութիւնների մէջ եւ ովքեր՝ ֆորմալ տրամաբանութեան տուրք տուել, ովքեր՝ ելակէտ ունեցել միայն բարի ցանկութիւնները – մտքումը եղած, երազած համաչխարհային յեղափոխութիւնը եւ այլն, արհամարհելով երկրում դասակարգային, քաղաքական ուժերի յարաբերութիւնը, դաշնակցականների իշխող դերը եւ այլն:

Իմ ելակէտը լայն է, իսկ Զերը՝ Դուք եւ Զեր համախոհների մերկապարանոց յեղափոխական ֆրազեորութիւնը, ցանկալին իրողութեան տեղ ընդունելը, իրական իշխող ուժերն արհամարհելը եւ անտեսելը:

Մի երկու խօսք էլ ազգերի ինքնորոշման մասին: Այստեղ էլ ինձ մեղադրում էք այն բանում, որ ես իբր թէ «բաւականանում» եմ միայն ազգերի ինքնորոշման լենինեան տեսակէտից հանած վերացական դնահատականով, եւ դրականապէս եմ դնահատում մայիսի 28ին ստեղծուած անկախ Հայաստանի դերը:

Ինչո՞ւմն է իմ կողմից անկախութեան ակտին տուած դնահատականի «վերացականութիւնը», ցոյց չէք տուել, բայց անկախութիւնը չակերտների մէջ առնելով, Դուք արդէն պարզում էք Զեր դիրքը, ուզում էք ասել, որ Մայիս 28ի Հայաստանի անկախութեան հռչակման ակտը չի բխում ազգերի ինքնորոշման լենինեան տեսութիւնից, որ այդ տեսութիւնը չի վերաբերում Հայաստանին:

Անկախ, ինքնուրոյն, օտարի լծից ազատ Հայաստանը եղել է եւ մնում է ամէն մի հայի դարաւոր իղձը եւ ամենամեծ երազանքը: Այդ հաստատւում է հայրենասիրական երգերով, դաղափարներով եւ անճնաղոհ պայքարով, որով այնքան հարուստ է հայ ժողովրդի պատմութիւնը: Հենց միայն այս հանդամանքը բաւական է հաստատելու համար, որ ինքնորոշման լենինեան տեսութիւնը ամէնից չատ վերաբերում է Հայաստանին ու հայ ժողովրդին:

Երկրորդ՝ թերևս Դուք կարծում էք, որ հայ ժողովրդի համար էլ, ինչպէս ռուս ժողովրդի, առաջնահերթ խնդիրն է սոցիալիզմին անցնելը: Այդ կապակցութեամբ չպէտք է մոռանալ, որ եթէ ամէն մի աշխատաւորի հարցնելու լինէիք, ապա նրանից անխուսափելի պատասխան կը ստացուէր, որ առաջին հերթին կ'ուզենար օտար լծից ազատագրուել: Այդ ճշմարտութիւնը ժխտողներին Լենինը համարում էր իրականութիւնից կտրուած, Մարսի վրայ մտածողներ: Ես, անկասկած, հաւատում եմ Լենինին եւ կանգնած եմ նրա դիրքերում: Միւս կողմից, չպիտի մոռանալ, որ սոցիալիզմին անցումը բոլշեւիկների ցանկութիւնն էր, իսկ միւս հայկական կուսակցութիւնները վաղաժամ էին համարում այդ անցումը հայերի համար, նկատի ունենալով, որ սոցիալիզմի համար հայ ժողովուրդը դեռեւս պատրաստ չէ: Եւ 1917–18 թ.թ. ժողովրդի կարծիքն էր արտայայտում այն կուսակցութիւնը, որ ուժեղ էր եւ իր յետեւից էր տանում մասսաներին: Իսկ դրանք դաշնակցականներն էին, ոչ թէ բոլշեւիկները. հակառակ դէպքում բոլշեւիկները կը գային իշխանութեան գլուխ, այլ ոչ թէ դաշնակցականները: Այս բոլորից յետոյ այլեւս ի՞նչ «ֆորմալ» կամ «վերացական» մօտեցման մասին է խօսքը: Ոչ թէ ես, այլ, ինչպէս երեւում է, Դուք էք վերացական կողմից ըմբռնում Լենինի լոզունգները եւ անտեսում սոցիալ-դասակարգային ուժերի ռէալ յարաբերութիւնը երկրամասում: Մնում է հարցնել. ո՞ւմ համար է Լենինի ազգերի ինքնորոշման տեսութիւնը, եթէ ոչ ճնշուած ժողովուրդների: Այդ ինչպէ՞ս է, որ ճնշուած ժողովրդի նկատմամբ այդ տեսութեան կիրարկումը Դուք համարում էք «վերացական» մօտեցում, իսկ ժխտումը համարում էք «ռէալիստական»: Ո՞ւր է այստեղ տրամաբանութիւնը: Անկախութիւնը ինչ սիտուացիայի եւ ինչ-առիթներով էլ հռչակուած լինի, պէտք է դիտել իբրեւ տուեալ ժողովրդի իրական, քաղաքական եւ տնտեսական կեանքում պատմական մեծ շրջադարձային մոմենտ, որուհէ հանդամանք՝ նրա ճակատագրի տեսակէտից, իսկ ով ծաղրում կամ ժխտում է այդ ակտի պատմական նշանակութիւնը, նա ոչ միայն ծաղրում է տուեալ ժողովրդի ազատագրական ջանքերը, այլ դառնում է ակամայ թշնամի այդ դաղափարին: Մթէ պատմական

վատ եւ ճշմարտութիւն չէ՞, որ հենց այդ «խրտուիլակ» հանրապետութիւնը հենց 500 տարուայ ընդմիջումից յետոյ սկիզբ հանդիսացաւ հայ պետականութեան վերականգնման: Մթթէ իր միջազգային կշռով հետագայ բոլշեւիկեան Հայաստանը աւելի մե՞ծ եւ ինքնուրո՞յն դերձօն է հանդիսացել: Դուք, երեւում է, այդ կարծիքին էք: Բայց հազար անգամ ինքներդ հաստատել էք մեր հանդիպումների ժամանակ, որ Հայաստանը ռուսների համար մըննացել է որպէս դաղութ, աւելին՝ որպէս կայսրութեան մի անբաժան ու բաղկացուցիչ մասը: Ըստ էութեան պետականութեան եւ անկախութեան տեսակէտից հենց Սովետական Հայաստանը պիտի առնել չակերտների մէջ, որովհետեւ ո՛վ է ճանաչում նըրան որպէս պետութիւն:

Ի՞նչ պետութիւն է դա, երբ նրա «կառավարութիւնը» կամ «դերագոյն սովետը» իրաւունք չունի առանց Մոսկուայի թոյլատրութեան մի հաւաքարարի հաստիք նշանակելու որեւէ հիմնարկում: Ձեր կարծիքով սա՞ է ինքնորոշման Լենինի տեսութեան իրական իմաստը:

Սա՛ է իրական անկախ պետութեան հասկացողութեան իմաստը: Ես չեմ կասկածում, որ Ձեր հոգու խորքում Դուք էլ համոզուած էք, որ սովետական պետութիւն չկայ իրականում, այլ կայ ռուսական կայսրութեան Սովետական Հայաստանի մարզ եւ ուրիշ ոչինչ: Ինչպէս ցարիզմի ժամանակ կար Երեւանի նահանգ՝ իր վարչական ապարատով: Ուրեմն, պէտք է ընդունել եւ չի կարելի չընդունել, որ 1918 թ. Հայաստանի Հանրապետութիւնը իրօք որ երկար ընդմիջումից յետոյ առաջին վերականգնուած հայկական պետութիւնն էր, իսկ անկախութեան հռչակման ակտը մի փաստ, որ ճանաչում ստաւ դրեթէ բոլոր պետութիւնների կողմից, եւ որպէս պետութիւն նրա ստորագրութիւնն էր միջազգային պատմական վաւերագրերի տակ մեծ տէրութիւնների հետ միասին: Իսկ եթէ բոլշեւիկները չուզեցին ճանաչել այդ պատմական իրողութիւնը, այդ ոչ նրա համար էր, որ Հայաստանի Հանրապետութիւն չկար, որը հարկադրաբար ընդունել էր նաեւ Սովետական Ռուսաստանը, քանի որ նրա նոտաներն ու դիմումները հենց հասցէագրուած էին Հայաստանի Հանրապետութեան կառավարութեա-

նը առանց չակերտների, հենց այդ փաստը ինքն ըստ ինքեան ցոյց է տալիս, որ այդ «խորտուիլակ» Հայաստանը ինչ որ կոնկրետ իրողութիւն էր եւ ոչ թէ վերացական կամ աչխարհագրական հասկացութիւն, – այն էլ միայն նրա համար, որ այդ Հայաստանի իշխանութեան ղլուխն էին անցել դաշնակցականները, մինչդեռ բոլշեւիկները իրաւունք էին յաւակնում ունենալ Հայաստանում իշխանութեան տէր դառնալու: Բայց որտեղի՞ց է յայտնի, որ Լենինը ճանաչում է որպէս իսկական–իրական պետութիւններ միայն այն երկրները, որոնց իշխանութեան ղլուխն են անցել բոլշեւիկները, իսկ եթէ բոլշեւիկները չեն, այլ ազգայնական կուսակցութիւնները, ապա դրանք համարում է «խորտուիլակներ» կամ ձեւական, ինչ որ վերացական կատեգորիաներ: Լենինիզմից մեղ յայտնի չէ նման մի բան: Լենինիզմը ընդունում է իրրեւ պատմական փաստ, իրրեւ ռէալ դործօն, իրրեւ պետութիւն նաեւ ոչ բոլշեւիկեան պետութիւններ: Եւ աւելին՝ նոյնիսկ դիւանագիտական կապեր է հաստատում ոչ միայն հանրապետութիւնների կառավարութիւնների, այլեւ միապետական կառավարութիւնների հետ, չքեղ հանդիսաւորութեամբ ընդունելով կամ այցելելով պետութեան դիւանագիտական ներկայացուցիչներին: Օրինակներ բերելու կարիք չկայ, կարծեմ: Ինչպէս տեսնում էք, լենինիզմի տեսութիւնից ոչ թէ ես, այլ Դուք էք վերացական եղրակացութիւնների յանդում, քանի որ ես հաշուի եմ նստում կոնկրետ պատմական իրողութեան հետ, իսկ Դուք՝ սուբեկտիւ ցանկութիւնների հետ, փակելով աչքերը ոչ ցանկալի իրականութեան առջեւ:

Ասում էք ինձ. որքանո՞վ ռէալ է, իրական, այդպիսինը, – կ'ասէր Լենինը նման դէպքում: Այժմ կարծես պարզ է, թէ մեղանից ով է իր համար ընտրել ֆորմալաբանութիւնը, ով է ելնում երեւոյթների միայն արտաքինից, չի թափանցում իրերի կամ երեւոյթների խորքը, ո՞վ է անտեսում պատմական չարժառիթների տարընթացքը:

Ինձ վերադրելով այդ բոլորը, Դուք յիշում էք որպէս փաստարկ՝ Բրեստի եւ Բաթումի հաշտութեան պայմանագրերի անալոգիան եւ նշում, որ Բրեստում զիջումներ անելով դերմանական իմպերիալիստներին, Լենինը փրկում էր Հոկտեմբերի նուաճում-

նները, մինչդեռ դաշնակցականները, Ձեր ասելով, «դնացին Բաթում Հոկտեմբերը մերժելու հետեւանքով», թէ բոլշեւիկները Բրեստում պարտաւորութիւններ չստանձնեցին ներքին քաղաքականութեան հարցերում: Դաշնակցականները պարտաւորուեցին խղելու իրենց կապերը Բաքուի հետ եւ, միաժամանակ, թիւնքից հարուած հասցրին Սարդարապատի «հրոսակախմբերին» եւ այլն:

Նախ դաշնակցականները Հոկտեմբերը կարող էին չընդունել եւ չընդունեցին իրենց դասակարգային բնութեան շնորհիւ, ուստի ոչ մի հիմք չկայ պահանջելու նրանցից, որ նրանք անպայման սովետական կարգեր որդեգրէին: Դա հակասում է հասարակական զարգացման օրէնքներին բնութեանը:

Երկրորդ, իրականում դաշնակցականները Հոկտեմբերը մերժել են իբրեւ դաղափարախօսութիւն, բայց ոչ որպէս պատմական իրողութիւն: Դրան որպէս ապացոյց կարող է ծառայել տակաւին 1918 թ. ապրիլին բոլշեւիկ Մակինցեանին Մոսկուա ուղարկելը, Սովետական Ռուսաստանից օգնութիւն հայցելու միտքով, բայց որը Նոյի ազդեցի դեր կատարեց, դնաց եւ այլեւս լուր չտաց-ուեց. յետոյ իմացուեց, որ նա Մոսկուայում աշխատանքի է անցել եւ սկսել կատաղի պայքար Հայաստանի Հանրապետութեան դէմ:

Երրորդ, Շահթի միտքն Մոսկուայում, որ փորձում էր Լենինի հետ լեզու դտնել եւ ճանաչել տալ Հայաստանի անկախութիւնը: Մինչդեռ կովկասահայ բոլշեւիկները միացան բոլշեւիկեան փետուրներով զարդարուած կարաբեքիր փաշայի, Քեմալ փաշայի, Էնվերը, Ճեմալ, Խալիլ ու Թալեաթ փաշաներին եւ ազգրեջնական մուսաւաթականների հետ, Միկոյեանի միջոցով, Ստալինի խորհրդով եւ հովանաւորութեամբ ամէն ինչ արին ձախողելու համար այդ միտքն եւ ձախողեցրին:

Չորրորդ՝ ինչո՞ւ Հոկտեմբերի նուաճումները փրկելու համար կարելի էր զիջումներ անել իմպերիալիզմին, իսկ հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը փրկելու համար չէր կարելի: Ի՞նչ բարոյական, քաղաքական կամ տնտեսական հիմքեր ունի այդ տրամաբանութիւնը: Ինչո՞ւ դաշնակցականները իրաւունք չունէին թուրքերին զիջումներ անելու, երբ այլ բան չէին կարող անել իրենց ժողովրդի մնացած մասին սրածուելուց ազատելու համար:

Հինգերորդ՝ ասում էք Լենինը Բրեստում պարտաւորութիւններ չվերցրեց ներքին քաղաքականութեան հարցերում. իսկ դաշնակցականները ներքին քաղաքականութեան հարցերում ի՞նչ պարտաւորութիւն ստանձնեցին: Բաքուի հետ կապերը խզելը նախ ներքին քաղաքականութեան հարց չէ, այլ արտաքին, որովհետեւ Բաքուն հարեւան պետութեան մայրաքաղաքն է, ո՛չ թէ Հայաստան: Սխալ է ասել, թէ Լենինը կամ դաշնակցականները պարտաւորութիւն ստանձնեցին, որովհետեւ դուրս է դալիս, որ նրանք կամաւոր ոչինչ չեն արել ո՛չ Բրեստում, ո՛չ էլ Բաթումում: Երկու դէպքում էլ պարտաւորութիւնները պարտադրուել, թելադրուել, պէնքի ուժով վախթանգուել են ե՛ւ բոլշեւիկ Լենինի, ե՛ւ դաշնակցական Քալաղնունու վրայից: Սա չպէտք է մոռանալ: Ձեր եւ Բադալեանի մեղքը հենց այդ հանդամանքի անտեսումն է, որովհետեւ դուրս էք ներկայացնում, որ կարծես թէ Բաթումում կամ Բրեստում յաղթող դիւանագիտի եւ նրա զոհի միջեւ հաշտութեան բանակցութիւններ էին վարւում, այլ սոցիալիստական պարտաւորութիւններ էին ստանձնում կողմերը: Դէ, սա պատմութիւն չէ, այլ հնարանք: Փաստերը դէմ-յանդիման չուռ տալու միտումնաւորութիւն:

Վեցերորդ՝ թէեւ թուրքերը դաշնակցականներին պարտադրեցին զօրքերը դուրս բերել Բաքուից եւ խզել կապերը Բաքուի հետ, այնուամենայնիւ, այդ կէտը դաշնակցականները վատաբանեցին, քանի որ դաշնակցական ղինուած ուժերը մնացին Բաքուում ընդհուպ մինչեւ թուրքական բանակի Բաքու հասնելը, որտեղ այդ դաշնակցականները արիւն թափեցին՝ կռուելով թուրքական հորդաների դէմ կոմունան պաշտպանելու համար: Սխալ չի կարելի միտումնաւոր կեղծաւորութիւնը հասցնել այնտեղ, որը անյարմար կացութեան մէջ դնի ոչ միայն պատմութիւնը, այլեւ տարրական մարդկային տրամաբանութիւնը: Ցիրաւի, Բաթումի պայմանագիրը ստորագրուել է 1918 թ. յունիսի 4-ին: Թուրքերը 1918 թ. սեպտեմբերին հասան Բաքու: Մինչ այդ՝ յուլիսին եւ օգոստոսին տաք կռիւներ էին տեղի ունենում կոմունայի ղինուած ուժերի, այսինքն հայկական – «դաշնակցական» ազգային – զօրամասերի եւ թուրքական բանակների միջեւ: Շահումեանը իր

գեկուցագրում յայտնում է, որ 16·000 կռուողներից մնացել էին բոլշեւիկ Պետրովի 200 հոգուց բաղկացած ջոկատը, 200 հոգուց բաղկացած Ամիրեանի ջոկատը եւ 4·500 դաշնակցական զօրքեր. մնացածները լքել են ճակատը: Այս է իրողութիւնը:

Բացի հայերից, Բաքուն պաշտպանող այլ նշանակալից ուժեր չկային: Ինչի՞ մասին է խօսքը. եթէ կար շատ թէ քիչ մի կենսունակ ուժ, այն էլ դաշնակցական զինուած ուժերն էին Համազասպի, Աւետիսովի, Արարատովի, Ռոստոմի գլխաւորութեամբ: Ո՞ւր էին բոլշեւիկների զանակները: Այնպէս էք ներկայացնում գործը, որ կարծես թէ կոմունան պաշտպանողը կոմունան էր, իսկ դաշնակցականները չէին օգնում կամ հեռացել էին Բաքուից, խզել Բաքուի հետ իրենց կապերը: Մինչդեռ իրականում բոլշեւիկները 100ներ էին, իսկ դաշնակցականները՝ 1000ներ: Թւում է, թէ հակառակը պիտի լինէր:

Այն դէպքում, Դուք թերեւս իրաւացի լինէիք, բայց իրականում ճիշտ հակառա՛կն է եղել: Էլ ինչո՞ւ էք յօրինում սուտերը: Մթթէ կարծո՞ւմ էք, որ սուտը աւելի ճիշտ է արտայայտում լենինիզմի տեսութեան բովանդակութիւնը կամ կնշանակի իրերի խորքը տեսնել, իսկ ճշմարտութիւնն ասելը իրերի մակերեսային կողմը կնշանակի տեսնել: Ո՞ւմ էք ուզում մոլորեցնել, հետաքրքրքիր է. Ձե՞զ էք ուզում խաբել, թէ ուրիշին: Այն էլ յիշենք, որ դաշնակցականներն իրենց զինուած ուժերը չէին դուրս բերել Բաքուից, քանի որ այնտեղ հայութիւն կար, որին մահ էր սպառնում: Եւ դաշնակցական զինուած ուժերը մնացին այնտեղ, ոչ միայն Բաթումի պայմանագիրն ստորագրելուց յետոյ, այլ նոյնիսկ Քեմալի արշաւանքի ժամանակ, երբ Բաքուի, Ղարաբաղի հայութիւնը զարձեալ դառնում էր թուրքական եաթաղանի սպառնալիքի տակ: Դուք հենց մի զլուխ սովետական եւ բոլշեւիկների իշխանութեան հասնելու մասին էք մտածում, մինչ 1918–21 թ.թ. տեղի էին ունենում իրադարձութիւններ, որոնք հարցականի տակ էին դնում ոչ միայն իշխանութեան հասնելու ձգտումը, այլեւ ողջ հայ ժողովրդի ֆիզիկական գոյութեան աւելի մեծ հարցը: Ձեր դրոյթներով Դուք հաստատում էք մի ճշմարտութիւն, որ հայ

ժողովրդի ճակատագիրն առհասարակ չի հետաքրքրել բոլշևիկներին, այլ միայն իրենց իշխանության հասնելու ծարաւը:

Եթէ դա է իրողութիւնը, ապա պէտք է ընդունել, որ բոլշևիկները լուրջ գործով չէին զբաղուած, որ նրանք ողորմելի աղանդաւորներ էին, նեղ էպոխաներ, դիկտատուրայի սիրահարներ, կարիերիստներ: Այս էք ուզում ապացուցել: Իրենք կոմունայի պաշտպանութեան գործը թողել էին դաշնակցականների ուսերին, իրենց էին վերապահել միայն հեռու քաշուած, գրիչները ձեռքերնին կռուողների հասցէին լուտանքներ թափելու ողորմելի դերը: Իրենք են յաճախ զարմանք արտայայտել, թէ Յեղափոխութեան օրերին հատ ու կենտ բոլշևիկներ էին երեւում, իսկ 40 տարի անց հին բոլշևիկներից կենսաթոշակ են ստանում հազարաւոր մարդիկ. ո՞ւր էին սրանք կոմունայի նեղ օրերին: Նրանց 90 (՞) տոկոսին Դուք չէք էլ ճանաչում: Հաւանաբար սրանց մեծ մասը այդ նեղ օրերին պայքարի ճակատը լքած դասալիքներ են, որոնք ոչ միայն քայքայեցին իրենց դրչով ու խօսքով ռուսական բանակը՝ դասալքութեան կոչելով, այլեւ հայկական կորպուսը, այլեւ հենց կոմունան պաշտպանող զինուած ուժերը: Այն օրերի իսկական դաւաճանները այսօր հերոսների անուն են վաստակել, չնորհիւ պատմագիտութեան մէջ կատարուած կեղծարարութեան, որի հեղինակներից մէկը Դուք էք:

Այլեւ ո՞ւմ վրայ էք զայրանում: Դաշնակցականները ի՞նչ մեղք ունեն այդտեղ: Պարզ է, ինչքան էլ նրանք դուր չգան բոլշևիկներին, այնուամենայնիւ, պատմական փաստը այն է, որ չատ թէ քիչ, լաւ թէ վատ, նրանք էին կազմում այն իրական, ֆանատիկ ուժը, որը պաշտպանում էր հայութեան կեանքն ու ազգային չահերը ա՛յն ահեղ օրերին թրքական սպառնալիքներից: Աւելին՝ նրանք էին կռւում նոյն իրենց համար ոչ ցանկալի սովետական իշխանութեան համար Բաքւում, նոյն թուրքական հորդաների դէմ, որովհետեւ նրանց համար սովետական իշխանութիւնը, այնուամենայնիւ, աւելի հանդուրժելի էր, քան թուրքական արիւնոտ տիրապետութիւնը Հայաստանում: Այդ էր պատճառը, որ բոլշևիկների ոսկիով, զէնքով, հանդերձանքով, դրօշով ու պրոպագանդայով 1920 թ. կրկին Ալեքսանդրապոլ հասած

թուրքական հորդաների աւերածութիւնից Երեւանը փրկելու համար դաշնակցականները պերազասեցին հեռանալ իշխանութիւնից, այն յանձնելով – յատուկ պայմանագրով – Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ Լեդրանին, որի մխիթայի կազմում փայլում էր նաեւ Ձեր անունը: Մթթէ պարզ չէ՞, որ եթէ դաշնակները ուղենային թուրքերի դաշնակից լինել, հայ ժողովրդին ու Բաքուի պրոլետարիատին «բնաջնջելու» համար, նրանք իշխանութիւնը չէին յանձնի բոլշեւիկ Լեդրանին, այլ կը յանձնէին իրենց հետ բանակցող կարաբեքիր փաշային կամ թէ Բաթումի բանակցութիւնների ժամանակ ամբողջ երկրում իշխանութիւնը կը յանձնէին Թալաթին, Էնվերին ու Ճեմալին, եւ միացեալ ուժերով կը բնաջնջէին կովկասահայութեանն ու Բաքուի պրոլետարիատին:

Այս հարցում իրաւացի է Միկոյեանը, որն ի վերջոյ խոստովանեց, որ Բաքուի կոմունայի կեանքը երկարեց չնորհիւ դաշնակցականների, թէ չէ նա կարող էր մեռնել աւելի վաղ հասակում: Իսկ Դուք տակաւին խարխափում էք ինքնախաբութեան չամանդաղում եւ ուղում էք միսալ դուրս բերել նաեւ Միկոյեանին:

Մնում է հարցնել, թէ ո՞ւմ են պէտք այս բացայայտ աչքակապութիւնն ու ստահօսութիւնը պատմագրութեան մէջ: Մթթէ լենինիզմի չահերի՞ց է բխում լենինիզմի այսպիսի դռեհկացումն ու վարկաբեկումը: Ես, իբրեւ պատմաբան, մերժելով մերժում եմ մարքսիզմի նման ըմբռնում:

Այժմ դառնանք Սարդարապատին:

Ասում էք՝ դաշնակցականները իբր թէ թիկունքից հարուածում էին Սարդարապատի «հրոսակներին»: Ցայտնի է, որ Սարդարապատի հերոսամարտը ղեկավարում էր դաշնակցական զօրավար Սիլիկեանը, հակայարձակման ու դիմադրութեան գաղափարը տուել է դաշնակցական Արամը, կռուողները հայկական զինուած ուժերն էին եւ ինքը՝ հայ ժողովուրդը, իր աշխարհազօրով: Իսկ նրանց թիկունքում, այո, գործում էին դաւաճան, մութ ուժեր, յանձինս թուրքական գործակալների, որոնք մահմեդական խռովութիւններ էին հրահրում, եւ հայ բոլշեւիկների, որոնք դաւաճանութեան եւ թուրքերին չդիմադրելու կոչեր էին տարածում հայ ժողովրդի մէջ, հայ զօրքերի մէջ:

Սրանք իրօք որ հարուածում էին հայ ազգային զինուած ուժերին: Ուրիշ ո՞ւմ նկատի ունէք: Մինչեւ օրս պատմութեանը յայտնի ուրիշ փաստ չկայ: Ձեր ասելով դուրս է գալիս որ դաշնակցականները մի կողմից կռւում էին թուրքերի դէմ, միւս կողմից իրենք էին խփում թիկունքից... դէ, սա արդէն յօրինուածքի մի ..... է, որը չի տեղաւորւում նորմալ տրամաբանութեան շրջանակներում: Ոչ մի դաշնակցական ինքնասիրութեամբ չէր պրակուած, բացի այն դէպքերից, երբ բոլշեւիկների պրոպագանդայի ազդեցութեան տակ՝ զինուորները լքում էին ռազմաճակատը, — այսինքն՝ օգնելով թուրքերին յաղթանակ տանելու, — իսկ ինքը՝ զեկավարը մենակ չէր կարող պաշտպանել ճակատը և վերջ էր տալիս իր կեանքին: Այսպէս վարուեց, ինչպէս Ձեզ քաջ յայտնի է, Կարսի բերդապահ զօրքի հրամանատար, անմահ Մազմանեանը: Բացի նման դէպքերից, այս փաստերից այլ փաստ յայտնի չէ պատմութեանը: Սարդարապատի կռուողներին էլ «հրոսակներ» է անուանում, մոռանալով, որ թուրքական ծագում ունի, եւ կըրկնում է առանց վերապահութեան:

Չէ՞ որ Ձեզ քաջ յայտնի է, թէ ներկայումս էլ արտասահմանում հրատարակւում են դաշնակցական պատմագիտական յուշեր, յօդուածներ եւ աշխատութիւններ, որոնց մէջ վեր է հանուած այդ հերոսամարտի պատմական նշանակութիւնը:

Անցել է 42 տարի: Մինչեւ օրս ոչ մի բոլշեւիկ պատմաբան Սարդարապատի հերոսամարտի մասին դրական մի խօսք չի ասել հրապարակօրէն, բացի «աւանտիւրա» յորջորջումից: Մինչդեռ նոյն դաշնակցականներն են Սարդարապատը բնութագրել որպէս նոր Սւարայր, որի չնորհիւ եւ ծնունդ առած ապրում է հայ պետականութիւնը, որ եթէ այդ հերոսամարտերը չլինէին, ապա չէր լինի թերեւս նաեւ ներկայիս Սովետական Հայաստանը եւ այլն: Այս բոլորից յետոյ ի՞նչ արժէք ունեն եւ ո՞ւմ են պէտք պատուական բամբասանքները, որ արդէն հիւսւում են Բաղալեանների կողմից, իսկ Դուք էլ կրկնում էք՝ առանց հաշուի նստելու պատմական ճշմարտութեան եւ խղճի հետ:

Այժմ երկու խօսք էլ պարտիականութեան մասին եւ վերջացընենք: Յայտարարում էք, թէ հայկական անկախ պետութեան

հռչակելը – անկախը միշտ չակերտների մէջ էք վերցնում, ցանկանում էք ընդգծած լինել, որ անկախութիւն չի եղել, այլ «խըրտուիլակ», – համարել հայ ժողովրդի դարաւոր երազանքների իրագործում՝ կը նշանակի հրաժարուել «լենինեան պարտիականութիւնից եւ մարքսիզմի դրոյթից, թէ ճշտութիւնը պիտի ելնի իրողութիւնների կոնկրետութիւնից»:

Ի՞նչ է նշանակում ժողովրդի դարաւոր երազանք, մանաւանդ եթէ կոնկրետ խօսքը վերաբերում է դարերով օտար լծի տակ ըստըրկացած հայ ժողովրդին: Ես չեմ հանդիսել ոչ Ինդելսի, ոչ Մարքսի ու Լենինի մի դրոյթի, որտեղ ստրկացուած ժողովրդի կամ ազգի դարաւոր երազանք չհամարուէր օտարի ստրկացնող լծից ազատագրուելու դաղափարը: Երեւի Ձեզ յայտնի է այդպիսի մի միտք, որը թաքնուած է եղել մինչեւ հիմա: Հրապարակեցէ՛ք, խնդրեմ:

Իսկ քանի դեռ այդպիսի դրոյթ չկայ հրապարակի վրայ, ես մնում եմ այն կարծիքին, որ ստրկացած, իր պետականութիւնը կորցրած ժողովրդի համար ամենամեծ, դարաւոր երազանքը իր հայրենիքի ազատագրումն է օտար բռնակալի լծից:

Տակաւին Մերեժկովսկին, ո՛ւր մնաց թէ Լենինը, հասկացել էր, որ ազատութիւնն է միայն իմաստ հաղորդում հայրենիքին: Եթէ մարդը ստրուկ է, ապա նրա համար հայրենիքն էլ կորցնում է իր նշանակութիւնը: Երբ ստրկացած հայ ժողովուրդն ուզում է թօթափել օտարի լուծը, հենց դրանով նա ազատութիւն էր տեսնում այդ պայքարում, հետեւաբար եւ անկախ, օտարի լծից ազատ հայրենիքը, ուր ինքը կարող է չնչել իբրեւ քաղաքացի եւ մարդ, եւ ոչ թէ որպէս իրաւազուրկ անասուն:

Կոնկրետութիւն էք ուզում. խօսքը Հայաստանի մասին է. մի՞թէ դա կոնկրետ չէ. խօսքը թուրքական եւ ցարական օտար բռնակալութիւնից ազատուել տենչացող հայ ժողովրդի մասին է. մի՞թէ կոնկրետ բան չէ՞: Խօսքը վերաբերում է 1918 թ. մայիսի 28ի ակտին, որով Հայաստանը հռչակւում է անկախ հայկական հանրապետութիւն, որտեղ այլեւս թուրքական վալին, միւթեսարիֆը, դայմազամը, բուրդ բեկն ու աղան, համիդեան ոստիկանը կամ ցարական պրիստաւն ու ուրեադնիկը չեն հրամայում ու բըռ-

նաբարում հայկին, այլ իշխանութեան տէրն են հենց իրենք՝ հայերը, որտեղ դատաւորը հայ է եւ հայ պիւղացին իր մայրենի լեզուով պահանջում է արդարադատութիւն իր իրաւունքների նկատմամբ, որտեղ նա կարող է կրթութիւն տալ, առանց հարցնելու վալիների ու նահանգապետների թոյլատուութիւնը, որտեղ, լաւ թէ վատ, իշխանութիւնը հայկական է, հայ ժողովրդինն է եւ ոչ թէ թուրքական կամ ռուսական. հայկական պետութիւն է. օտարերկրացին հային ճանաչում է որպէս իր երկրի տէրը եւ այդ երկրի հետ գործ ունենալու դէպքում հայի հետ է հաշուի նստում եւ ոչ թէ թուրք վաչանների կամ ցարի ու նրա փոխարքայի հետ եւ այլն... Մի՞թէ սրանից էլ կոնկրետ իրողութիւն կարող է լինել: Ի՞նչ իրողութիւն էք ցանկանում Դուք, որն իբր թէ աւելի իրական է, քան անկախ Հայաստանի ստեղծումը: Երեւի Դուք նկատի ունէք այն, որ այդ անկախ իրական Հայաստանի Հանրապետութիւնը տակաւին չէր դարձնել սովետական: Ցետո՞յ. մի՞թէ մարքս–լենինեան տեսակէտից կոնկրետ իրողութիւն ասելով մի՞ այն սովետական կարգե՞ր են հասկացւում: Մի՞թէ մարքս–լենինեան տեսակէտից, բացի սովետական կարգերից, մնացած բոլոր պետութիւններն անկախ չե՞ն կամ կոնկրետ իրողութիւններն չե՞ն: Կոնկրետ իրողութեան «մարքսիստական» նման ըմբռնում ինձ յայտնի չէ: Ինձ յայտնի է, որ մարքսիզմ–լենինիզմը միանգամայն կոնկրետ իրողութիւն էր համարում ամէն պատմական ձեւաւորում, անկախ նրանի՛ց, թէ այդ պատմական ձեւաւորումն իր բնոյթով սոցիալիստակա՞ն է, թէ բուրժուական:

Լենինեան պարտիականութիւնը պատմագիտութեան մէջ հենց այն է, որ կոնկրետ այդ իրողութիւնների դոյութիւնը պահանջում է նաեւ բացայայտել այդ իրողութիւնների սոցիալ–դասակարգային բովանդակութիւնը, էութիւնը: Լենինեան պարտիականութեան սկզբունքը ոչ թէ ժխտում է կոնկրետ իրողութիւնները, այլ նախ եւ առաջ հաստատում է նրանց դոյութեան փաստը:

Երկրորդ՝ լենինեան պարտիականութիւնը կանգ չի առնում կոնկրետ իրողութեան՝ իբրեւ փաստի ըմբռնման վրայ, ինչպէս սովորաբար վարւում է պատմագիտութեան մէջ օբեկտիվիզմի ուղղութիւնը, այլ առաջ է անցնում, – բացատրում ու բացայայ-

տում է այդ իրողութիւնների դասակարգային աստառը: Հետեւելով մարքսիստական լենինեան պարտիականութեան այս սկզբունքին, ես յայտարարել եմ, որ 1918 թ. մայիսի 28ին ստեղծած անկախ Հայաստանը պատմական կոնկրետ իրողութիւն էր, այսինքն՝ օտար լծից ազատագրուող Հայաստանի եւ պետականութեան վերականգնում: Եւ նոյն պարտիականութեան սկզբունքից ելնելով ես յայտարարել եմ, որ այդ անկախ հայկական հանրապետութիւնը սովետական չէր, այլ սովորական բուրժուա-դեմոկրատական սահմանադրութեան հիմունքներով ստեղծուած մի պետութիւն:

Ինչպէս տեսնում էք, ես չեմ հրաժարուել լենինեան պարտիականութեան իսկական սկզբունքից: Եւ ինչո՞ւ կարծում էք, թէ հրաժարուած կը լինէք պարտիականութիւնից, եթէ համաձայնուէք իմ այդ տեսակէտի հետ: Ո՞րն է ուրեմն Ձեր ըմբռնած լենինեան պարտիականութիւնը: Ցայտնի չէ:

Այն է, որ ես պէտք է ասէի, որ Հայաստանի անկախութեան հռչակումը հայ ժողովրդի դարաւոր երազանքի իրականացումն է: Բայց վերեւում ասածից պարզ է արդէն, որ առանց անկախութեան ոչ մի երազանք չի կարող իրականացուել, եթէ խօսքը կոնկրետ ճնշուած ազգի ձգտումներին է վերաբերում: Անկախութիւնը եւ պետութեան ստեղծումը հենց այն առաջին անհրաժեշտ պայմանն է, որի հողի վրայ կարող է տեղի ունենալ նաեւ ժողովրդի սոցիալական ազատագրումը:

Այլ կերպ վարուել կը նշանակէր կտրուել կոնկրետ իրականութիւնից եւ ղեկավարուել սոցիոլոգիական վերացական սխեմաներով, ընկնել դոգմիկ սոցիոլոգիզմի ճահիճը, որտեղ խեղդւում է ոչ միայն լենինիզմը իր պարտիականութեամբ հանդերձ, այլեւ ամէն մի բնական եւ առողջ միտք ու կոնկրետ իրողութիւն: Ցաւով պիտի նշենք, որ հենց այդ ճահիճի մէջ էին ընկել եւ մինչեւ օրս էլ, հայ ժողովրդի վէրքերից կախուած, նրան էլ այդ ճահճուտներում խեղդելու վտանգին են ենթարկում որոշ հայ «մարքսիստներ», որոնց կարծիքով հայերը իրաւունք չունէին անկախ հայ պետութեան մասին մտածելու, որ իբրեւ թէ լենինեան պարտիականութիւնը պահանջում է, որ ինչպէս հայ բոլշեւիկները,

նոյնպէս եւ հայ դաշնակցականները, հնչակեանները, ռամկավարները, հայ ժողովուրդը ամբողջութեամբ վերցրած՝ մտածէին միայն համաշխարհային պրոլետարական յեղափոխութեան մասին, Թուրքիայում կոմունիստական յեղափոխութեան յաղթանակի մասին, Ռուսաստանում սովետական իշխանութեան ամրապնդման մասին, մի խօսքով ամբողջ աշխարհում սովետական կարգեր հաստատելու մասին, իսկ Հայաստանի, հայ ժողովրդի ղոյութեան մասին, – դա կարեւոր չէ, եւ նոյնիսկ վնասակար է, – ասում է հայ «մարքսիստը»։ Նրա կարծիքով համաշխարհային կոմունիզմի «շահերը» պահանջում են, որ հայ ժողովուրդը եւ Հայաստանը զոհաբերուեն Թուրքիային եւ Թուրքերին, որ լինի մեծ եւ հզօր Թուրքիա, մեծ եւ հզօր Ռուսաստան, իսկ հայերը, Հայաստանը, ի՞նչ են որ, եթէ ոչ, ինչպէս վերջերս լսեցի մի հայ կոմունիստից, որը մեկնաբանում էր բոլշեւիկների հայեցակէտը, – «ճեռքի կեղտ», որից պէտք է մաքրենք համաշխարհային յեղափոխութեան ճեռքերը։

Ուստի եւ Հայաստանի անկախութեան հռչակումը այդպիսի «մարքսիստի» աչքում կոնկրետ իրողութիւն եւ հայ ժողովրդի դարաւոր երազանք չպիտի համարել, որ համաձայնուելով այդ անկախութեան և երազանքի հետ նշանակում է, իբր, հրաժարուել լենինեան պարտիականութիւնից։ Որպէսզի հաւատարիմ մնացած լինի լենինեան պարտիականութեան սկզբունքին եւ «կոնկրետ իրողութիւնների կապակցութիւնների» մարքսիստական սկզբունքին, հայ պատմաբանը, իբր, պէտք է հայ ժողովրդի դարաւոր երազանքը համարի համաշխարհային պրոլետարական յեղափոխութեան զոհաբերելու, Հայաստանը ընդմիշտ Թուրքիայի սեփականութիւնը ճանաչելու «դաղափարախօսութիւնները»։ Այս էլ է լենինեան պարտիականութեան կամ կոնկրետ իրողութիւնների մարքսիստական մօտեցման մասին Ձեր ակնարկների իմաստը։ Մոռանում էք, որ այդպիսով Դուք մարքսիզմ–լենինիզմը նոյնացնում էք մարդակերութեան հետ։

Այդպիսի դիրքորոշման հետ ես ոչ միայն չեմ կարող համաձայնուել, այլ եւ պնդում եմ, որ դրանից աւելի մեծ վիրաւորանք լենինեան պարտիականութեան հասցէին դժուար է նոյնիսկ երե-

ւակայել: Այդպիսի վիրաւորանքի եւ վարկաբեկման սկիզբը դրել են Ռադեկները, Զինովևները, Պաւլովիչները, Ստալինները, որոնք 1919–1222 թ.թ. Տալինում, Մոսկուայում, Բաքուում, Թիֆլիսում եղբայրանում, դիրկընդխառնուում էին Թալաթի, Էնվերի, Ճեմալի, Խալիլի, Ֆեազիմ Կարաբեքիրի, Ֆուադի, Սամիի, Ֆեմալի եւ այլ գործակիցների հետ եւ համաչխարհային «պրոլետարական յեղափոխութիւն» էին խաղում, Հայաստանում հայ ժողովրդի արեան գնով խրախճանում, Բաքուի «ժողովուրդների համագումարի» բալագանում: Իսկ հայ բոլշեւիկները միայն ընդմիջումների ժամանակ հանդիպումներ էին ունենում «յեղափոխութեան» առաջնորդների հետ եւ արտայայտում իրենց ստրկական հաւատարմութիւնը, հանդէս գալով հայ ժողովրդի անունից, – թէ ով է նրանց լիազօրել՝ Աստուած գիտէ, – հաւատացնում էին, թէ իրենք պատրաստ են մինչեւ վերջին հայի կեանքը զոհաբերելու, եթէ այդ են պահանջում «համաչխարհային յեղափոխութեան», այսինքն թուրք աղգայնականների շահերը: Այս հայկական մարդակերութեան քաղաքականութիւնը նկատի ունէք Դուք, երբ ինձ մեղադրում էք, թէ ես ինչու Հայաստանի անկախութեան, Մայիս 28ի պատմական ակտը համարում եմ հայ ժողովրդի դարաւոր երազանքի իրականացումը, որով իբր թէ ես անտեսում եմ «լենինեան» պարտիականութեան սկզբունքը կամ պատմական կոնկրետ իրողութիւնների կապակցութիւնների «մարքսիստական» մօտեցման սկզբունքները: Ինձ համար խորթ է եւ նողկալի այդպիսի «պարտիականութիւնը», «կոնկրետ իրողութիւնների կապակցութիւնների» այդպիսի «մարքսիզմը»:

Ես գիտեմ միայն, որ այդպիսի «մարքսիզմը» ղինուեց ու տարածուեց Թուրքիայում արդէն Քեմալի օրերին, նրա շնորհիւ իր կառավարական որոշումով ստեղծած պաշտօնական «կոմունիստական» կուսակցութեան միջոցով, հայ բոլշեւիկներին չիմարացնելու եւ հայ ժողովրդի դէմին պատուհաս դարձնելու համար:

Եւ Դուք ուզում էք, որ ես էլ իբրեւ «մարքսիզմի» կլասիկ ճանաչեմ Քեմալ վաշային: Մնացէք հաւատարիմ Ձեր ուսուցչին: Այդ Ձեր գործն է: Իսկ ես մնում եմ իմ ժողովրդի հետ, հայ ժողովրդի դարաւոր իղձերի մարմնացումը կամ իրագործումը համարելով

1918 թ. Մայիսի 28ի պատմական իրողութիւնը, ո՛րքան էլ դուր չգայ պանթուրքիզմի մարդակերներին եւ նրանց իրօք հլու ապաստարկուներ Բաղալեաններին, Էլչիբեկեաններին, Արղումանեաններին, Ղարիբջանեաններին, Ալեխանեաններին, Օհանջանեաններին, Ոսկերիչեաններին, Կարինեաններին, Արոներին, Յովիկ Կարապետեաններին, Սեդուարդ Խարմանդարեաններին:

Այսպիսով, ինչպէս տեսնում էք, ե՛ւ լենինեան պարտիականութիւնը, ե՛ւ կոնկրետ իրողութիւնների մասին մարքսիստական պատկերացումը, ե՛ւ պատմական իրադարձութիւնները ոչ միայն 1917–1918 թ.թ. ե՛ւ հետագայ տարիներին, ե՛ւ Հոկտեմբերեան Ռեւոլիւցիայի լոզունգները, ե՛ւ Բաթումի եւ Բրեստի անալոգիան, ե՛ւ դաշնակցականների ու բոլշեւիկների վարքագծի համեմատութիւնը, բոլոր-բոլոր փաստերն ու տեսական դրոյթները վկայում են միայն այն մասին, որ՝

ա) Բաղալեանի յօդուածում եւ այդ ոգով սովետահայ ..... հատուկտոր «գիտական» աշխատութիւնների գալանսում միտումնաւոր կերպով պաշտպանում են թուրքական կառավարութեան արիւնարբու դաւադիրապահօսութիւնն ու քաղաքականութիւնը, նոյնացնելով մարքսիզմ-լենինիզմը այդ դաւադիրապահօսութեան և քաղաքականութեան հետ՝ քօղարկելով այդ միտումը յեղափոխական ֆրազների անամէջ դեմագոգիայով:

բ) Իրաւացի ու տեղին է իմ վրդովմունքը այդ մարդակերութեան փառաբանութեան փորձերի դէմ:

գ) Սուտն ու ղրպարտանքը հայ ժողովրդի պատմութեան հաստչէին՝ բնականաբար ստիպում են բողոքելու դրա դէմ եւ ասելու ճշմարտութիւններն ամբողջ մերկութեամբ: Իսկ այդ կը նշանակէր թաղել հայ բոլշեւիզմը, որպէս սեւիական ժողովուրդը կորցընելու առաջնորդող մի կոյր մտայնութիւն եւ աղէտ հայ հասարակական կեանքում: Թող այդպէս լինի: Եւ հաւատացած եղէք, որ պատմութիւնը վերջ ի վերջոյ այդպէս էլ վարուելու է:

Դուք միայն արագացնում էք այդ պրոցեսը, որից ես կարող եմ զոհ լինել:

Զ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿՈՉԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ

Արցախի հայութեան՝ «Հայաստանի ժողովրդին, կառավարութեանը, կուսակցութեան կենտկոմին եւ հասարակական կազմակերպութիւններին» յղուած տագնապալի կոչը եզակի է իր տեսակի մէջ: Ֆանզի դրանից առաջ եւ յետոյ այդ հայութիւնը, որքան յայտնի է, ուղղակի խնդրանքով չի դիմել հայաստանահայութեանը: (Ցամենայն դէպս, այդպիսի հրապարակուած փաստաթուղթ չկայ): Նա դիմել է Ադրբեջանի հանրապետական ու մանաւանդ մոսկովեան համամիութենական իշխանութիւններին, միշտ էլ քար երկդիմութեան կամ անտարբերութեան հանդիպելով: Իսկ այս դէպքում իսկապէս որ «աղէտեալ» եւ յուսահատութեան եզրին հասած արցախահայութեան համար ուրիշ հասցէ չի մնացել, քան մայր հայրենիքն ու մայր ժողովուրդը:

1967 թ· սեպտեմբերին արտասահմանում հրապարակուած կոչը հաւանաբար պատրաստուել է հենց նոյն թուականին: Կոչը տպուել է հետեւեալ թերթերում·– «ՅԱՌԱՋ» (Փարիզ) – 1967 թ· սեպտեմբերի 1, «ԱԶԴԱԿ» (Բէյրութ) – 1967 թ· սեպտեմբերի 8, «ԱԶԱՏ ՕՐ» (Աթէնք) – 1967 թ· սեպտեմբերի 9, «ԱԼԻՖ» (Թեհրան) – 1967 թ· սեպտեմբերի 13: Կոչը ռուսերէն թարգմանութեամբ լոյս է տեսել Արեւմտեան Գերմանիայի Մայնի Ֆրանկֆուրտի «ՊՈՍԵՒ» շաբաթաթերթում (1967 թ· սեպտեմբերի 20ին):

Ժողովածուի համար հիմք է ընդունում «Ալիֆ»ի օրինակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ,
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ,
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԵՒ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Թանկագին հայրենակիցներ.

Այս նամակով Ձեզ դիմում է Ղարաբաղի ալէտեալ ժողովուրդը, որի վիճակն այժմ աւելի ծանր է, քան երբեւիցէ եղել է խաղաղական բռնակալների ու մուսաւաթականների ժամանակ:

Մեզանից ոչ ոք տնից ելնելիս վստահ չէ, որ երեկոյեան տուն կը վերադառնայ: Անարդւում է մեր պատիւը, բռնադատւում են մեր իրաւունքներն ու արժանապատուութիւնը: Ոչ ոք չի լսում մեր բողոքի ձայնը, ոչ մէկը ականջ չի դնում մեր աղերսանքին: Հարիւրաւոր դիմումներ ենք յղել Մոսկուա՝ կենտրոնական կառավարութեանը, Ադրբեջանի ղեկավարութեանը, եւ այդ բոլորի պատասխանը եղել է կամ քար լռութիւնը, կամ մոլի հալածանքը մեր եւ մեր զաւակների հանդէպ: Այսօր արդէն տասնեակներով երիտասարդ ղարաբաղցիներ ապօրինի քանտերն են լցուած եւ կամ հեռացուած են աշխատանքից: Մեզ հասցրել են այնտեղ, որ մենք ստիպուած ենք մեր աւանդական հողը լքել եւ դառնալ տարագիր եւ անհայրենիք մի ժողովուրդ: Ցօղոտում են մեր զաւակներին եւ յօղոտողները դրանով չեն բաւականանում, սղծում եւ անարգում են նաեւ դիակները եւ ստիպելով ստիպում են մեզ, որ մենք էլ դիմենք յանցագործութեան:

Տասնեակ դէպքերից միայն մի քանիսը թուենք, որպէսզի պատկերացնէք, թէ ինչ է կատարւում Ղարաբաղում:

Մի երկու տարի առաջ Աղդամի կենտրոնում օրը ցերեկով ըսպանեցին մի երիտասարդի՝ Աւանէսեանին: Երբ չարագործ աղբրբեջանցուն հարցրեցին, թէ ինչու է դնդակ արձակել անմեղ անցորդի վրայ, նա լկտիաբար պատասխանեց. «Ծոի վրա՛յ էլ նշան բռնել, դնդակս նրան առաւ: Ինչքան է տուգանքը, կարող եմ վճարել»:

Տարի ու կէս առաջ Շուշուայ կուսակցական շրջկոմի շէնքի դիմաց երկու ադրբեջանցի կանդնում են ղարաբաղցի կոմունիստ դիւղատնտեսի դիմաց եւ ասում. «Այս բոպէին մի հայի պիտի սպանէինք, դու ես հանդիպել»: Եւ տեղն ու տեղը դնդակահարելով սպանում են: Մինչեւ այսօր դահիճն իր արժանի պատիժը չի ստացել, որովհետեւ նա Ադրբեջանի դատախազի աղղականն է եւ Ղարաբաղի մարզսովետի գործկոմի նախագահի տեղակալ Բայլարովի եղբայրը:

Մարտունու սովխոզի տեղամասի պետ Գրիշա Սողոմոնեանին սպանել, դցել են ճանապարհին: Նորաշէնի երկու երիտասարդ տրակտորիստների դիշերավարի ժամանակ դնդակահարել են:

Եւ այս բոլոր չարագործութիւնների հեղինակները «չեն յայտնաբերուել», որովհետեւ ադրբեջանցիներ են եղել:

Մարտունու սովխոզի տեղամասի պետ Բենիկ Մովսիսեանի տասնամեայ տղային սպանել են, զազանաբար յօշոտել եւ դիակը պղծել: Այս անդամ եւս յանցագործները «չէին յայտնաբերուել», եթէ մարդկանց համբերութիւնն արդէն սպառուած չլինէր, եւ եթէ ղոհի տէրերն իրենք բռնած չլինէին չարագործների հետքը:

Չարագործների ձերբակալութեան առաջին իսկ օրուանից սրբանց հարազատները դատարանի դահլիճում ու բակում, մարզկոմի շէնքի առաջ եւ քաղաքի փողոցներում բացէ ի բաց, անպատիժ յայտարարում էին, որ իրենք ոսկով փակելու են դատաւորների բերանները, իսկ ղոհուած երեխայի հարազատները խօսքով ու գրով, նամակներով ու հեռագրերով դատարանին ու մարզի ղեկավարութեանը, Բաքուի ու Մոսկուայի ղեկավար բոլոր Օղակներին հասկացնում էին, որ դխաւոր չարագործը պէտք է դատապարտուի դնդակահարութեան, ապա թէ ոչ իրենք են կատարելու նրա դատաստանը: Այս հիմքի վրայ քանի-քանի միջադէպեր են եղել դատարանի դահլիճում եւ շէնքի բակում: Բաքուի ու մարզի ղեկավարութիւնը, դիտակցաբար չունկնդրելով այս ամէնին, երբ հասցրեց կազմակերպուած պրովոկացիայի, կաշառուած դատաւորն իր կեղտերը ծածկելու ուրիշ ելք չդտաւ, քան վճիռը դատարանի դահլիճից հանել հրապարակ, կարդալ բացօ-

թեայ, երկարատեւ քաշքշուքից հաւասարակշռութիւնը կորցրած ամբոխի առաջ, չիկացած մթնոլորտում: Եւ ինչ· չարագործութեան կազմակերպչին, մարդի ամբողջ բնակչութեան գայրոյթի եւ ատելութեան առարկային տաս տարուայ ազատազրկութիւն միայն եւ հինգ տարուայ պայմանական...

Անարդարութեան դէմ գայրացած ժողովրդի վրայ կեղտաջրի չլթեր ուղղեցին հրշէջ մեքենաներից: Անյոյս կատաղութիւնից իրեն դէս ու դէն նետող տուժուածի՝ զոհի հօր վրայ կրակ բացեց պահակախումբը: Ապա մահարեր գէնքերից դնդակներ տեղացին վիրաւոր հօրն օգնութեան հասնող հարազատների վրայ, 12 հոգի մահացու վիրաւորուեցին եւ այժմ յայտնի էլ չէ, թէ որտեղ են եւ կա՞ն արդեօք: Եւ այսքանից յետոյ միայն գայրոյթից եռացող ամբոխը յարձակուեց չարագործների վրայ, սպանեց նրանց եւ դիակիզեց:

Ադրբեջանի չուվինիստ ղեկավարները շատ լաւ էին պլանաւորել այս վախճանը եւ չուշացան վրայ հասնել ու եղրափակել ամէն ինչ: Մինիստրների խորհրդի նախագահ, Լեռնային Ղարաբաղի հայրենասէրների հետ իր յատուկ հաշիւներն ունեցող Սլխանովը Ստեփանակերտ հասնելուն պէս հաւաքեց բոլոր ղեկավարներին, յայտարարեց, թէ մարզում հակասովետական նացիոնալիստական կազմակերպութիւն կայ եւ այդ կազմակերպութեան գործն է իր ցեղակիցների դատաստանը, թէ այս բոլորը նացիոնալիզմ է, հրահրուած Սովետական Հայաստանի կողմից: Եւ մարդից հեռանալուց առաջ նա հասցրեց անձամբ, ազգային չուքով, մոլլաների ուղեկցութեամբ թաղել չարագործների դիակները: Ապա եկաւ կուսակցական կենտկոմի քարտուղար Ախունդովը եւ միայն իրեն յատուկ խորամանկութեամբ հասկացաւ, որ Սլխանովը մերկացրել է իրենց քաղաքական խաղը: Ինչո՞ւ նացիոնալիզմ, երբ նրա տուտը քաշելիս Մոսկուայից եկածները կարող են պարզել, թէ որտեղից է գալիս իսկական նացիոնալիզմը:

— Այստեղ ոչ մի նացիոնալիզմ չկայ, — մարզային կուսակցական ակտիւի առաջ յայտարարեց ելքը գտած Ախունդովը, — Սա միայն երկու ընտանիքների թշնամանք է:

Եւ, այնուամենայնիւ, վերջում դահլիճի վրայ բռունցք թափ տալով ղուշացրեց. – Մոռացէ՛ք Հայաստանին միանալու ձեր պահանջը: Գիտցէ՛ք, որ Լեռնային Ղարաբաղը եղել է, կայ ու կը մնայ Ադրբեջանի անբաժանելի մասը:

Ոչ ոք պլսկից ձեռք չի քաշել, որ վեր կենայ եւ հակառակը պնդի... Ախունդովի գնալուց անմիջապէս յետոյ սկսուեցին մարդի եւ յատկապէս Ստեփանակերտի այն օրերը, որոնք յիշեցնում են 1918–20 թ.թ. ահաւոր ժամանակները:

Բաքուից անմիջապէս եկող միլիցիական եւ պետական անվտանգութեան այլազգի ղեկուցներով լցուել, պաշարուել է մարդի կենտրոնը, չդադարող հարցաքննութիւնների ու հետապնդումների մէջոցով սոսրացնում են նրա բնակիչներին: Ամէն օր բանտ են քշւում աղնիւներն ու համարձակները: Պաշտօնապրկւում ու հալածւում են կամայականութիւնների դէմ բողոքողները: Մարզի Հայութեան ճակատագրի տնօրէններ են կարգւում հին ու նոր դաւաճանները, ուրացողներն ու մատնիչները: Այս բոլորի վերջը չի երեւում: Իսկ եթէ երեւում է, ապա՝ դա վերջն է ամէն հայկականի, որ կենաց ու մահու գօտեմարտերում պաշտպանուել ու պահպանուել է մինչեւ այսօր:

Ադրբեջանի չուվինիստ ղեկավարների եւ ղարաբաղեան նրանց ձեռնածուների երազած օրն է սա: Նրանք հիմա ձեռք-ձեռքի դրած գալով սպանում են Հայութեան ոգին, ցեխի մէջ են թաղում նրա աղնիւ ու արդար դատը, որպէսզի հետագայում այլեւս ոչ մի ղնով հնարաւոր չլինի բարձրացնել:

Հայ ժողովո՛ւրդ – քո հատուածներից մէկը, որ դարերի մռայլ ու դաժան ճանապարհին միշտ բարձր է պահել քո անունը եւ անեղծ՝ իր ինքնութիւնը, հիմա օրհասական վտանգի տակ է:

Լեռնային Ղարաբաղը՝ արդէն անուժ ու անօգնական, կորցրել է ամէն ապաւէն: Մայր ժողովո՛ւրդ, որտեղ էլ որ կաս, քեզ ենք դիմում: Դու ես մեր յոյսն ու ապաւէնը: Դու սեփական կառավարութիւն ունես, ունես կուսակցական կենտրոն: Նրանց ձայնը չեն կարող չլսել: Դու ունես զաւակները, որոնց անուններն աստղերին է հասել, որոնք աշխարհի մեծամեծների հետ նստում,

քննում են երկրապնդի ու ժողովուրդների ճակատագիրը: Չի կարող պատահել, որ նրանց ձայնը չհասնի Կրեմլին, երկրի ղեկավարներին չհասնի փոքրիկ Լեռնային Ղարաբաղի մեծ ողբերգությունը:

Իր դաւաճան ղեկավարների ձեռքով աղրբեջանական չովինիստին ի կեր նետուած Ղարաբաղի Հայութիւնը սպասում է քո փրկարար ձայնին, հայ ժողովո՛ւրդ, մայր ժողովո՛ւրդ:

Է.

ԲԵՆԻԿ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԲԱՆՏԻՑ՝ ԻՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ ՄԻՔԱՅԷԼ ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻՆ

Բաֆուլի բանտից իր աւագ հայրենակից Միխայէլ Սողոմոնեանին Բենիկ Մովսիսեանը, ինչպէս երեւում է փաստաթղթից, նամակ է գրել 1967 թուականին: Բայց նամակը արտասահմանում հրապարակուել է յաջորդ տարուայ վերջին: Մովսիսեանի բանտ ընկնելու հանգամանքներն ու պատճառները բաւարար չափով ըկարագրուում են նամակում: Նա բանտ էր ընկել իր իննամեայ որդուն պղծած, խոշտանգած ու սպանած երեք ադրբեջանցիներին հրապարակօրէն զանգուածային դատաստանի ենթարկելուն մասնակցելու համար:

Բայց նամակում միայն անձնական ողբերգութեան ծալքերը չեն բացայայտուում: Դրանում երեւում է նաեւ հայրենասէր հայ երիտասարդի գաղափարական դիմագիծը, մտայնութիւնը եւ առհասարակ նրա հայրենի երկրամասի նկատագրի հետ կապուած ընդհանուր իրականութիւնը:

Բենիկ Մովսիսեանի նամակը հրապարակուել է հետեւեալ թերթերում.— «ԱԶԴԱԿ» (Բէյրութ) – 1968 թ· դեկտեմբերի 10, «ԱԶԱՏ ՕՐ» (Աթէնք) – 1968 թ· դեկտեմբերի 16 եւ 17, «ԱԼԻՔ» (Թեհրան) – 1968 թ· դեկտեմբերի 18, «ՀԱՅԱՍՏԱՆ» (Փարիզ) – 1968 թ· դեկտեմբերի 19:

Սոյն ժողովածուի համար հիմք է ընդունուում «Ազդակ»ում տպուածը:

ՅԱՐԳԵԼԻ ԸՆԿ· ՍՈՂՈՄՈՆԵԱՆ·

Յանկարծակիի չգաք: Ձեզ է դիմում Ձեր կենդանի դիակ հարեւանի որդի, յօշոտուած զաւակի հայր, այժմ բանտի բնակիչ Բենիկ Մովսիսեանը: Աչխարհը պատրաստւում է Մեծ Հոկտեմբերի յիսնամեակին, իսկ մենք՝ նորանոր դժբախտութիւնների: Հոկտեմբերի յիսնամեակի նախօրեակին հաւաքեցինք անմեղ, 10 տարին դեռ չբոլորած դպրոցական տղայիս մուսաւաթիստի կողմից կտրտուած, յօշոտուած դիակի պատառները, լցրեցինք փայտեայ դադաղի մէջ եւ հողին յանձնեցինք: Երեխայիս յօշոտողը մուսաւաթիստի որդի՝ ՍՄԿԿ-ի անդամ, դպրոցի դիրեկտոր, Ձեզ քաջ յայտնի Աբշադ Մամեդովն էր: Նա էր, որ դրանից մէկ տարի առաջ սպանեց Գրիշա Սողոմոնեանին՝ նրա ծերուկ հօրն ու երեք մանուկներին, երիտասարդ կնոջը թողնելով սգի ու աւերի մէջ: Գրիշայի հօր՝ Լեւոն քեռու աղեկտուր լայ ու կոծի արձագանքները ղօղանջում էին չատերիս ականջում, երբ նոյն դանակի ղոհը դարձաւ նաեւ որդիս, անմեղ դառնուկս: Ի՛նչ լաւ է, որ Դուք թուրքի կողմից մորթուած զաւակի հայր չէք: Դուք այդ մասին մեզ պատմել էիք դրքերից, իսկ ես տեսայ նաեւ իրականում: Գիտէ՞ք ինչքան ծանր է այդ: Քնել չի լինում, հանգստանալ չի լինում. ուզում եմ քնել՝ երեխայիս անկողինն եմ յիշում, փորձում եմ ուտել՝ որդուս մարմնից կտրտուած մսի կտորներն եմ յիշում, անընդհատ զաւակս է կանչում՝ «Հայրիկ, վրէ՛ժ...»:

Սակայն քո տուած խրատները դարձեալ չէի մոռանում: Յիշո՞ւմ էք, թէ ինչպէս էիք պատմում սովետական կարգերի առաւելութիւնների, ժողովուրդների բարեկամութեան, ինտերնացիոնալիզմի, սովետական օրէնսդրականութեան արդարացիութեան մասին: Մենք Ձեզ լսում ենք ու հաւատում:

Ձեր ասածներին ես հաւատացել եմ մինչեւ այս տարի, մինչեւ երեխայիս դահիճների վերաբերեալ դատավճռի ընթերցումը: Հաւատալով Ձեր ասածներին՝ սովետական օրէնսդրութեան ուժին ու արդարացիութեանը, դիմել եմ նախ շրջանային, ապա մարզային, այնուհետեւ հանրապետական ու միութենական դրեթէ բո-

լոր կոսսակցական, սովետական, արհմիութենական, կոմերիտական, դատական ու դատաքննչական օրգաններին ու խնդրել օրէնքով պատժել զաւակիս դահիճին: Դիմեցի եւ սպասեցի: Սպասեցի եւ դիմեցի: Այդպէս մի ամբողջ տարի: Աղրբեջանական հանրապետական կառավարութիւնը մի քանի ամիս պործը Մարտունու շրջանի դատական-դատաքննչական օրգաններում նեխացնելուց յետոյ, յանձնեց «ինքնավար» մարզի դատական-դատաքննչական օրգաններին: Նորից ամիսներ անցան, համարեա կասկած չէր մընում, որ իրօք մարդասպանը արժանի պատիժ կը ստանայ: Ըստ երեւոյթին այդ բանը հասկացան նաեւ Բաքւում: Բաքուի ղեկավարները սկսեցին անհանգստանալ՝ մի հայ երեխայի համար զըրկըւե՛լ պրոֆեսիոնալ հայատպանից: Զաւակիս մորթողների դատական գործը խլուեց հայերից: Ինքնավար մարզում, նրա հինդ շրջաններում մարդասպան դատող հայ չգտնուեց: Հայկական դատը յանձնուեց Թուրքի: Մարդասպան Թուրքին պէտք է դատէր ինքը՝ Թուրքը: Եւ ի՞նչ: Մինչեւ դատավճիռը կը յայտնուէր, փաստօրէն կենդանի չէին նաեւ բալիկիս զոյգ տատիկներն ու պապիկները, կենդանի դիակ էր դարձել կինս, բայց դեռ բոլորս չընչուում էինք:

Իսկ երբ կաշառուած դատաւորը աղաղարեց՝ «Արշադ Մամեդովին 10 տարուայ բանտարկութիւն», աչքերս մթնեցին, գըլուխս պատռուեց, լսեցի երեխայիս ձայնը՝ «Հայրիկ, խաբուած ես, բալիկդ է կանչում, բաւա՛կան է ինչքան ապրել ես, վրէ՛ժ...». ուրիշ ոչինչ չեմ յիշում...: Վիրաւորուելս չզգացի, չիմացայ ինչպէս ձերբակալուեցի, միայն մի բան եմ յիշում, որ բանտ նետուեցի: Երբ իմացայ, որ Արշադն այլեւս կենդանի չէ, 24 ժամ քնից չարթնացայ: Մի տարի չէի քնել: Զաւակիս թաղելուց յետոյ այդ առաջին անգամն էր, որ հանդիստ քնեցի, թէկուզ եւ բանտում՝ իբրեւ մարդասպան: Բայց մի՛թէ ես իրօք մարդասպան եմ: Զէ՞ որ ես մարդ չեմ սպանել, ամբոխը բանդիտ է ստեղծրել, վրէժ է լուծել՝ զաւակի՛ս վրէժը, արեան վրէժը: Ես փոխարինել եմ սովետական օրէնքին, ես վրկել եմ սովետական օրէնքի պատիւը, եթէ նոյնիսկ մենակ ինքս արած լինեմ, մի՛թէ ես մարդասպան եմ: Մի՛թէ թշնամուն ոչնչացնելը մարդասպանութիւն է

համարում: Այն դէպքում սովետական բոլոր մարդիկ քանտարկեալներ են: Չէ՞ որ նրանք ոչնչացրել են գերմանական մարդասպաններին. ապանողներին մենք չնորհել ենք հերոսի կոչում, պարգեւատրել ու փառաբանել, իսկ ես՝ ոճրագործին ապանելուն մասնակցելուս համար ձերբակալուել ու բանտ եմ նետուել:

Դուք յիշո՞ւմ էք, ընկ. Սողոմոնեան, երբ շրջկոմի քարտուղար էիք՝ եկաք գիւղ: Ես ու եղբօրդ տղան՝ վահանը դասերը թողած վազեցինք եկանք Ձեզ մօտ: Դուք Ձեր տանը մենակ էիք ու ախուր, 1953 թ. աշնանն էր: Դուք մեզ քէֆ ու հալ հարցրիք: Մենք ասացինք, որ լաւ ենք: Յիշո՞ւմ էք, ինչ պատասխանեցիք Դուք ինձ, երբ հարցրի. ընկ. Սողոմոնեան, ինչո՞ւ են մեզանից բուրդ ուզում, բուրդը որտեղի՞ց տանք: Դուք պատասխանեցիք.

— Ոչինչ, ուզում են, տուէք: Բաղիրովին դեռ չեն խուզել, երբ կը խուզեն՝ էլ ոչ ոքից բուրդ չեն ուզի:

Մենք չհասկացանք Ձեզ: Ձեր պատասխանը համարեցինք սովորական կատակ, ծիծաղեցինք եւ ուզում էինք դնալ, Դուք ասացիք.

— Տղերք, իմ ասածը ոչ ոքի չասէք: Մեր հարցին՝ ինչո՞ւ, Դուք պատասխանեցիք. — Որ իմանան ես այդպիսի բան եմ ասել, ինձ կը սպանեն: Յիշո՞ւմ էք այս բոլորը: Դժուար թէ մոռացած լինէք: Մեր այն հարցին, թէ ո՞վ կարող է Ձեզ սպանել, չէ՞ որ Դուք շրջկոմի քարտուղար էք, այն էլ հեղինակաւոր: Դուք պրեթէ չպատասխանեցիք: Միայն ասացիք՝ «Ես կը փրկուեմ միայն Հայաստանում»:

Ու մենք դնացինք, չհասկանալով ինչումն է բանը, մենք երեխայ էինք: Դուք ամէն ինչ մեզ ասել չէիք կարող: Շատ չանցած մենք լսեցինք, որ Դուք արդէն մեկնել էք Հայաստան: Այդ ժամանակուանից անցել է չուրջ 15 տարի: 15 տարի է ես Ձեզ չեմ տեսնում, բայց անչափ չնորհակալ եմ Ձեզանից: Ինձ հաղորդել են, որ Դուք Ձեր մայրիկի մահուան առթիւ լինելով դիւղում, այցի էք դնացել իմ բալիկի սուրբ գերեզմանին եւ դլխիկոր աղեկըտուր արտասուք թափել: Ինձ ասել են նաեւ, որ Դուք եղել էք մեր տանը եւ ծնողներիս ներչնչել համբերութիւն: Դուք նրանց ասել էք, որ սովետական օրէնքը արդար կը դատի: Իսկ Ձեր խօս-

քը մինչեւ հիմա հեղինակութիւն է ծնողներիս համար: Նրանք հաւատացել են Ձեզ եւ սկսել հանգստանալ: Ես այն կարծիքին չեմ, ի հարկէ, որ Դուք համոզուած էք ասել այդ, բայց դարձեալ չնորհակալ եմ, չէ՞ որ Ձեր հեղինակաւոր խօսքի չնորհիւ մինչեւ դատավճռի յայտարարումը ծնողներս համեմատաբար հանդիստ էին: Ճիշտ է, Դուք խաղացել էք Ձեր խօսքի հեղինակութեան հետ, բայց ոչինչ, այն ժամանակաւոր հանդիստ է բերել ծնողներիս: Եւ երբ մանկամորթի պաշտպան, դաւակամորթի պաշտպան, ամենաանմեղամորթի պաշտպան, բաքուեցի կաշառուած սրիկան աղաղակեց դատավճիռը՝ ծնողներս դուռացին՝ «Մի՛քայէլ, դո՛ւ էլ խաբեցիր մեզ»: Այդ պահին էր, որ աչքերս մթնեցին, այդ ձայնն էր, որ չփոթեցի մանկանս ձայնի հետ:

Հիմա ես թանտարկեալ եմ, յանցագործ: Հայասպանութիւնը յանցագործութիւն չէ, մուսաւաթասպանութիւնը՝ յանցագործութիւն, դաւակասպաշտպանութիւնը՝ յանցագործութիւն, մարդասպանին ձեռք չտալը՝ օրէնքի պահանջ:

Դուք ասացիք, որ Բագիրովին կը խուզեն: Ճիշտ դուրս եկաք: Մի՛ր Ջաֆարը խուզուեց: Բայց ի՞նչը փոխուեց: Փոխուեց միայն այն, որ այժմ մեզանից բուրդ չեն ուզում, Ղարաբա՛ղ են ուզում... Մի՞թէ բուրդն աւելի կարեւոր է, քան դաւակը, քան հայրենիքը... Բագիրովի ժամանակ մեր դիւղում ոչ մի ադրբեջանցի չէր ապրում, իսկ այժմ կայ ադրբեջանական 70 տնտեսութիւն: Ասում են, որ այդ ինտերնացիոնալիզմ է, ժողովուրդների բարեկամութիւն: Իսկ ինչո՞ւ է հայ եւ ադրբեջանական ժողովուրդների բարեկամութիւնը ամրապնդելու փորձ կատարում հայկական հողերն ու դիւղերը Ադրբեջանին տրուելու միջոցով: Եթէ իսկապէս տերխտորիալ պնդումները օգնում են հայ եւ ադրբեջանական ժողովուրդների բարեկամութեան ամրապնդմանը, ապա թող մեր դիւղացիները էլ հող ու տուն ստանան Հարեւան Մարզիլու, Գիչափլու, Սուղանլու, Ամիրանլար եւ միւս ադրբեջանական դիւղերից, թող Ղարաբաղը, Նախիջեւանը, Կիրովաբադը եւ միւս տերիտորիաները էլ տրուեն Հայաստանին: Այդ ի՞նչ ինտերնացիոնալիզմ է, որ պահանջւում է միայն հայերից՝ ինչ որ բան ադրբեջանցիներին տալու միջոցով: Գուցէ դա նոր

տեսակի ինտերնացիոնալիզմ է, որը դեռ չենք հասկացել: Բայց կարծեմ այդտեղ անհասկանալի ոչինչ չկայ: Անտեր ենք ու անպաշտպան: Հաւատարիմ ենք ու անբախտ: Աղատ Հայաստանը ինքնուրոյն պետութիւն է: Բայց չէ՞ որ պետութիւնը առանց բանակի աներեւակայելի է: Իսկ ո՞ւր է հայկական բանակը: Ի՞նչ կարող է անել Հայաստանի կենտկոմի քարտուղարը, – խնդրել Մոսկուայից: Ես էլ եմ խնդրել: Մոսկուան աւելի շուտ լսում է մահմեդական աշխարհին, քան իր երկրի պաւակամեռ որդիներին:

Ընկ. Սողոմոնեան. Դուք ինձ չմեղադրէք, ես Ձեղանից ոչինչ չեմ խնդրում, Դուք ինձ ոչնչով օգնել չէք կարող, միայն նամակս չպատռէ՛ք, չթաքցնէ՛ք, այլ կը մասսայականացնէք: Թող հայերն իմանան, թէ ի՛նչ վիճակում է Արցախի հայը... Հայաստանի քանի քանի մանուկների կեանք ես փրկել դու, թուրքերի, պարսիկների, թաթարների եւ ուրիշ հրոսակախմբերի դէմ քանի-քանի արշաւանքներ ես մղել դու, իսկ այժմ քո մանուկներին կուսակցական տոմսով մարդասպաններից պաշտպանել չես կարողանում:

Լենինի չքանչանակի՛ր Արցախ, քո հողի վրայ, բոլոր հայերի աչքի առաջ սպանում են քո մանուկներին միայն նրա համար, որ նրանք հայ են, քո թրքացած հայ ղեկավարների մասնակցութեամբ թուրք մոլլաները թաղում են Հայաստանին, թաղում, որին մասնակցում է նաեւ Հանրապետութեան կոմունիստ, մինիստրների սովետի նախագահը: Արցա՛խ, քո կենտրոնում Հանրապետութեան կուսակցութեան կենտկոմի առաջին քարտուղարը, թուրքը՝ յայտարարում է, «դու եղել ես, կաս ու կը մնաս Ադրբեջանի անբաժան ու անձեռնմխելի մասը», իսկ քո «հայ» կառավարիչները ծափահարում են: Արցախ, ո՞ւր ես վախցնում քո իսկական ղեկավարներին ու ո՞ւմ ես պահում դու:

Ովքե՞ր են քո ղեկավարները: Մելքումեանը, Հայկ Սարգսեանը, Սերոժա Աբրահամեանը, Շամիր Մկրտչեանը... Իմ զաւակից թա՛նկ Արցախ, իմ զաւակի գերեզմա՛ն Արցախ, հայութեան միջնաբե՛րդ Արցախ, քո զաւակները քո բանտերից անգամ բաժին չեն ստանում, մեզ տարել են Բաքուի բանտերը, որպէսզի Ֆիզիկապէս ոչնչացնելը աւելի հեշտ լինի: Հա՛յ ժողովուրդ, դու մի՛

սպասիր հերթով մորթուելուն: Ես այս չեմ ասում ինձ փրկելու համար: Ինձ այլեւս փրկութիւն չկայ, իմ զաւակին ոչ մի աղէտ վերակենդանացնել չի կարող, իմ բալիկի մօր սիրտը այլեւս ոչընչով չի մխիթարուի, ես մտածում եմ միւս հայերի մասին, մտածում եմ նրանց զաւակների կեանքի մասին, հայ մանուկների ու նրանց ծնողների մասին:

Հերթով որդեզրկուելու ու քանտ նետուելու տրամադրութիւնը ազգակործան է, ներկայ դէպքում՝ հայակործան:

Արցախը Հայաստանի համար մորթուած զաւակ չէ, մորթուելու վտանգի տակ է... Իմ զաւակիս մորթելուց առաջ ինձ ոչ ոք չի նախազգուշացրել, իսկ քանի-քանի տեղերից, քանի-քանի անգամ ձեզ զգուշացնում են Սովետական Հայաստան, հայայոյս Երեւան:

Ձեզ միշտ յարգող, Մեծ Հոկտեմբերի զաւակ, մուսաւաթների ձեռքով մորթուած զաւակի հայր, թուրքացած հայի մատնութեամբ մուսաւաթական զնդան նետուած, Հոկտեմբերի 50-ամեակի օրերին ալլահին մատաղացու, Լեռնային Ղարաբաղի (Արցախի)՝

ԲԵՆԻԿ ՄՈՎՍԻՍԵԱՆ

Ը.

ԱՐՑԱԽԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՊԱՐԶՈՂ ՄԻ ՆԱՄԱԿ–ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

1972 թ· նոյեմբերի 27ին Բէյրութի «ԱԶԴԱԿ» օրաթերթի մէջ տպուած եւ «Ծանր, յուսահատ վիճակ է ապրում հայոց Ղարաբաղը» վերնագրուած ու թղթակցութեան նմանուող փաստաթուղթը ուղեկցում էր այսպիսի բացատրութեամբ· «Հայաստանէն (Ֆրանսայի ճամբով) մեր պաշտօնակից «Հայրենիք»ին հասցուած է ստորեւ հրատարակուած եղերաշեշտ գրութիւնը՝ իբրեւ պատկերացում Հայոց Ղարաբաղի մերօրեայ կացութեան, տիրող հոգեվիճակին եւ ազրպէյճանեան իշխանութեան ստեղծած դառն պայմաններուն»: Փաստաթուղթը յաւելեալ վկայութիւն է մայր հայրենիքից անջատուած երկրամասի իրական կացութեան մասին:

Այս կապակցութեամբ, աւելորդ չէ մի քանի փաստական տուեալներ արձանագրել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վերին ղեկավարութեան վերաբերեալ: Թերեւս ղեկավարութեան փոփոխման թուականները կողմնորոշիչ նշանակութիւն ունենան եւ երկրամասի նկատմամբ վարուող քաղաքականութեան փուլերը կռահելու համար: Ի հարկէ, միշտ չէ որ ղեկավարութեան փոփոխութիւնը նաեւ անպայման ընթացիկ քաղաքականութեան արմատական փոփոխութիւն է նշանակում: Սակայն փորձը ցոյց է տալիս, որ խորհրդային երկրում աւելի յաճախ այդպէս է լինում:

Այսպէս, ըստ մեր տրամադրութեան տակ գտնուող մատենագրական տուեալների, Ադրբեջանի կոմկուսակցութեան Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտէի առաջին քարտուղար են եղել՝ Նիկոլայ Սամսոնի Շահնազարովը (1958–1962 թուականներին), Գուրգէն Ալահվերդու Մելիումեանը (1962–1973 թուականներին), Բորիս Սարգսի Կեւորկովը (1973 թուի հոկտեմբերից մինչեւ հիմա)։ Մարզային կոմիտէի երկրորդ քարտուղար եղել են միշտ էլ ռուսներ (յամենայն դէպս՝ ռուսական ազգանունով անձինք), – Վ. Վ. Կաստրիւլին (21·2·1963 – 26·1·1971), Ն. Ի. Վոլոդին (26·1·1971 – 9·1·1975), Վ. Ա. Բոգոսլովսկի (1975 թ. յունուարի 9ից մինչեւ, թերեւս, հիմա)։ Մարզային կոմիտէի երրորդ քարտուղարներ են եղել՝ Մ. Ա. Գրիգորեան (28·11·1963 – 20·1·1966), Ա. Ն. Յարութիւնեան (20·1·1966 – 11·1·1973), Մ. Ա. Գասպարեան (1973 թ. յունուարի 11ից ի վեր)։ Այժմ՝ Եղիշէ Սարգսեան։ «Աշխատաւորների պատգամաւորների Լեռնային Ղարաբաղի մարզային գործադիր կոմիտէի», – այսինքն՝ ձեւականօրէն պետական իշխանութեան, – նախագահներ են եղել՝ Ռուբէն Թեւոսի Շահրիմանեանը (1954ից մինչև 1963 թուականը), Մուշեղ Գրիգորի Օհանջանեանը (1963ից մինչեւ 1973 թուականը), Արմայիս Ամիրի Ասլանովը (1973 թուականի յունիսի 27ից մինչեւ հիմա)։

Ինչպէս յայտնի է, Լեռնային Ղարաբաղը, իսկ առաւել եւս՝ յարակից հայկական շրջանները, բոլոր առումներով մեկուսացուած են թէ Հայաստանից եւ թէ առհասարակ հայութիւնից ու աշխարհից։ Այնտեղ լոյս տեսնող հատուկենտ թերթերը չեն կարող ազատօրէն տարածուել ուրիշ վայրերում։ Իսկ այնտեղ ապրող հայութեան կեանքի վերաբերեալ ոչ մի տեղեկութիւն չի կարող թափանցել աշխարհում լոյս տեսնող հայկական կամ այլ որեւէ պարբերական հրատարակութեան էջեր, չխօսելով գրքերի մասին։ Ամենահասարակ որեւէ տուեալ կորզելու համար, ուրեմն, պէտք է երկար պեղումներ կատարել զանազան կողմնակի աղբիւրների մէջ, այդ դէպքո՛ւմ էլ լիովին վստահ չլինելով հաւաքուած տուեալների վաւերականութեան նկատմամբ։

«ԾԱՆՐ, ՅՈՒՍԱՀԱՏ ՎԻՃԱԿ Է ԱՊՐՈՒՄ ՀԱՅՈՑ ՂԱՐԱԲԱՂԸ»

Արցախ, Փոքր Սիւնիք, Լեռնային Ղարաբաղ: Հի՛ն ու հնաւանդ անուններ, հայ հող, Հայաստան: Բայց եղաւ այնպէս, որ այդ հողը պոկեցին, կտրեցին մայր Հայաստանից: Դա մի անարդարութիւն էր, որ կատարուեց արդարութեան յաղթանակից յետոյ... Այսուհանդերձ, յոյս կար, մարդիկ հաւատում էին, որ անջատուած մասնիկը, հայ Ղարաբաղը երբեւէ կը միանայ ամբողջովին՝ մայր Հայաստանին: Յոյս կար եւ յուսալով էլ սպասում էր ղարաբաղցին: Շատ դաժանութիւններ եղան ղարաբաղցի հայից այդ յոյսը խլելու համար: Երբ Ադրբեջանական հանրապետութեան ղեկն ու իրաւունքը դժնայիշատակ Բաղիրովի ձեռքին էր, ղարաբաղցին նոյնիսկ չէր կարող ասել, որ ինքը հայ է, Հայաստան աշխարհի որդի: Այդպիսի ամէն մի մարդ դատապարտւում էր հրապարակով: Վարձը՝ կարօտալի ճակատին խարանում էին «նացիոնալիստ» բառը եւ տանում այնտեղ, որտեղից վերադարձը հրաշքով կարող էր լինել:

Ղարաբաղի այս վիճակը մի քայ երախ էր դարձել, որ կուլ էր տալիս բոլոր նրանց, ովքեր արդարացիօրէն չէին ուզում այդ արհեստական բաժանումը...

Երկար սպասումներից յետոյ վերջապէս եկան աւելի բարեյաջող օրերը. մթնոլորտը թեթեւացաւ, ահը վերացաւ, մարդկանց կուրծքը ճնշող ծանրութիւնը կարծես այլեւս չկար: Ղարաբաղցին սկսեց իրեն աւելի ամուր զգալ պապենական հողի վրայ, սկսեց աւելի ազատ մտածել, աւելի ազատ արտայայտել իր իղձերը մայր Հայաստանի նկատմամբ: Գնաղդալը չատացաւ, հեչատացաւ: Եւ նա այլեւս վտանգ չունէր իր հայ լինելը, իր ազգային արժանապատուութիւնը ցոյց տալուց: Համարձակուեց նաեւ օրինական պահանջներ ներկայացնել Լեռնային Ղարաբաղի մարզային կենտրոնը՝ Ստեփանակերտը, որ տարիներ չարունակ հողին էր կպել եւ (դըլուխը) հողից վեր բարձրացնելու ուժ ու հնարաւորութիւն չունէր, միանգամից բացեց թեւերը, կատուցման չունչ ու թափ առաւ, ծաւալուեց, մեծացաւ, դեղեցկացաւ: Այստեղ էլ հաւաք-

ուեցին, կենտրոնացան, աճեցին մտաւորականները, որոնք կարող էին մարդի հայութեան անունից խօսել, ներկայացնել նրա խոհերն ու պահանջները: Լեռնային Ղարաբաղը արդէն ունէր իր դըրօղները, դերասանները, երդիչները, իր դիտնականները, մշակոյթի օջախները: Աղգային կեանքը մի տեսակ աշխուժացաւ, վերելք ապրեց: Սակայն եւ այնպէս մարդի հայութիւնը դժդոհ էր վիճակից, որովհետեւ այդպէս էլ մնում էր հատուած, բաժանուած մայր Հայաստանից:

Այս բանը զգում էին Աղրբեջանի նոր ղեկավարները, որոնք չէին ազատուել ու չէին էլ ուզում ազատուել իրենց նախորդների մտայնութիւնից ու չար ծրագրերից: Նրանք զգում էին, որ փոխուել են ժամանակները, եւ իրենց հայահալած քաղաքականութեան դէմ զօղօքողներին այլեւս չեն կարող լռեցնել ու աքսոր քշել: Ուրեմն, պէտք է ուրիշ կերպ գործել, հին «մեղաւորներին» վնասազերծելու նոր եղանակներ գտնել: Գտան այդ եղանակները: Սովորական գարձան աշխատանքից հեռացնելու, կուսակցական տոյժ ու պատիժ տալու փաստերը: Իսկ մարդի հանդէպ տնտեսական այնպիսի ճնշումներ գործադրուեցին, որ մարդիկ սկսեցին երանի տալ Բաղիրովի ժամանակներին: Զուլեցան նաեւ աղրբեջանական աղգամոլութեան գաղափարախօսները: Նրանք իրենց մամուլն ու գրքերը լցրեցին ամենաբազմազան անհեթեթութիւններով, որոնցից մէկի համաձայն՝ Ղարաբաղի հայերը խեղճ եկուորներ են համարւում իրենց հողի վրայ, մինչ կարծիքով՝ նոյն այդ հայերը ոչ թէ իսկական հայեր են, այլ բռնութեամբ հայացուած աղուաններ կամ թուրքեր: Իսկ մի երրորդը Ղարաբաղի, այսպէս կոչուած, ինքնավարութեան 40ամեակը «ողջունեց» հետեւեալ բարբաջանքով. «Եղել է Շուշին, եղել է Աղդամը, բայց նրանց միջեւ ընկած Ստեփանակերտ քաղաքը չի եղել»: Իբր հայկականը 40 տարուայ մէջ է, որ ընկել է աղրբեջանական երկու քաղաքների արանքը: Շուշուայ փառահեղ մասը, որ հայկական է եղել, կործանել են 1920 թուականին, վերջերս էլ աւերակները ջնջել դեռնի երեսից, որպէսզի չարագործութիւնը վկայող ոչինչ չմնայ: Եւ հիմա էլ օրը ցերեկով կոչ են անում վերացնել Շուշուայ հայկական դերեզմանոցները:

Եւ այսպէս, սկսուել է մի նոր արշաւ Ղարաբաղի հայութեան դէմ՝ սկզբում խիստ զգուշաւոր, իսկ յետոյ՝ բացայայտ ու սանձարձակ: Սկզբում խօսում էին միայն, յետոյ սկսեցին գործել: Հրաշէնով, խուլխլանի դանակով եւ մահացու այլեւայլ միջոցներով: Ղարաբաղի տարբեր վայրերում հայեր սպանուեցին: Օրերից մի օր սպանուեց... ոչ, յօշոտուեց, խոշտանգուեց Ցամեայ մի տղայ: Մարդասպաններին դատան. երեք աղրբեջանցի էին, որոնցից մէկը՝ այն զպրոցի դիրեկտորը, որտեղ սովորում էր նաեւ Ցամեայ տղան: Մարդասպաններին դատեցին եւ դատավճիռը կարդացին Ստեփանակերտի քաղաքային այգում, բացօթեայ: Դատական որոշումը մեղմ էր՝ ու անարդար: Ժողովուրդը, որ այլեւս չէր կարող համբերել, զայրացաւ, պոռթկաց, դիմեց ինքնադատաստանի. վառեց երեք մարդասպաններին: Դրան հետեւեց մի ահեղ հաշուեյարդար, որը ահա վեց տարի է չի աւարտւում ու չի մեղմանում: Բանտերը լեցուեցին ղարաբաղցի հայերով, որոնցից շատերը տանջամահ եղան հենց բանտի մէջ: Սարսափը տարածուեց ամէնուր, սպանութիւններ կատարուեցին մարդի տարբեր վայրերում: Ստեփանակերտի շրջանի Քռասանի դիւղում աղբրբեջանցի զինուորականները մորթեցին մի հայ դեղջկուհու եւ մնացին անպատիժ: Մարտակերտում ոչնչացրին կոլխոզային պահակի ամբողջ ընտանիքը. ոճրագործները մինչեւ օրս էլ «չեն յայտնաբերուել»: «Չեն յայտնաբերուել» նաեւ այն դիւերահէնները, որոնք Նոր-Շէնի դաշտում սպանեցին երկու հայ տրակտորիստներ: Իսկ Շուշուայ մասին խօսելն աւելորդ է, քանի որ այնտեղ ամսական մի հայ է սպանւում՝ դանակով, ատրճանակի գընդակով կամ մահադեղով:

Սպանութիւնների, ահաբեկումների այս չարքը վերջ չունի, քանի որ ամէն շաբաթ մի նոր ու առաւել ահաւորն է կատարւում: Վերջերս էլ աւտովթարի կազմակերպումով սպանել են մարդի դէմսաւոր վիրաբոյժ Շահէն Դանիէլեանին, եւ մարդի վախկոտ ղեկավարները չանում են այդ ստոր յանցագործութիւնը ներկայացնել որպէս պատահական աղէտ:

Աղրբեջանի ազգամոլ ղեկավարները Ղարաբաղը նուաճելու ամենայուսալի միջոցներից մէկն են համարում մարդի աչքաթաց ու

համարձակ մտաւորականների դէմ նիւթուող հալածանքները: Մարդում ստեղծուել է այնպիսի վիճակ, արդարութեան խօսք ասող եւ ընդվզող մտաւորականների չուրջը կրակի այնպիսի օղակ են ստեղծել, որ նրանք թողել են տուն-տեղ, պապենական հող ու բնակավայր եւ ապաստան փնտռել ուրիշ վայրերում: Նրանց յետեւից էլ Ղարաբաղից հեռանում են արհեստաւորներն ու մասնագէտները: Նրանք ուրիշ ելք չեն տեսնում այն վիճակից, որ Ադրբեջանի հայատեաց ղեկավարները եւ նրանց սպառնալիքի տակ էլ՝ մարդի ապիկար պաշտօնեաները են ստեղծել Ղարաբաղի անպաշտպան հայութեան համար: Որպէսզի պարզ լինի, թէ Ղարաբաղի ադրբեջանականացումն էլ ինչպիսի միջոցներով է կատարւում, բաւական է յիշել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի չարաբաստիկ օրինակը:

Տարիներ չարունակ ղարաբաղցիները պահանջել են, որ մարդում բացուի որեւէ ինստիտուտ: Վերջապէս, չորս տարի առաջ կատարուեց այդ պահանջը, բայց այնպէս նենգօրէն, որ ղարաբաղցիներն այս անգամ էլ խնդրեցին՝ ինստիտուտ չտալ իրենց: Ինչո՞ւ: Որովհետեւ Ստեփանակերտում ստեղծուեց մանկավարժական ինստիտուտ, որի կէսը ադրբեջանական է, ադրբեջանցիների համար, Ղարաբաղում չբնակուող ադրբեջանցիների: Բայց Ստեփանակերտում ի՞նչ անելիք ունի ադրբեջանական բաժանմունքը: Պարզուեց, որ մեծ անելիք ունի, այն դարձաւ իւրայատուկ հարուած, որ իջեցուեց ուղիղ հայկական Ղարաբաղի կրծքի վրայ...

Հիմա օրըստօրէ բաղմապատկուում է այդ տարրը, իր ձեռքն է առնում վարչական օղակներ ու պաշտօններ: Բաւական է ասել, որ քաղաքի միլիցիայի աշխատողներն արդէն հիմնականում ադրբեջանցիներ են, եւ նրանք պիտի «պաշտպանեն» հայ աշխատաւորների իրաւունքները...

Ծանր, յուսահատ վիճակ է ապրում Հայոց Ղարաբաղը: Ղարաբաղին շատ է թողոքել, եղել է՝ ընդվզել է իր արդար իրաւունքները պաշտպանելու համար, բայց մնացել է միշտ անպաշտպան: Եւ ինչո՞ւ, մինչեւ ե՞րբ... Ոչ մի հանրապետութիւնում այնքան շատ չեն խօսում եղբայրութեան մասին, որքան Ադրբե-

ջանում: Ո՞ւր է այդ եղբայրասիրությունը, ո՞ւր են Ղարաբաղի հայության եղբայրները...

Եթե չեն ցաւում ուրիշների սրտերը, եթե այդպիսին են նրա հետ եղբայրացածները, ապա ի՞նչ են մտածում արևմտահայ եղբայրները, հայ եղբայրները:

Թ.

ՊԱՐՈՅՐ ՀԱՅՐԻԿԵԱՆԻ «ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ» ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Անցած 15 տարում խորհրդային Հայաստանում ոչ միայն գրական ու բարոզչական բնոյթ կրող որոշ թուով համարձակ ելոյթներ եղան հայոց նորագոյն պատմութեան դրուագները առարկայօրէն լուսաբանելու, հայ ազգի ճակատագրի հետ կապուած կրնճռոտ խնդիրների արդար լուծում պահանջելու ուղղութեամբ, այլեւ ձեւաւորուեցին իճիճուրոյն գործուն խմբեր՝ կազմակերպական ճանապարհով պայքար մղելու նպատակով: Շարժումը յատուկ թափ ստացաւ մանաւանդ 1965 թուականից ի վեր: 1966 թուին այդպիսի մի քանի խմբեր միաւորուելով՝ հիմնեցին «Ազգային Միացեալ Կուսակցութիւնը» (ԱՄԿ-ն), ազգային-հայրենական գաղափարախօսութեամբ ու ծրագրով: Ըստ եղած տեղեկութիւնների, կազմակերպութեան անդամները հիմնականում երիտասարդներ են եւ սկզբից մինչեւ հիմա էլ անողոք ճնշամիջոցների են ենթարկուել: 1965ից մինչեւ 1974 թուականը, իրենց ազգային-հայրենասիրական գործունէութեան համար, դատուել ու ռուսաստանեան սառցավայրեր են ուղարկուել աւելի քան 80 մարդ: Հենց միայն 1973ի նոյեմբերից մինչեւ 1974 թուի նոյեմբերը՝ Հայաստանում տեղի են ունեցել այդ կարգի 9 դատավարութիւններ: Հայաստանեան հասարակական կեանքի այս բնագաւառը շատ ընդարձակ է եւ իճիճուրոյն հետազօտութեան կարիք ունի ու այստեղ չի կարող բաւարար չափով լուսաբանուել:

Բայց տեղին է գէթ մասնակի չափով անդրադառնալ Պարոյր Հայրիկեանի գործունէութեանը, որը, ըստ արտասահման հաստած «ինճնահրատարակչական» նիւթերի վկայութեան, ներկայումս յիշեալ կուսակցութեան (1968 թուից սկսած) քարտուղար է համարւում: Հայրիկեանը ծնուել է 1949 թուին: Առաջին անգամ ձերբակալուել է 1969ին եւ դատապարտուել 4 տարուայ բանտարկութեան, «պատիժը կրելով» Մորդովիայի «խիստ ռեժիմի» համակենտրոնացման ճամբարում: 1973ին վերադարձնել է հայրենիք՝ այսպէս ասած «վարչական հսկողութեան տակ»: 1974ի փետրուարին նորից է ձերբակալուել ու նախապէս դատապարտուել երկու տարուայ ազատազրկման, իսկ յետոյ էլ՝ նոյեմբերին դատապարտուել 7 տարուայ բանտարկութեան ու յաւելեալ 3 տարի աքսորի: Հայրիկեանը «Ազգային Միացեալ կուսակցութեան» անդամ է սկզբից ի վեր: Հայրիկեանի վերաբերեալ գոյութիւն ունի «ինճնահրատարակչական» հարուստ գրականութիւն, որը առանձին գրքով Նիւ–Եորքում լոյս տեսաւ արդէն ռուսերէն: Որքան յայտնի է, Հայրիկեանին վերաբերող նիւթերը թարգմանուել են հայերէնի եւ նոյնպէս պէտք է տպուեն առանձին գրքով: Հայրիկեանի անունը յաճախ է յիշատակւում նաեւ «Միջազգային Ներում» կազմակերպութեան պատրաստած ու հրապարակած փաստաթղթերում:

Այս ժողովածուում, իրրեւ նմոյշ, զետեղւում է երեւանեան դատավարութեան ժամանակ՝ 1974 թ· նոյեմբերի 22ին Հայրիկեանի արտասանած «վերջին խօսքը»: Հայրիկեանի հայերէն խօսքը նոյնութեամբ չի սղագրուել, այլ միայն ամփոփուել է դատասըրահում, այնուհետեւ թարգմանուել է ռուսերէնի եւ այժմ մեր կողմից վերստին հայերէնի է վերաթարգմանւում ռուսերէնից: Հետեւապէս, բուն խօսքի փոխարէն՝ նրա բովանդակութիւնն է հաղորդւում:

ՊԱՐՈՅՐ ՀԱՅՐԻԿԵԱՆԻ «ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ»

Միակ բանը, որ ես կարող էի խնդրել դատարանից՝ արդարադատութիւնն է, փաստերի իսկական դնահատականը: Բայց դա էլ հենց դատարանի պարտականութիւնն է: Հետեւապէս, խնդրելու ոչինչ չունեմ: Ջեմ հաւատում, թէ դատարանը, նոյնիսկ ցանկանալու դէպքում, կարող է անաչառ լինել, քանի որ ինձնով չափից աւելի անհանդստացած է Պետանվտանգութեան Կոմիտէն: Բացի այդ, ես տեսայ դատաւորի իրաւունքների ուղղակի ոտնահարումը՝ մլիցիայի ու Պետանվտանգութեան Կոմիտէի աշխատակիցների կողմից[1]: Օրինակ, նախորդ նիստում, անցնելով ամէն տեսակ սահման, նրանք յայտարարեցին. «Դատաւորը չի կարող մեզ կարգադրութիւններ անել»: Առանց ուժեղ հովանաւորութեան՝ ոչ մի մլիցիոներ չէր համարձակուի այսպիսի յայտարարութիւններ անել, որովհետեւ, ըստ օրէնքի, դատարանում կացութեան տէրը նախագահն է հանդիսանում:

Ես դատապարտում եմ նախնական քննութիւնը եւ նիւթերի, վկաների ցուցմունքների, իրեղէն ապացոյցների ու դրանցից բխող եղրակացութիւնների քննութիւնը: (Հետաքննութեան մօտ) տարակուսանքներ ու կասկածներ կարող են լինել եւ դա բնական է: Ես դրան տուել ու յաճախ եմ առիթ տալիս: Բայց մարդուն կարելի է դատել, վերջին հաշուով, միայն փաստերի, այն էլ լուրջ փաստերի հիման վրայ: Եթէ հետագայում մէկնումէկը ծանօթանայ նախաքննութեան բոլոր նիւթերին, ուշադրութեամբ կարդայ բոլոր վկաների ցուցմունքները, մասնաւորապէս այն ցուցմունքները, որոնք տրուեցին դատարանում մեղադրող կողմի միակ վկայի կողմից, ապա նա կ'ասէի դատախազի պահանջից[2]: Մեղա-

---

1) Դատարանի դահլիճ մանելը թոյլ չէին տալիս մարդկանց մլիցիան ու Պետանվտանգութեան Կոմիտէն, մինչդեռ դատասրահում ներկայ լինելու թոյլտուութիւն էին խնդրել դատաւորից:

2) Դատախազը պահանջեց 10 տարուայ ազատազրկում՝ յատուկ ռեժիմի ճամբարում եւ յաւելեալ չորս տարուայ աքսոր:

դրանքը պէտք է լրջօրէն հիմնաւորուի, իսկ քննութեան նիւթերից: Բայց դատախազի հիմնական մեղադրանքները վերաբերում են իմ տեսակէտներին, որոնք ես իմ իննամսեայ յարաբերական աղատութեան ընթացքում ոչ ոքի եւ ոչ մի առիթով չեմ յայտնել եւ որոնք Պետանվտանգութեան կոմիտէն եւ հենց մեղադրողը իրենց համար պարզել են հարցաքննութիւնների ժամանակ...

Դատախազի նկատմամբ իմ արած «խղճուկ սպասեակ» արտայայտութեան առթիւ: Նա յայտարարում էր, թէ իրենք չեն առաջնորդւում քինախնդրութեամբ: Նա ոչինչ չկարողացաւ անել, քան (դրա համար) աւելացնել եւս մէկ տարի: Ես ինքս դա առաջարկեցի նրան: Իսկ նա առաջնորդւում է ոչ միայն կոյր, մոլեռանդ քինախնդրութեամբ, այլեւ հրամանով, աւելի ճիշտ՝ Մոսկուայի ուղղակի ցուցումով:

Նրա ճառը ըստ էութեան մեղադրական չէր, այլ զամբանական ճառ: Պետանվտանգութեան կոմիտէն իր խօսքը պահեց: «Մենք քեզ կը կործանենք», – ասում էր Զամբարեանը, իսկ Յուդոյեանի պահանջը դրա հաստատումն էր[3]: Ոչնչացուելու վախը չէ՛ պատճառը, որ ասում եմ այդ մասին, այլ (դատախազի կողմից) ելոյթի սկզբում արուած՝ մարդասիրութեան մասին ամբոխավարական, կեղծ յայտարարութիւնները նշելու ցանկութիւնը: Նա որքա՛ն չատ խօսեց մարքսիզմի մասին, Լենինի մասին, նրա հզօր ուսմունքի մասին, նրա հատորների մեծաքանակութեան մասին: Իսկ ինչո՞ւ է նա մոռանում, որ աւելի Ցարական Ռուսաստանը Լենինին չէր անուանում կրկնայանցագործ (այն էլ 25 տարեկան հասակում)՝ ցարիզմը տապալելու մասին ունեցած նրա տեսակէտների ու նրա քարոզչութեան համար: Մենք ստիպուած էինք մըտածել սեւ հացի մասին, իսկ Լենինը նոյնիսկ կաթ էր ստանում, որով նամակներ էր գրում... Նա աքսորում նպաստ էր ստանում միեւնոյն ցարից: Իսկ ես, եթէ մէկ օր չէի աշխատում, 15 օրուայ պատժախուց էի ստանում...

---

3) Զամբարեանը հետաքննութեան դատախազ էր, իսկ Յուդոյեանը՝ դատարանի դատախազ:

Դատարանում նախագահն ասաց. «Դուք կը համոզուէք, որ դատարանը ոչ թէ 10 տոկոսով, այլ 100 տոկոսով անկախ է»: Ինչպէ՞ս հաւատալ, որ, (ամէն բանից զատ), տուժող կողմը կարող է արդար լինել: Եթէ ես հակասովետական եմ՝ հակակոմունիստ, ապա տուժող կողմը՝ կոմկուսակցութիւնը ձեր կուսակցութիւնն է: Արդեօք դուք կարո՞ղ էք ի սէր ճշմարտութեան մոռանալ ձեր պատկանելիութիւնը կուսակցութեանը մի կուսակցութեան, որի սկզբունքն է հանդիսանում գաղափարական հակառակորդների մարմնական ոչնչացումը: Աղգային Միացեալ Կուսակցութիւնը չունի պատմական անխոհեմութիւն՝ դատապարտելու որեւէ քաղաքական գաղափար, սխալ համարելու այն ու նրա վերացումը պահանջելու: Այնպէս որ առանձին վերցրած կոմունիստական գաղափարախօսութեան հետ մենք ոչ մի հաշիւ չունենք: Իբրեւ աղգային ժողովրդավարական կուսակցութեան անդամ, ես գտնում եմ, որ պէտք է լինի իրական կեանքի բոլոր դոյների (քաղաքական ուղղութիւնների) ազատ ներդաշնակութիւն. միայն նրանց բնական համադրութիւնը կարող է իսկական լոյս ստեղծել: ԱՄԿ–ի դրօշը, որի մասին ես լսել եմ 1969 թուին, դրա վկայութիւնն է՝ 7 դոյն եւ սպիտակը... Եւս մի բան. ԱՄԿ–ն, ի տարբերութիւն կոմկուսակցութեան եւ առհասարակ ուրիշ կուսակցութիւնների, ձգտում է ոչ թէ քաղաքական իշխանութեան, այլ համազգային նշանակութիւն ունեցող (անկախութեան) հարցի լուծման, որից յետոյ, ըստ իս, նա կը դաժանուի առանձին քաղաքական կուսակցութիւնների կամ կազմակերպութիւնների:

Ճիշտ նոյն ձեւով էլ սուտ է հանդիսանում ԱՄԿ–ն իբրեւ հակախորհրդային որակելը: Այլապէս, ինչպէ՞ս կարող էին ԱՄԿ–ի ներկայացուցիչները՝ Մարտիրոսեան եղբայրները, Բաղալեանը, Սահակեանը, Առաքելեանը եւ ուրիշները, դատապարտուել իբրեւ հակախորհրդայիններ: Պարզապէս դեռեւս չկայ անկախութիւնը մեղադրող օրէնք, դրա համար էլ ԱՄԿ–ն անուանում են հակախորհրդային:

Այնքան հարցեր տրուեցին, որոնց ես պատասխանեցի, ու դոնէ մի անգամ ինձնից ղրպարտութիւն լսեցի՞ք՝ խորհրդային կարդերի, սոցիալ–քաղաքական կառուցուածքի հասցէին...

Դատախազը խօսեց ազդերի ձուլման մասին, իսկ ո՞վ է դէմ դրան, եթէ դա պատմական անհրաժեշտութիւն է: Բայց իբրեւ մարքսիստ, նա պէտք է հասկանար, որ խակապէս «միջազգային» կապերի համար ամէնից առաջ անհրաժեշտ է իրաւահաւասարութիւն, այսինքն՝ արդարութեան լրիւ վերահաստատում (ես նկատի ունեմ հայերի պատմական իրաւունքները Նախիջեւանի, Արցախի եւ Արեւմտեան Հայաստանի նկատմամբ):

Պետանվտանգութեան կոմիտէն նախապէս լինճ ձերբակալեց մլլիցիայի օգնութեամբ ու դատապարտեց 2 տարուայ ազատազրկման, իբր թէ վարչական հսկողութեան կանոնները խախտելու համար: Այն ժամանակ նրանք կարծում էին, թէ Ռուբէնի[4] ցուցմունքները եւ ուրիշների ցուցմունքները, որոնք արդէն յայտնի են դատարանին (իմ յայտարարութիւններից բացի, որոնք դեռեւս գրուած չէին), բաւական չեն գործ յարուցելու համար, եւ 2 տարով դատապարտելուց յետոյ՝ լինճ տեղափոխեցին Պետանվտանգութեան բանտ, հարցաքննեցին նախ միայն իբրեւ վկայ Ռուբէնի գործի առթիւ: Այդ ժամանակ լինճ հասկացնել տուին, որ ես երկու ելք ունեմ՝ կամ սակարկել, ի տէր իմ ազատման լիովին հրաժարուելով անկախութեան դաղափարից, կամ էլ հաշտուել այն բանի հետ, որ դա կեանքիս վերջաբանն է...

Ղամբարեանը սպառնում էր. «եթէ չհրաժարուես անկախութիւնից, մենք քեզ կթկուզ եւ փոքր գործով խիստ կը դատապարտենք»: Կը դատապարտե՛ն, հասկանո՞ւմ էք, այլ ո՛չ կթէ կը մեղադրեն, եւ պահանջում էին հրաժարուել ոչ թէ հակախորհրդային հայեացքներից, այլ անկախութիւնից: Եւ այստեղ ես որոշեցի այլեւս չխղճալ լինքս լինճ, ու այդպիսի գնով պատժել նրանց, ու նոր ձեւով իմաստաւորել ձերբակալութիւնը: Ես յայտարարեցի, որ անցեալում եղել եմ ԱՄԿ-ի անդամ ու հիմա էլ չեմ հրաժարուել անկախութեան դաղափարից: Իբրեւ ԱՄԿ-ի գաղափարական անդամ՝ երկու անդամ մասնակցել եմ բողոքի հացադուլ-

---

4) Խաչատրեանը մեղադրող կողմի միակ վկան էր:

ներին[5], որոնք Պետանվտանգության Կոմիտեին խուճապի մատնեցին, ընդհուպ մինչեւ Մոսկուան:

Դրանից յետոյ՝ որքան նրանք աւելի շատ գործ ունեցան ինձ հետ, այնքան աւելի շատ աճեց նրանց սարսափը, եւ հետեւանքը եղաւ այն, ինչով որ ինձ սպառնում էին Անվտանգության Կոմիտէում ու նոյնիսկ աւելին. այնտեղ խոստացան 10 տարի, իսկ այստեղ պահանջեցին 14... Առանց այն էլ՝ այդ յօդուածներով ազատազրկումը տաժանակրութիւն է, իսկ դրան աւելացուած է եւս մի ճեւականութիւն՝ լրացուցիչ աքսոր:

Իսկ ի՞նչ կը լինէր, եթէ որ ես լռէի (որի մասին խօսեց դատախազը): Մի՞թէ ես չէի հասկանում, որ ինձ առաջարկելով իմ հայեացքները չարաշրել՝ նրանք ստոր նպատակներ էին հետապնդում: Ես հասկանում էի, բայց բանն այն է, որ ճշմարտութիւնը վախ չի ճանաչում, եւ ես, տեսնելով որ իմ առջեւ նստած են ոչ թէ օրէնքի, արդարութեան պաշտպանները, այլ մարդկային խղճի վաճառականները, հրաժարուեցի բոլոր արդար սպասումներից...

Այսօր ես, Մոսկուայի սարսափելի ղոհը, Կրեմլի ղոհը, դատի եմ տրուած այն բանի համար, որ հանդիսանում եմ անկախութեան պաշտպանի կողմնակիցը, նրա սոսկ դաշտպանական կողմնակիցը: Ես չեմ ղղջում, չեմ ողբում եւ ինձ համարում եմ Աւարայրի կամ Սարդարապատի ղոհերից մէկը:

Այսօր մենք հանդիսանում ենք ազգային մեծադոյն ողբերգութեան վկաները, եւ ես սա ոչ միայն տեսել, հասկացել, այլեւ զգացել եմ սեփական մաշկի վրայ: Հայաստանը դատում ու Սիբիր է քշում հայ հայրենասէրներին: Մեր պատմութեան ընթացքում մենք տեսել ենք բազմաթիւ թշնամիներ ու իշխանաւորներ, բայց երբեք հայոց պետութիւնը, նոյնիսկ օտարներին ենթակայ վիճակում, չի հալածել հայ հայրենասէրներին նրանց հայրենասիրական գործունէութեան ու, առաւել եւս, նրանց հայեացքների համար:

---

5) Պետանվտանգության բանտում հետաքննության ժամանակ:

Մի՞թէ դուք չկռահեցիք, թէ ինչու զրեթէ բոլոր վկաները մերժեցին պատասխանել ձեր տուած հետեւեալ հարցին, որը նաեւ մեղադրողի հարցն էր, – «Դուք հետագայում պայքարելուց հրաժարուել էք վախի՞ պատճառով, թէ՞ (նախկին սխրքերը սխալ հասկանալու) պատճառով»: Պատասխանելուց նրանց հրաժարուելը ինքն ըստ ինքեան պատասխան է. ո՞ւմ է հաճելի բանտի մէջ փտելը: Իսկ Պետանվտանգութեան կոմիտէի կողմից՝ սոսկ բանտ ու աքսոր է, սարսափ ու ահաբեկչութիւն...

Մեր ժողովրդի պատմութիւնը իրենից ներկայացնում է զըլխատուած վերածնունդների անընդհատ մի շարք, եւ ինչպէ՞ս լռմանալ, դուցէ եւ այս դատաստաններում նոյն բանն է կատարուում: Ոչ թէ ժամանակներն են փոխուել, այլ պարզապէս այսօր Զարենցի նման բանաստեղծներ չկան: Որեւէ մէկը, ում որ այսօր զրի «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ», «Դէպի լեառը Մասիս» կամ «Համար 5ի յիշատակին» բանաստեղծութիւնները, անմիջապէս բանտ կը նետուի: Մեզ հարկաւոր է անկախութիւն, որպէսզի չկրկնուեն 15, 37, 49 թուականները: Որպէսզի հայերը չդատեն հայ հայրենասէրին, որպէսզի նորից մենք չկորցնենք Կոմիտասի, Վարուժանի ու Սիամանթոյի, Զարենցի ու Բակունցի, եւ շատշատերի, որոնց հաշիւը չկայ... Արդեօք չարենցները, որոնց յիշատակին այժմ այնպիսի եռանդով խունկ են ծխում, չե՞ն հանդիսանում նոյն ոչու գոհերը, (որը դատում է գոհերին):

Դատախազը անկախութիւնը համարեց դատելի ու հակախորհըրդային միայն այն պատճառով, որ ԽՍՀՄ–ից Հայաստանի դուրս գալով Խորհրդային Միութիւնը մասնակիօրէն կը թուլանայ:

Ինչո՞ւ ինձ զրկեց մէջամտելու իրաւունքից ու նոյնիսկ ինձ մեղադրեց զրպռութեան մէջ:

Ընդունում եմ, որ որոշ չափով անհամեստութիւն ու չափազանցութիւն էր ասել «Իմ խնամակալութեան ներքոյ Հայրենիքը իմ». բայց դա նշանակում է, որ ես դեռ իմ պարտքն եմ համարում իմ հայրենիքի անկախութեանը հասնելը, եւ ես պիտակցում եմ նման յայտարարութեան պատասխանատուութիւնը: Խուդոյեանը զուր փորձեց չարաչահել այդ բանը...

Պետանվտանգության Կոմիտէի հետաքննական բաժնի պետի տեղակալ Ենգիբարեանը Մոսկուայի ցուցումը մեկնաբանեց, «դատել արագ ու խիստ», հետեւեալ ձեւով. «Դրանով մենք կը վերացնենք ԱՄԿ-ի չյայտնաբերուած անդամներին»: Հսկողութեան դծով դատախազ Ղամբարեանի խոստումը՝ «մենք քեզ կ'ոչնչացնենք», որի իրագործումը հնարաւոր դարձաւ միայն դատարանի աջակցութեամբ, հարցը չի սպառում: ԱՄԿ-ի հետ հաշիւներ մաքրելը բաւական դժուար է: ԱՄԿ-ն իրրեւ գաղափար եւ գաղափարի իրագործում՝ կայ եւ պիտի լինի միշտ, քանի դեռ չէ լուծուած հայ դատը: Նրա հետ են բոլոր հայերը: Իսկ ինչ վերաբերում է իմ ոչնչացմանը, (ինչ որ շատ հեշտ ու հնարաւոր է), հայ ժողովրդի թշնամիները դեռ երկա՛ր ժամանակ պիտի պայքարեն իմ երդերի, մանաւանդ նորերի դէմ...[6]

Սոսկ միայն բառերի համար, սոսկ միայն արտայայտած տեսակէտի համար (եւ այն էլ իրրեւ պատասխան Պետանվտանգութեան Կոմիտէի ու դատարանի հարցերին) – տասնչո՛րս տարի... Դա ապացուցում է ձեր՝ կոմունիստների ոչ միայն գաղափարական թուլութիւնը, այլեւ ուղղակի անանկութիւնը: Այդ ո՞ր քաղաքակիրթ երկրում են դատում մարդկանց գաղափարի համար: Որեւէ աղատ երկրում արդեօք խոչտանգո՞ւմ են կոմունիստներին:

Չէ՞ որ ՅՍՀՄ-ը եւս յաւակնում է քաղաքակիրթ համարուել, նա ստորագրել է ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների յայտարարագիրը, ընդունել ՄԱԿ-ի կանոնադրութիւնը...

Արդեօք դատարանին չի՞ թւում, որ ես կարող էի ազատութեան մէջ յօդուածներ գրել այնպիսի բնոյթ կրող, ինչպիսիք որ իմ յայտարարութիւններն են[7]: Նման յօդուածների բացակայութիւնը արդեօք իմ անպտղութեան ապացոյց չէ՞ (մինչեւ ձերբակալութիւնը)...

---

6) Գրուել են Պետանվտանգութեան բանտում՝ հետաքննութեան ժամանակ:

7) Հետաքննութեան ժամանակ գրուած եւ հասցէագրուած զանազան պաշտօնական մարմիններին՝ խորհրդային ու միջազգային, որոնք մտցուել են մեղադրանքի մէջ:

Վերջին 10–11 ամիսների ընթացքում սա 9րդ դատավարությունն է, Պետանվտանգության Կոմիտէի կողմից վարուող գործերի առթիւ: Նորից յիշեցնում եմ, որ դա ցեղասպանութեան օղակներից մէկն է: ԱՄԿ–ին հալածելը ցեղասպանութիւն է հանդիսանում՝ ծանրագոյն միջազգային յանցագործութիւն: Եթէ դրա արձագանգը չի լսւում հիմա, կը լսէք վաղը: Ի՛ննը դատաստաններ. դա պատմական հզօր բողոքի ցո՛յց է, եւ եթէ մեր հետնորդները ամաչեն, ապա կ՝ամաչեն մեզ մեղադրողների՛ պատճառով, իսկ եթէ հպարտութեամբ նայեն աղդի պատմութեանն ու անցեալին՝ ապա միայն մե՛ր չնորհիւ:

Դատարանը իսկապէս կարող է, ինձ մեղաւոր ճանաչելու դէպքում, ինձ անուանել կրկնայանցագործ, բայց կարող է եւ չճանաչել: Ցամենայն դէպս, ես ոչինչ չեմ խնդրում: Ձերբակալութիւնը ինքնին արդէն մարդու օտարացում է կեանքից, իսկ յատուկ ռեժիմը (յատուկ ռեժիմի ճամբարը)՝ առաւել եւս: Ի՞նչ կը մնայ մի մարդուց, որը (ապրած 25 տարիներից) հինգ տարի յետոյ, որոնք անց է կացրել բանտերում, պատժախցերում, սիբիրեան ճամբարներում, նորից երկար տարիներով կը մնայ բանտերում: Երկար տարիներ ես չպիտի լսեմ հայկական երաժշտութիւն, չեմ տեսնելու հայի դէմք, հայերէն խօսք չեմ լսելու...

Ես շատ եմ սիրում կեանքը, շատ աւելի, քան կարելի է պատկերացնել, բայց քանի դեռ Հայաստանը անկախ չէ եւ քանի դեռ ողջ եմ, երեւի, իմ ապաստանը բա՛նտը պիտի լինի: Ես փորձեցի, իսկական հայրենասէր մնալով, չմնալ ընդյատակում: Բայց կեանքը ուսուցանեց, որ իսկական հայրենասէրը այսօր կարող է ընտնըւել կամ ընդյատակում, կամ էլ բանտում ու աքսորում:

Եւ հիմա, երբ շատ քիչ ժամանակից յետոյ հասատատուելու է իմ արտաքսումը իմ այնքան սիրելի հայրենիքից, ես կ՝ուզենայի, դատավարութեան սկզբում արած յայտարարութեան համաձայն, երգով հրաժեշտ տալ նրան, որպէսզի լաւն ու վատը յիշեն իմ երգերով, բայց տեսնում եմ, որ անտեղի է դա...

Ես դեռ չեմ ասել իմ վերջին խօսքը, եւ անկախ նրանից, թէ ողջ կը մնամ կամ ոչ, դուք եւ ամբողջ հայ ժողովուրդը դեռ կը լսէք այն: Ցամենայն դէպս, այդ վերջին խօսքը պիտի ասուի ո՛չ

դատարանի համար: Վերադառնալով դատարանին, խղճիս վրայ մեղք չգործելու համար ասում եմ.–

Ճիշտ է, ես չեմ հաւատում դատարանին, բայց եթէ դուք խոստանայք կարող էք ու պիտի արդար լինէք, իսկապէս անաչառ, – նախապէս խնդրում եմ ներողութիւն դատարանի հասցէին արտայայտած բացասական կարծիքի համար: Հակառակ դէպքում իմացէք, որ դատարան գալով՝ ես ոչ մի յոյս չունէի, բայց մինչեւ իմ վերջին հնարաւորութիւնը ուզում էի պաշտպանել իմ ժողովրդի, իմ հայրենիքի արդար իրաւունքը:

Որքան երկար լինի իմ դատապարտման ժամկէտը, այնքան աւելի թոյլ կը լինէք դուք եւ աւելի ուժեղ՝ ես...

Կեցցէ՛ անկախ Հայաստանի սուրբ դաղափարը: Կեցցե՛ն նրա նուիրեալ մարտիկները: Փա՛ռք ազգային միացեալ կուսակցութեանը:

1974 թ. նոյեմբերի 22, ժ. 14:30 – 14:55
Երեւան, Հայկական ՍՍՀ Գերագոյն դատարան

Ժ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՀԵԼՍԻՆԿԵԱՆ ԽՈՒՄԲԸ» ԻՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Եւրոպայի անվտանգութեան ու գործակցութեան վերաբերեալ 1975 թուականին տեղի ունեցած Հելսինկեան նշանաւոր խորհրդակցութեան եզրափակիչ փաստաթղթի դրոյթների կատարմանն աջակցող ինքնուրոյն խմբեր ստեղծուել են Խորհրդային Միութեան մի շարք վայրերում (Մոսկուա, Ուկրաինա, Լիտուա, Վրաստան)։ 1977 թուի ապրիլին նման խումբ ստեղծուեց եւ Հայաստանում երեք հոգու նախաձեռնութեամբ (Էդուարդ Յարութիւնեան, Ռոբերտ Նազարեան, Սամուէլ Օսեան)։ Մինչեւ հիմա խմբի ջանքերով ահագին փաստական նիւթ է կուտակուել այն մասին, թէ Հայաստանում իշխանութիւնների կողմից ինչպէս են խախտւում մարդու հիմնական ազատութիւնները ու իրաւունքները, Հելսինկեան փաստաթղթի դրոյթներին հակառակ։ Այդ փաստաթղթային նիւթերը մոսկովեան խողովակով հասել են արտասահման։ Դա էլ իր հերթին մի առանձին բնագաւառ է՝ ինքնուրոյն հետազօտութեան արժանի։

Այս ժողովածույում տեղ է տրւում միայն Հայաստանում «Հելսինկեան խումբ» ստեղծուելու մասին պատրաստուած «Յայտարարագրին»։ «Յայտարարագիրը» եւս, միւս նոյնարժէք նիւթերի մեծ մասի նման, նախապէս հայերէնից թարգմանուել է ռուսերէն եւ միայն այդ ճանապարհով արտասահման հասել։ Այժմ, ուրեմն, փաստաթուղթը ռուսերէնից վերաթարգմանւում է հայերէնի։

1977 թ· Ապրիլի 1

ՀԵԼՍԻՆԿԵԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԴՐՈՅԹՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՒՄԲ

ՅԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Հայկական հանրապետութեան մէջ տեղի են ունենում մարդկային իրաւունքների, մարդկային արժանապատուութեան եւ հիմնական ազատութիւնների՝ մտքի, խղճի, կրօնի, համոզումների կոպիտ ոտնահարման դէպքեր:

Ջնայած այն բանին, որ ԽՍՀՄ-ը մասնակցել է ՄԱԿ-ի կանոնադրութիւնը, Մարդու իրաւունքների ընդհանուր յայտարարագիրը եւ Մարդու իրաւունքների միջազգային պայմանագրերն ըստ եղծելուն եւ ընդունել դրանք, չեն դադարում այլախոհների ու հաւատացեալների հալածանքներն ու հետապնդումները:

Հենց միայն 1973-74 թուականներին, Հայկական հանրապետութեան մայրաքաղաք Երեւանում անց են կացուել իննը քաղաքական դատավարութիւններ, որոնց ընթացքում 18 այլախոհ հայեր դատապարտուել են ազատազրկման՝ 6 ամսից մինչեւ 10 տարի ժամկէտով:

Խորհրդային Միութեան կողմից Մարդու իրաւունքների միջազգային պայմանագրերի եւ Եւրոպայի անվտանգութեան ու դրծակցութեան հարցերի գծով Հելսինկեան խորհրդակցութեան եզրափակիչ փաստաթղթի դրոյթների ընդունումը՝ նրա վրայ դնում է, ըստ միջազգային իրաւունքի, իրրեւ իրաւաբանական պարտաւորութիւն՝ անչեղօրէն հետեւել Մարդու իրաւունքների ընդհանուր յայտարարագրին:

Բայց քանի որ ԽՍՀՄ-ում, եւ մասնաւորապէս Հայկական հանրապետութեան մէջ, խախտւում են ընդունուած միջազգային պարտաւորութիւնները, յատկապէս հիմնական ազատութիւնների ու քաղաքացիական իրաւունքների հարցում, քաղաքացիական ի-

րաւունքների համար դոյացած չարժումը հրատապ է մնալու այնքան ժամանակ, քանի դեռ չեն վերացուել այն յարուցող պատճառները:

Ընդունելով քաղաքացիական իրաւունքների ու հիմնական ազատութիւնների համընդհանուր նշանակութիւնը, որոնց յարգումը հանդիսանում է խաղաղութեան էական դրծօն, արդարութեան ու բարօրութեան էական դրծօն, որոնք անհրաժեշտ են բարեկամական յարաբերութիւնների զարգացումն ու գործակցութիւնը բոլոր պետութիւնների միջեւ ապահովելու համար,

Գիտակցելով տնտեսութեան, մշակոյթի ու գիտական յառաջադիմութեան եւ ժողովրդի ապրուստի մակարդակի վրայ ԽՍՀՄ-ում ու մասնաւորապէս Հայկական հանրապետութեան մէջ քաղաքական ու քաղաքացիական իրաւունքների եւ հիմնական ազատութիւնների խախտումների թողած բացասական ներգործութիւնը,

Ուշադրութեան առնելով նաեւ հայ ժողովրդի կենսական չահերը, նկատի ունենալով Հայկական ԽՍՀ Սահմանադրութեան 11 յօդուածով երաշխաւորուած ու քաղաքացիներին տրուած իրաւունքը, ինչպէս եւ ՄԱԿ-ի Կանոնադրութեան, Մարդու իրաւունքների ընդհանուր յայտարարագրի, Մարդու իրաւունքների միջազգային պայմանագրերի եւ Հելսինկեան խորհրդակցութեան Եղրափակիչ փաստաթղթի դրոյթները,

Առաջնորդուելով ազատութեան ու արդարութեան սկզբունքներով, հաստատելով մեր հաւատարմութիւնը խաղաղութեան ու դեմոկրատիայի գաղափարներին, համոզուած լինելով ճեռնարկուող քայլի իրագործութեան մէջ, գիտակցելով մարդու իրաւունքների եւ ժողովրդի հիմնական չահերի պաշտպանութեան անհրաժեշտութիւնը,

Յոհունակութեամբ նշելով ԽՍՀՄ-ում քաղաքացիական իրաւունքների պաշտպանութեան գծով գոյութիւն ունեցող կազմակերպութիւնների արդիւնաւէտ գործունէութիւնը, ինչպէս եւ այն հակայական հետաքրքրութիւնը, որը դրսեւորում է մեզ մօտ ու ամբողջ աշխարհում ԽՍՀՄ-ում մարդու իրաւունքների պաշտպանութեան գծով կատարուող գործունէութեան հանդէպ:

Ա ռ ա ջ ն ո ր դ ո ւ թ յ ա մ բ հաւատով, խղճով, համոզումներով ու քաղաքացիական պարտքի զգացումով, մենք ստանձնում ենք Հայկական հանրապետութեան մէջ Հելսինկեան համաձայնութեան Եղրափակիչ փաստաթղթի դրոյթների կատարմանը հսկող ու աջակցող Հասարակական խումբ ստեղծելու նախաձեռնութիւնը, որը իր առջեւ հետեւեալ նպատակներն է դնում.

1) Պաշտպանել քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային եւ այլ իրաւունքներն ու ազատութիւնները, որոնք վխտում են մարդկային անձին յատուկ արժանապատուութիւնից եւ էական հանդիսանում՝ նրա ազատ ու լրիւ զարգացման համար:

2) Պաշտպանել մարդու ազատութեան իրաւունքը՝ որոնելու, ստանալու եւ տարածելու տեղեկատուութիւն ու գաղափարներ, անկախ պետական սահմաններից ու պաշտօնական գաղափարախոսութիւնից:

3) Պաշտպանել մարդու կրօնական համոզումներ ունենալու եւ դրանք ազատօրէն քարոզելու իրաւունքը:

4) Պայքարել քաղաքական բանտարկեալներին ազատելու համար եւ նուէրներ հաւաքել նրանց ընտանիքներին նիւթական օգնութիւն հասցնելու նպատակով:

5) Պաշտպանել Հայկական ԽՍՀ Սահմանադրութեան 102 եւ 103 յօդուածներով երաշխաւորուած՝ անձի ու բնակարանի եւ թղթակցութեան գաղտնիքի անձեռնմխելիութեան իրաւունքը:

6) Պաշտպանել չփումների, ընտանիքների միաւորման եւ առհասարակ ազատօրէն արտասահման գնալու եւ ազատօրէն երկիր մտնելու ազատութեան իրաւունքը, ինչպէս եւ բնակութեան վայրը ազատօրէն ընտրելու իրաւունքը, բայց միաժամանակ աջակցել ու քաջալերել հայերին Հայկական հանրապետութեան սահմաններում կենտրոնացնելու գծով կատարուող գործունէութիւնը:

7) Հարց բարձրացնել Հայկական հանրապետութիւնը ՄԱԿ-ի անդամ ընդունելու մասին, ամբողջ աշխարհում ցրուած հայերի համազգային խնդիրները լուծելու նպատակով:

8) Բարձրացնել այժմ Ադրբեջանական ԽՍՀ-ի մէջ մոռուած Լեռնային Ղարաբաղը եւ Նախիջեւանի ԻԽՍՀ-ը Հայկական Հանրապետութեանը վերամիաւորելու հարցը, քաղաքացիական ու քաղաքական իրաւունքների միջազգային պայմանագրի Առաջին մասի յօդուած 1ի եւ Հելսինկեան խորհրդակցութեան Եզրափակիչ Փաստաթղթի Յայտարարագրի 8րդ կէտի համաձայն:

9) Պահանջել, որպէսզի ամբողջ դործաւարութիւնը պետական, տնտեսական ու մշակութային ապարատում անչեզօրէն կատարուի հայոց լեզուով, Հայկական ԽՍՀ Սահմանադրութեան յօդուած 119ի համաձայն:

10) Ուսումնասիրել Հայկական ԽՍՀ-ի Սահմանադրութիւնն ու օրէնսդրութիւնը կատարելադործելու հարցերը, դրանք քաղաքացիական իրաւունքների ու հիմնական ազատութիւնների ոդուն ու տառին համապատասխանեցնելու նպատակով, Հելսինկեան համաձայնութեան Եզրափակիչ Փաստաթղթի Յայտարարագրի 10րդ կէտի համաձայն:

11) Գրաքննութեան վերացումը նրա բոլոր ձեւերով, ռայմականից բացի:

12) Հաւաքել, ուսումնասիրել ու տարածել նիւթեր՝ Հելսինկեան խորհրդակցութեան Եզրափակիչ Փաստաթղթի դրոյթները յարդելու կամ խախտելու վերաբերեալ:

13) Խորհրդատուական օդնութիւն ցոյց տալ քաղաքացիներին՝ նրանց մարդկային իրաւունքները ոտնահարուելու դէպքում:

Հելսինկեան խորհրդակցութեան Եզրափակիչ Փաստաթղթի դրոյթների կատարմանն աջակցող Հայկական խումբը չի հետապընդում ոչ մի քաղաքական կամ կրօնական նպատակ, հանդիսանալով հասարակական, մարդասիրական կազմակերպութիւն, օրինապահ՝ խորհրդային օրէնքների նկատմամբ:

Հայկական հանրապետութեան ուզած քաղաքացի, որի սրտին մօտ են մեր խմբի սկզբունքներն ու նպատակները, իր ուժերի ու հնարաւորութիւնների չափով կարող է օժանդակել խմբին՝ իր անձնական մասնակցութեամբ, կամ հաստատելով խմբի անդամների հետ:

Սոյն հաղորդումը արուած է Հելսինկիում ընդունուած Եղրափակիչ փաստաթղթի սկզբունքների ու դրոյթների համապատասխան, եւրոպական 29 կոմունիստական, բանուորական, յառաջադիմական կուսակցութիւնների հանրադումարային փաստաթղթի ոգուն ու տառին, Մարդու իրաւունքների ընդհանուր յայտարարագրի ըմբռնումների համապատասխան եւ ԽՍՀՄ սահմանադրական չափանիշների հիման վրայ:

1) Խմբի ղեկավար· ԷԴՈՒԱՐԴ ԲԱԳՐԱՏԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
Հասցէ·– 375014, Երեւան–14, Ներսէսեան փողոց, տ· 1, բն· 5
2) Սարկաւագ ՌՈՒԲԵՐՏ ԽԱՉԻԿԻ ՆԱԶԱՐԵԱՆ, խմբի գանձապահ
Հասցէ·– 375051, Երեւան–51, Արաբկիր, փող· 17, տ· 9
3) ՍԱՄՈՒԷԼ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՕՍԵԱՆ
Հասցէ·– 375012, Երեւան–12, Վատուտինի փողոց, տ· 113

ԺԱ.

ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԲՐԵԺՆԵՒԻՆ

Հայաստանեան անուանի արձակագիր Սերօ Խանզադեանի Բրեժնեւին յղած նամակը Բէյրութի «ԱԶԴԱԿ» թերթի 1977 թ· հոկտեմբերի 17ի համարում հրապարակելով՝ թերթի խմբագրութիւնը հաղորդում է, թէ նամակը նախապէս տպուել է նոյն ֆաղաֆում լոյս տեսնող մի այլ՝ «ԶԱՐԹՕՆՔ» թերթում, յարակից «Մեկնութիւններ»ով: Նամակը միաժամանակ տպուեց Փարիզի «ՅԱՌԱՋ»ում (1977 թ· հոկտեմբերի 19ին), Ամ֊Նի «ՊԱՅՔԱՐ»ում (1977 թ· հոկտեմբերի 27ին ու 28ին), Աբէնթի «ԱԶԱՏ ՕՐ», Թեհրանի «ԱԼԻՔ» եւ այլ թերթերում, արձագանգ գտնելով նաեւ ամերիկեան մամուլում:

Խանզադեանի նամակի անմիջական առիթը Պրագայում աշխարհի բազմաթիւ լեզուներով լոյս տեսնող «ՊՐՈԲԼԵՄԻ ՄԻՐԱ Ի ՍՈՑԻԱԼԻԶՄԱ» («Խաղաղութեան եւ սոցիալիզմի խնդիրներ») ամսագրի 1977 թ· յունիսեան (6րդ) համարում տպուած «Մեծ տեսաւիֆ ազգերի եղբայրութիւնը» յօդուածն է: Այդ 11 մեծադիր էջանոց յօդուածի հեղինակները՝ հնդիկ Սարադա Միտրան եւ իրաֆցի Ադել Խաբան յատուկ յանձնարարութեամբ ու հրաւէրով գտնուել են Լեռնային Ղարաբաղում եւ յօդուածում իրենց խօսակցութիւնները ու նաեւ «տպաւորութիւնները» են շարադրում, ակընյայտօրէն ադրբէջանական հակահայ «փաստարկումները» իւրացնելով: Խանզադեանը ըստ էութեան պնդում է, որ օտար լրա֊

գրողներին Ադրբեջանում ուղղակի մոլորեցրել են եւ սխալ տեղեկութիւններ հրամցրել: Պահանջում է հարցի լուրջ ճնշուբիւն եւ արդար լուծում:

Նամակի հետ միասին յատուկ կարեւորութիւն ունի եւ «Մեկնութիւններ Սերօ Խանզադեանի նամակի առիթով» փաստաթուղթը, իր պատմական ու այժմէական տուեալներով, մանաւանդ այժմէական: Ուստի եւ այստեղ, նամակից բացի, տեղ է տրւում նաեւ հրապարակուած «Մեկնութիւններ»ին, իբրեւ յարակից փաստաթուղթ:

ՍՄԿԿ ԿԿ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿ. Լ. Ի. ԲՐԵԺՆԵՒԻՆ

ԹԱՆԿԱԳԻՆ ԼԷՕՆԻԴ ԻԼՅԻՉ.

Լեռնային Ղարաբաղի կուսակցական մարզկոմի մարտեան պլենումում (1975 թ.) ամէն ինչ արուեց, որպէսզի ցեխին հասասարեցուեն սոցիալիստական Հայաստանի յաջողութիւնները ու նուաճումները: Բանը հասաւ այնպիսի արբապղծութեան, որ երիտասարդ Սովետական Ռուսաստանի կատաղի թշնամուն, միլիոնաւոր հայերի, ռուսերի, յոյների, բուլղարների, ասորիների ոչընչացնողին՝ Թալէաթ փաշային մեր սովետական մամուլում («Սովետական Ղարաբաղ», 23 Մարտի 1975 թ.) անուանեցին ընդամէնը «տհաճ անձնաւորութիւն»: Այդպիսի դնահատական տրուեց բազմաթիւ ժողովուրդների թշնամուն, օսմանեան կայսրութիւնում հայերի ցեղասպանութեան կազմակերպողին ու ոգեւորողին:

Այդ նոյն ժամանակ վրդովուած, իրենց մարդկային ու ազգային զգացմունքները վիրաւորուած Սովետական Հայաստանի բազմաթիւ ներկայացուցիչներ դիմեցին անձամբ Ձեզ եւ այլ հին-

տանցիաները, յամառօրէն խնդրելով դատապարտել Լեռնային Ղարաբաղի աւտոնոմ մարզի ղեկավարութեան գործողութիւնները ու պատժել մեղաւորին: Ու ինչպէս յայտնի դարձաւ մեզ, ՍՄԿԿ կենտկոմը ցուցում էր տուել աւտոնոմ մարզի կուսակցական կազմակերպութեան թոյլ տուած սխալների համար:

Կրքերը մեղմացան յատկապէս այն բանից յետոյ, երբ Հայաստանի ԿԿ կենտրոնական կոմիտէն բացատրական աշխատանք տարաւ կուսակցական սկզբնական կազմակերպութիւններում, դրանով իսկ կանխելով ամէն տիպի միջադէպերը:

Անձամբ ինքս պլենումից յետոյ հանդիպում եմ ունեցել Ադրբեջանական ՍՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարութեան հետ, իմ առաքելութեան գլխաւոր նպատակը համարելով կանխել ամէն տիպի անցանկալի ռէակցիաները, որ հնարաւոր էր այդ ծայրայեղ չիկացած մթնոլորտում: Եւ մենք բոլորս համոզուած էինք, որ Լեռնային Ղարաբաղում եւ Լեռնային Ղարաբաղի մասին այլեւս նման բան չի կրկնուի:

Սակայն, որքան մեծ եղաւ համընդհանուր զարմանքը, երբ նորից, այսօր «Խաղաղութեան եւ սոցիալիզմի պրոբլեմները»՝ աշխարհիս ամենամասսայական ամսագրում (համար 6, 1977 թ.), – որը համարւում է մոլորակի կոմունիստական եւ բանուորական կուսակցութիւնների տեսական ու ինֆորմացիոն հրատարակութիւնը, լոյս է տեսնում 32 լեզուներով եւ տարածւում է աշխարհիս 145 երկրներում, – խօսուեց Ղարաբաղի տեղի մասին եւ կըրկին մարզի ղեկավարութեան անունից վիրաւորանքներ թափուեցին Սովետական Հայաստանի հասցէին: Միանդամայն բնական հարցին՝ «Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղը դտնւում է Ադրբեջանի կազմի մէջ եւ ոչ թէ Սովետական Հայաստանի, որից այն բաժանուած է միայն հողի նեղ շերտով», պատասխանում են, որ թէեւ հայկական աւտոնոմ մարզը մօտիկ է հայկական միութենական Հանրապետութեանը, սակայն նրանք, իբր, բաժանուած են բարձր սարերով: Նման, թոյլ տուէք ասել, փաստարկը, ոչ միայն անհեթեթ է տեխնիկայի մեր դարում, այլեւ անճիշտ:

Դարերի ընթացքում երբեք Ղարաբաղի հայկական պատմական մարզը մայր Հայաստանից բաժանուած չի եղել ինչ որ սա-

բերով: Կովկասում սարերն ամէն տեղ կան: Բայց դա չի կարեւորը: Այն հարցին, թէ արդեօ՞ք բոլորն են գիտակցաբար ընդունել այն փաստը, որ պատմական հայկական մարզը կտրուած է մայր Հայաստանից եւ մտցուած նոր դոյացող Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմի մէջ, պատասխանում են հետեւեալ կերպ. «Եղան մարդիկ, որոնք յայտարարեցին՝ թող ես վատ ապրեմ, բայց կապուած լինեմ Հայաստանի հետ»:

Ի՛նչ կայ որ, եթէ այդ արտայայտութեան մէջ «Հայաստան» բառը փոխարինենք «Հայրենիք» բառով, ապա, կարծում եմ, որ դա կ'ասէր իւրաքանչիւր հպարտութիւն ունեցող մարդ. ամէն մի ռուս, չեխ, սլովակ, Ֆրանսիացի, ամէն մարդ, որ սիրում է իր հայրենիքը: Ամէն մարդ հպարտութեամբ կարող է յայտարարել, որ նա իր հայրենիքը չի ընտրել եւ որ նա համաձայն է ամէն բանի, միայն թէ կապուած լինի իր հայրենիքին: Սակայն նման մարդկանց Լեռնային Ղարաբաղի աւտոնոմ մարզի ղեկավարութիւնը համարում է «յետամնացներ» ու «անհասկացողներ»: Բայց դա էլ դեռ ոչինչ: Վերջին հաշուով ամէն մարդ իւրովի է հասկանում եւ ըմբռնում հայրենիքի հանդէպ ունեցած սէրը: Չէ՞ որ այն արտայայտութիւնը, թէ «Թող ես վատ ապրեմ, բայց կապուած լինեմ Հայաստանի հետ»՝ վերաբերում է Սովետական Հայաստանին: Դուրս է գալիս, որ հայի համար լաւ է Ադրբեջանում եւ վատ կը լինի Սովետական Հայաստանում: Եւ դա աստւում է այն բանից յետոյ, երբ դուք, թանկագին Լէոնիդ Իլյիչ, նշելով Սովետական Հայաստանի իսկապէս ծաղկումն ու վերածնունդը, ասացիք. «Սովետական Հայաստանի ժողովուրդը, կոմունիստներն ու անկուսակցականները, բանուորներն ու գիւղացիները եւ ինտելիգենցիան հրաշալի ղուգակցում են պատրիոտիզմի ոգին սովետական մարդուն իւրայատուկ մեկ այլ, ոչ պակաս արժէքաւոր յատկութեան՝ ինտերնացիոնալիզմի հետ»:

Ես խորապէս համոզուած եմ, որ «Խաղաղութեան եւ սոցիալիզմի պրոբլեմները» ամսագրի խմբագրական կոլեգիային, որի մէջ մտնում են 53 երկրների կոմունիստական ու բանուորական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ, մոլորութեան մէջ են դրել, ինչպէս մոլորութեան մէջ են դրել նաեւ «Մենք տեսանք ազ-

պերի եղբայրութիւնը» հրապարակուած յօդուածի յարգելի հեղինակներին: Մի բան է միայն անհասկանալի. ո՞ւմ է ձեռնտու այդպէս բացէ ի բաց պրոպագանդել մեր երկրին եւ մեր հասարակարգին խորթ պանիսլամական դաղափարները: Անհասկանալի է, թէ ինչպէ՛ս կարել է սովետական իշխանութեան 60ամեակի տօնակատարութեան նախօրէին ի լուր ամբողջ աշխարհի ասել. «Թող ես վատ ապրեմ, բայց կապուած լինեմ Սովետական Հայաստանի հետ»: Մի՞թէ հարցի այդպիսի դրումը համապատասխանում է յարգելի ամսագրում հրապարակուած «Մենք տեսանք աղղերի եղբայրութիւնը» յօդուածի վերնագրին:

Ինչպէ՞ս կարելի է այն օրերին, երբ քննարկւում է ՍՍՀՄ-ի նոր Սահմանադրութեան նախագիծը, դրել եւ 32 լեզուներով ու աշխարհի 145 երկրներում տարածել, թէ «Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը պետականութիւն է ձեռք բերել Ադրբեջանում ու այդ բախտը ընդունել է կամովին»: Դա պատմական փաստերի կոպիտ աղաւաղում է եւ կրկնակի աղաւաղում:

Նախ չի կարելի ասել, առաւել եւս մարքսիստական ամսագրում, «Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդ»: Գոյութիւն ունի Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութիւն, որտեղ դեռեւս 280 տարի առաջ, առաջին անգամ սկիզբ դրուեց հայերի ռուսական օրիէնտացիային: «Հայ ժողովուրդ» հասկացողութիւնը միասնական է, ամբողջական, ինչպէս ռուս ժողովուրդը, ինչպէս ուկրաինական ժողովուրդը:

Երկրորդն էլ, Լեռնային Ղարաբաղի հայկական բնակչութիւնը երբեք կամովին չի ընդունել այսօրուայ «բախտը», համաձայն որի իրականում կտրուած է հայրենիքից: Ու նման «բախտը» ինքնին անարդարացիութիւն է, որը պէտք է վերվերացուի, որովհետեւ, ինչպէս մեծ Լենինն է ասել.

«Ոչինչ այնպէս չի խաթարում պրոլետարական դասակարգային համերաշխութեան գործադրմանն ու ամրապնդմանը, ինչպէս ազգային անարդարութիւնը»:

Թանկագին Լէոնիդ Իլյիչ, սա առաջին անգամը չէ, որ Ղարաբաղի չլուծուած պրոբլեմը խանգարում է երկու ժողովուրդների միջեւ գոյութիւն ունեցող բարեկամութեանը: Ամբողջ յոյսը

Ձեզ վրայ է, որ Դուք կը վճռէք, վերջապէս, մի հարց, որը աւելի քան կէս դար է մարմնաւորում է անարդարութիւնը:

Մեր միասնական հզօր Պետութեան սահմաններում գտնուող գուտ հայկական մարզը աւելի քան ութսուն տոկոս հայկական բնակչութեամբ, հայկական գալրոցներով, պետական հայերէն լեզուով, պէտք է գտնուի Սովետական Սոցիալիստական Հայաստանի կազմում:

Այս հարցի արդարացի լուծումը ժողովուրդների կողմից կը գնահատուի որպէս Լենինեան ազգային քաղաքականութեան նոր յաղթանակ:

Անկեղծ յարգանքներով՝

ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆ

ՍՍՀՄ Գրողների Միութեան վարչութեան անդամ
ՍՄԿԿ անդամ 1943 թ., գրող,

ՅԱՐԱԿԻՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆԻ ՆԱՄԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Հայ նշանաւոր գրող, «ՄԽԻԹԱՐ ՍՊԱՐԱՊԵՏ» հանրածանօթ վէպի հեղինակ Սերօ Խանզադեանը նամակով դիմել է Սովետական Միութեան Կոմունիստական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի դլխաւոր քարտուղար Լ. Բրեժնեւին «ՊՐՈԲԼԵՄԻ ՄԻՐԱ Ի ՍՈՑԻԱԼԻԶՄԱ» ամսագրում Սովետական Հայաստանի եւ նրա հինաւուրց մարզի՝ Լեռնային Ղարաբաղի հասցէին ուղղուած պրովոկացիոն յօդուածի կապակցութեամբ: Գրողը նամակ է ուղար-

կել նաեւ սոյն յօդուածի հեղինակներին՝ հնդիկ կոմունիստ Սարդաղա Միտրային եւ իրաքցի կոմունիստ Ադել Նաբային:

Սերօ Խանզադեանը կատարուածը համարում է թիւրիմացութիւն եւ ենթադրում է, որ, ինչպէս յօդուածի հեղինակներին, այնպէս էլ յարգելի ամսագրին մոլորութեան մէջ են դրել: Կարելի է համաձայնուել դրողի, 1943 թուականից ՍՄԿԿ անդամի այդ ազնիւ կարծիքի հետ: Բայց մի բան մնում է զարմանալի՝ ինչո՞ւ նա ոչ մի տեղ չի յիշատակում, թէ ով է մեղաւոր այդ չփոթութեան համար, կոնկրետ ով է մոլորութեան մէջ դրել յարգելի հեղինակներին եւ «ՊՐՈԲԼԵՄԻ ՄԻՐԱ. Ի ՍՈՑԻԱԼԻԶՄԱ» ամսագրի խմբագրական կոլեգիայի յարգելի անդամներին:

Սակայն, նախ եկէք մի ոչ մեծ պատմական էքսկուրս կատարենք: Այսօրուայ սոցիալիստական Հայաստանի տերիտորիայում Սովետական իշխանութիւնը հաստատուեց 1920 թ. նոյեմբերի 29ին:

1920 թ. դեկտեմբերի 1ին Բաքուի սովետի հանդիսաւոր նիստում հրապարակուեց մի դեկլարացիա, որի տեքստը տպագրուեց «ԿՈՄՈՒՆԻՍՏ» թերթի 1920 թ. դեկտեմբերի 7ի համարում. «Բոլորին, բոլորին, բոլորին... Այսօրուանից լիկվիդացուում են ամէն տիպի սահմանային վէճերը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջեւանը համարւում են Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան մի մասը:

Կեցցէ՛ Հայկական եւ Ադրբեջանական սովետական սոցիալիստական հանրապետութիւնների եղբայրութիւնն ու միութիւնը: Ցեղկոմի նախագահ՝ Նարիմանով, Արտաքին գործոց ժողկոմ՝ Հիւսէյնով»:

Այդ նոյն նիստում Մոսկուայի ներկայացուցիչը՝ Լենինի հաւատարիմ ղինակից Սերգօ Օրջոնիկիձէն դեկլարացիայի մասին ասաց. «Սա մի պատմական գործողութիւն է, որն իր հաւասարը չունի մարդկութեան պատմութեան մէջ»: Դեկտեմբերի 2ին Օրջոնիկիձէն հեռագրեց Լենինին. «Երէկ Ադրբեջանը արդէն յայտարարեց Նախիջեւանը, Զանգեզուրը եւ Լեռնային Ղարաբաղը Սովետական Հայաստանին յանձնելու մասին»: Իսկ դեկտեմբերի

12ին Լենինը Մոսկուայի եւ Տէր–Գաբրիէլեանի հետ զրուցելիս դոհունակութեամբ նշեց Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ տերիտորիալ վէճերի բարեյաջող լուծման մասին: Սակայն այդ սկզբունքային հարցում, ինչպէս կեանքն է ցոյց տալիս, բոլշեւիկները հետեւողական չդտնուեցին: Մինչեւ հիմա էլ Նախիջեւանը եւ Լեռնային Ղարաբաղը դտնւում են Ադրբեջանի կազմում, իսկ Սովետական Հայաստանին տրամադրուեց մի փոքրիկ տարածութիւն (ամենափոքր տարածութիւնը մուսուլմանական հանրապետութիւնների շարքում) լեռնային, քարքարոտ, դիւղատնտեսութեան համար ոչ պիտանի մի հողատարածութիւն: Այսպիսով, ինչպէս պատմութիւնն է վկայում, եւ՛ Նախիջեւանը, եւ՛ Ղարաբաղը Ադրբեջանի ղեկավարութեան կողմից յայտարարուեցին հայկական մարզեր, որովհետեւ նրանք իրենք ընդունեցին անվիճելի փաստը՝ այդ հողերի վրայ դարերից ի վեր հայ բնակչութեան դոյութիւնը:

Ինչպիսի՞ պատկեր է այսօր: Նախիջեւանի աւտոնոմ մարզում դրեթէ հայեր չկան: Այնտեղ կէս հարիւրամեակի ընթացքում հայերի համար ստեղծուել են այնպիսի պայմաններ, որ նրանք ստիպուած են եղել հեռանալ հարազատ վայրերից: Նման նախադէպը իրականում աննկատելի է մնացել աշխարհին: Չնայած ՄԱԿ–ի Գլխաւոր Ասամբլէայի ընդունած կոնվենցիայում «Գենոցիդի կանխման եւ դրա իրագործումը պատժելու մասին» ասւում է, որ «Գենոցիդը ոչ միայն որեւէ ազգի կամ նրա մի մասի ֆիզիկական բնաջնջումն է, այլեւ այնպիսի անտանելի պայմանների ստեղծումը, որոնց դէպքում բնակչութեան արմատական մասը ստիպուած է լինում լքել հարազատ վայրերը»: Յիշեցնենք, որ 1954 թուականի մարտի 18ին ՍՍՀՄ Գերագոյն Սովետի նախագահութիւնը վաւերացրեց ՄԱԿ–ի կոնվենցիան եւ օրէնք ընդունեց «ընդդէմ խաղաղութեան եւ մարդկութեան դործող յանցագործներին պատժելու մասին...»:

Յանկալի է իմանալ, հիմնուելո՛վ այդ օրէնքի վրայ, ի՞նչ միջոցներ են նախաձեռնուել այն անձանց դէմ, ովքեր իրականում գենոցիդ են կատարել Նախիջեւանում: Աւելի՛ն. ընդդէմ մարդկութեան իրենց յանցագործութիւնները թաքցնելու նպատակով

Նախիջեւանում սիստեմատիկաբար ոչնչացնում են հայկական կուլտուրայի բոլոր յուշարձանները, իսկ դերեզմանաքարերը օգտագործում են նոր տների շինարարութեան վրայ:

Սովետական Ադրբեջանում վաղուց արդէն գոնում են, որ Նախիջեւանի հարցը լուծուած է: Այնտեղ, երեւում է, կարծում են, որ եթէ գենոցիդի մեթոդով նրանք աղատուեցին անդրենածին հայերից, ապա նոյն մեթոդը կարելի է գործադրել նաեւ Ղարաբաղում: Ու այդպէս էլ կատարւում է: Ահա միայն մէկ օրինակ, թէ Սովետական Ղարաբաղում կուսակցութեան մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կեւորկովը ինչպէս է աղատում ինտելիգենցիայից: Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանում կոմերիտմիութեան շրջկոմի քարտուղար էր աշխատում պատմաբան Եաչա Բաբալեանը: Երբ պարզուեց, որ նա ընդունակ լրագրող է, նրան դարձրին «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՂԱՐԱԲԱՂ» թերթի Հադրութի շրջանի սեփական թղթակից: Ու մի անգամ Եաչա Բաբալեանը ընկերների շրջանում, ինչպէս մարզային պլենումում կարդացած իր զեկուցման մէջ նշեց Բ. Կեւորկովը («Սովետական Ղարաբաղ», 23 մարտի, 1975 թուական), բանաստեղծութիւն է կարդում, որի մէջ կոմունիստ բանաստեղծ, Լենինեան կոմերիտմիութեան դափնեկիր Արամայիս Սահակեանը դրում է, թէ մենք արդէն տեսանք լուսնի միւս երեսը, Հապա Արարատի միւս երե՞սը երբ կը տեսնենք: Ու միմիայն դրա համար Եաչա Բաբալեանը հեռացւում է աշխատանքից: Իսկ Հադրութի կուսակցութեան շրջկոմի բիւրոյում նրա առաջ պայման է դրւում. «Կամ կը հեռանաս մարզից, կամ քեզ կը վտարենք կոմունիստական կուսակցութիւնից եւ դու կը մեռնես քաղցից»: Եաչա Բաբալեանը երկու երեխայ ունէր: Նա հեռացաւ մարզից:

Լեռնային Ղարաբաղի յիշեալ պլենումում, ինչպէս երեւում է, «Սովետական Ղարաբաղ» թերթից, հայ ինտելիգենցիայի իսկական ջարդ էր կազմակերպուած միայն այն բանի համար, որ նա մի քանի տարի առաջ հանրաքուէ է անցկացրել մարզում, որից պարզուել է, թէ Լեռնային Ղարաբաղի ամբողջ հասուն հասարակութիւնը երազում է միայն Հայկական մարզը միացուած տեսնել Հայկական միութենական հանրապետութեանը:

Դժուար է պատկերացնել, որ մի երկրի սահմաններում, որտեղ ղեկավարող եւ ուղղութիւն տուող ուժը կոմունիստական կուսակցութիւնն է, կարող են նման յանցագործութիւններ կատարուել մի փոքրիկ ժողովրդի նկատմամբ, որն անցեալում անպատմելի ողբերդութիւն է ապրել: Դժուար է պատկերացնել յատկապէս այն պատճառով, որ այդ պետութեան ու կուսակցութեան ղեկավարն է ամբողջ աշխարհում յարդուած, իր հումանիզմով յայտնի առաջնորդ Լէոնիդ Բրեժնեւը:

Դժուար է հաւատալ, սակայն, դժբախտաբար, փաստերն այլ բան են ասում: Ու երբ կարդում ես մի այնպիսի փաստաթուղթ, ինչպիսին վերոյիշեալ Եաչա Բաբալեանի աշխատանքային դրքոյկի էջն է, ապա ստիպուած ես լինում աւելի վատին հաւատալ: Ահա թէ ինչ է գրուած հայ լրագրողի աշխատանքային դրքոյկում.

«Հրապարակայնօրէն նացիոնալիստական բովանդակութեամբ ոտանաւորներ ընթերցելու եւ տարածելու համար, «Սովետական Ղարաբաղ» թերթի սեփական թղթակից Եաչա Բաբալեանին այսօրուանից աղատել աշխատանքից: Ա. Սրդումանեան: Հրաման համար 37, 3 մարտի, 1975 թուական»:

Արդեօք տեղեա՞կ են այս փաստաթղթին Սովետական Միութեան ղեկավարները, որոնք իսկական փարոս են հանդիսանում աշխարհի բազմաթիւ երկրների համար: Նրանց նոյնիսկ չեն տեղեկացրել, թէ ինչ է կատարուում Նախիջեւանում, եւ դեռ այսօր էլ չարունակուում է կատարուել Լեռնային Ղարաբաղում: Հակառակ դէպքում նման յօդուած չէր տպագրուի «ՊՐՈԲԼԵՄԻ ՄԻՐԱ Ի ՍՈՑԻԱԼԻԶՄԱ» ամսագրում, որի մասին անկեղծօրէն գրում է Սերօ Խանզադեանը:

Ուզում ենք յուսալ, որ Սովետական Միութեան լիդերները կը կանխեն Նախիջեւանեան ողբերդութեան կրկնութիւնը Լեռնային Ղարաբաղի Հայկական ազգային մարզում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներածութիւն 5

Ա. Պատմաբան Նիկողոս Կարապետեանի յօդուածը լեհական «ԿԻԵՐՈՒԿԻ» շաբաթաթերթում 17

Բ. Արցախի 2500 հայերի բողոքագիր դիմումը Խրուշչովին 26

Գ. Սիլւա Կապուտիկեանի ելոյթը Երեւանում՝ կուսակցութեան շրջանային հաւաքոյթներից մէկում . . . 35

Դ. Ե. Հ. Յովհաննիսեանի նամակը խորհրդային կոմկուսակցութեան կենտրոնական կոմիտէին 47

Ե. Անանուն պատմաբանի վերլուծական խօսքը 1917–1921 թուականների պատմաշրջանի մասին 57

Զ. Արցախի հայութեան կոչը Հայաստանի ժողովրդին եւ ղեկավարութեանը 91

Է. Բենիկ Մովսիսեանի նամակը բանտից՝ իր հայրենակից Միխայէլ Սողոմոնեանին 97

Ը. Արցախի հայութեան կացութիւնը պարզող մի նամակ-փաստաթուղթ 104

Թ. Պարոյր Հայրիկեանի «վերջին խօսքը» դատարանում . 111

Ժ. Հայաստանի «Հելսինկեան խումբը» իր վկայութիւններով 122

ԺԱ. Սերօ Խանզադեանի նամակը Բրեժնեւին 128

Finito di stampare
nel mese di settembre 1978
in T.L.A. - Venezia

